Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
Վահրամ ՀՈՎՅԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Երևան
2012

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Հ 240

Գիտական խմբագիր՝
Ռուբեն Մելքոնյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հ 240 Հայ կաթողիկե և ավետարանական համայնքները Թուրքիայում. ժամանակակից միտումներ - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2012. - 160 էջ:

Աշխատությունում լուսաբանվում են Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքների ծագումը, պատմական զարգացման ընթացքը և արդի գործընթացները: Փորձ է արվել վերհանել Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքների ներուժը՝ մարդկային, կազմակերպչական և այլ տեսանկյուններից: Անդրադարձ է կատարվել այդ համայնքների նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությանը, կրոնական հանդուրժողականության խնդրին:

Գիրքը նախատեսված է վերլուծական հանրության և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2012
© «Նորավանք» ԳԿՀ, 2012

ISBN 978-9939-825-18-2

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Հեղինակներ՝
Արեստակես Սիմավորյան
«Նորավանք» ԳԿՀ
Հայագիտական կենտրոնի ղեկավար

Վահրամ Հովյան
«Նորավանք» ԳԿՀ
Հայագիտական կենտրոնի փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ
(*Արեստակես Միմավորյան*)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(պատմական ակնարկ) 12
Հայոց Մեծ եղեռնը և հայ կաթոլիկները 19

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 29
Կաթոլիկ համայնքները և թվաքանակը 32
Կրոնական անհանդուրժողականությունը 38
Ստամբուլի հայ կաթողիկե համայնքը 45
Ստամբուլի հայ կաթողիկե համայնքի դպրոցները 51
Անկարայի հայ կաթողիկե համայնքը 59

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 66

ՀԱՎԵԼՎԱԾ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ
ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ 69

ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ
(*Վահրամ Հովյան*)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 72

Հայոց մեջ ավետարանականության առաջացման
ու տարածման նախադրյալները 72
Հայ ավետարանական համայնքը
ցեղասպանության տարիներին 92
Ջարդերի և կոտորածների ազդեցությունը
հայ ավետարանական համայնքի վրա 93
Հայ ավետարանականներն ազգային գոյապայքարում 96

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 98
Հայ ավետարանական համայնքը
հետցեղասպանական շրջանում 98
Հայ ավետարանական համայնքի
արդի վիճակը և հեռանկարները 103
Հայ ավետարանական համայնքը թուրքական միջավայրում 103
Համայնքի ներուժը 110
Իրավական կարգավիճակի կամ գրանցման հարցը 126
Թուրքիայի հայ ավետարանական համայնքը՝ որպես գործոն 130

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 134

ՀԱՎԵԼՎԱԾ 138

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 139

ԱՄՓՈՓՈՒՄ ……..……...…...… 150

РЕЗЮМЕ ……..……...……...……..…… 154

SUMMARY …..…...……...…….…… 157

ԱՌԱՋԱԲԱՆ

Թուրքիայի հայության խնդիրները մնում են ինչպես գիտական, այնպես էլ վերլուծական շրջանակների ուշադրության կենտրոնում։ Այս համատեքստում հետաքրքրությունից զերծ չեն նաև Թուրքիայի առաքելադավան հայերի կողքին որպես ինքնուրույն դավանանքային համայնքներ գոյություն ունեցող Հայ Կաթողիկե *(Ermeni Katolik Kilisesi)* և Ավետարանական *(Ermeni Protestan Kilisesi)* եկեղեցիները։ Ներկայում, չնայած առկա դժվարություններին և մարտահրավերներին, Թուրքիայի հայ կաթոլիկներն ու ավետարանականները, որպես էթնոդավանական ընդհանրություններ, ցուցաբերում են բավարար կենսունակություն և ակտիվություն, ինչը թույլ է տալիս խոսել նրանց՝ որպես առանձին համայնքների, մասին և մեծացնում է հետաքրքրությունը նրանց նկատմամբ։

Լինելով էթնոդավանական ընդհանրություններ՝ Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքներն ունեն երկակի՝ ազգային և դավանանքային պատկանելություն։

Ազգային պատկանելության առումով նրանք մաս են կազմում Թուրքիայի ընդհանուր հայ համայնքի։ Նրանց առկայությունը բազմազանություն է հաղորդում ընդհանուր հայ համայնքին՝ այդ կերպ հարստացնելով վերջինիս գործունեության զինանոցը։

Դավանանքային պատկանելությամբ նրանք ընդհանուր հայ կաթոլիկության և ավետարանականության մաս են կազմում, որոնք որպես պատմական տարբեր ժամանակաշրջաններում դավանափոխ եղած հայության հատվածներ՝ այսօր կազմում են Հայության բավական զգալի մի հատված։ Պաշտոնական տվյալներով՝ Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների հետևորդ են շուրջ 850.000 հայեր՝ 600.000 կաթոլիկներ և 250.000 ավետարանականներ, որոնք որպես կրոնադավանանքային համայնքներ բնակվում են տարբեր երկրներում և ունեն կրթական, բարեգործական և համայնքապահպան գործառույթներ իրականացնող ցանցային կառույցներ։

Բացի ընդհանուր հայ կաթոլիկության և ավետարանականության մասը լինելուց, դավանանքային պատկանելության առումով Թուրքիայի հայ կաթոլիկները և ավետարանականները նաև համաշխարհային կաթոլիկության ու ավետարանականության մասն են հանդիսանում։ Այս հանգամանքը զգալիորեն ընդլայնում է նրանց գործունեության հնարավորություններն ու հորիզոնները։

Գտնվելով Թուրքիայում՝ հայ կաթոլիկներն ու ավետարանականները, քրիստոնյա մյուս համայնքների նման, ենթարկվում են բացասական և դրական տարատեսակ գործոնների ազդեցությանը։ Թուրքական ազգայնամոլությունը, հայատյացությունը, քրիստոնյաների նկատմամբ անհանդուրժողականությունը քրիստոնյա մյուս համայնքների հետ միասին թուլացրել են նաև հայ կաթողիկե և ավետարանական համայնքները։ Միևնույն ժամանակ, Թուրքիայում ծավալվող միսիոներական շարժումը, միջազգային ճնշումն այդ երկրի նկատմամբ որոշակի դրական լիցք են հաղորդում այդ համայնքների կյանքին՝ օգնե-

լով պահպանել դրանց կենսունակությունը։ Այսպիսով, տարատեսակ գործոնների ազդեցությամբ ներկայում Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները գտնվում են բավական բարդ և հակասական միջավայրում, ինչն ակտիվ դինամիկա է հաղորդում նրանց կյանքին՝ տեղիք տալով դրական և բացասական տարատեսակ միտումների։ Այդ միտումները հաշվի առնելով՝ Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները բնորոշելիս կարելի է օգտագործել եզրերի բավական լայն սպեկտր՝ սպառվող համայնքներից մինչև վերածնվող համայնքներ։

Թուրքիայի սոցիալ-քաղաքական միջավայրի հարուցած մարտահրավերների համատեքստում ցանկացած, այդ թվում նաև կրոնադավանանքային հիմքով տարաբաժանումները հայ համայնքում անթույլատրելի են։ Ընդհակառակը՝ նման սոցիալ-քաղաքական միջավայրի պայմաններում հայ համայնքի համախմբումը, նրա տարբեր, այդ թվում և կրոնադավանանքային հատվածների միջև համագործակցությունը կենսական անհրաժեշտություն են։ Այս համատեքստում Թուրքիայի հայ կաթոլիկ և ավետարանական համայնքների ռեսուրսներն ու հնարավորությունները ճիշտ օգտագործելու պարագայում կարելի է թե՛ տեղի հայ համայնքի և թե՛ ընդհանրապես Հայության համար հասնել զգալի ձեռքբերումների։ Իսկ այդ ռեսուրսների ու հնարավորությունների ճիշտ և արդյունավետ օգտագործումը նախևառաջ պահանջում է դրանց համապարփակ գիտական ուսումնասիրություն։

Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքների գործունեության ներկա փուլի վերաբերյալ ուսումնասի-

րությունները մեզանում, այնուամենայնիվ, դեռևս բավարար չեն։ Սույն աշխատանքի նպատակն է հակիրճ ներկայացնել Թուրքիայի ընդհանուր հայության մաս կազմող այդ երկու հարանվանությունների ձևավորման պատմական զարգացման ընթացքը, նրանց դերն ու նշանակությունն այդ երկրի հայության կյանքում։ Կարևորելով վերոհիշյալ համայնքների անցած պատմական ուղին՝ շեշտն առավելապես դրվել է արդի իրավիճակի և խնդիրների վրա։

Արեստակես Սիմավորյան

Վահրամ Հովյան

Արեստակես Սիմավորյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(պատմական ակնարկ)

Հայոց մեջ կաթոլիկություն տարածելու առաջին փորձերը կատարվել են դեռևս Կիլիկյան Հայկական թագավորությունում: Հայերին դավանափոխ անելու Արևմուտքի ձեռնարկած միսիոներական առաքելություններն այն ժամանակ մեծ հաջողությունների չհասան՝ հանդիպելով հայ ազգաբնակչության մերժմանն ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ակտիվ դիմադրությանը:

Սակայն Հռոմը հայերին դավանափոխելու քաղաքականությունից այդպես էլ չհրաժարվեց: 1622թ. Գրիգոր XV պապի որոշումով հիմնված «Հավատի քարոզչության սուրբ միաբանությունը» նպատակ էր հետապնդում կաթոլիկություն տարածել Արևելքում և, մասնավորապես, Հայաստանում: Այս որոշման հետևանքով 17-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանում իրենց միսիոներական լայնածավալ և ակտիվ գործունեությամբ աչքի ընկան ֆրանցիսկյան, կարմելյան, օգոստոսյան և մի շարք այլ կաթոլիկ վանական կարգեր: Հայտնի պատմական իրողություն է, որ Արևմտյան Հայաստան են ուղարկվել միսիոներական խմբեր, որոնք զանազան միջոցներով դավանափոխ են արել Հայության փոքրաթիվ մի հատվածի: Պետք է նշել, որ դավանափոխության ենթարկվեցին այլ քրիստոնյա ազգություններ ևս՝ հույներ, ասորիներ և այլն:

Օգտվելով այն հանգամանքից, որ հայերը գտնվում էին թուրքական և պարսկական ծանր լծի տակ, կաթոլիկ քարոզիչները սկսեցին տարածել իրենց դավանանքը: Կաթոլիկություն ընդունեցին այն գյուղերի ու բնակավայրերի բնակիչները, որոնք, շրջապատված լինելով թուրքերով և քրդերով, կանգնած էին երկընտրանքի առջև՝ կամ բնաջնջվել ֆիզիկապես, կամ թուրքանալ և իսլամանալ[1]: Այս կերպ դավանափոխ եղած հայերը փորձում էին ունենալ Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու պաշտպանությունը: Մինչդեռ կաթոլիկ քարոզիչների նպատակը հայ ժողովրդին թուրքական սպառնալիքից փրկելը չէր, այն ուներ ավելի խորքային, Վատիկանի համար՝ թերևս քաղաքական պատճառներ: Օսմանյան կայսրությունում հույների, հայերի, ասորիների և այլոց մեջ կաթոլիկության տարածումը հաստատում է այն փաստը, որ մուսուլման բնակչության շրջանում կրոնափոխություն իրականացնելու լատին հոգևորականության արկածախնդիր ջանքերն անհաջողության էին մատնվել: Գուցե այս պատճառով Հռոմի՝ դավանափոխությամբ քողարկված իրական քաղաքականությունը փոխվեց: Քաղաքականություն, որով շահագրգռված են եղել, ի թիվս այլ պետությունների, նաև Ֆրանսիան և Իտալիան, որոնք քարոզիչների գործունեությամբ փորձել են տարածել իրենց ազդեցությունը:

Հայերին դավանափոխ անելու լատին քարոզիչների ձեռնարկած այս քայլերն, ի վերջո, հանգեցրին բազմաթիվ բնակավայրերի կաթոլիկացմանը: Արդեն 19-րդ դ. 20-ական թթ. կաթոլիկ բնակավայրեր են հիշատակվում Կարին քաղաքում և նրա

[1] *Արոեան Ս.,* Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (կաթոլիկ) Եկեղեցու, 2002, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf:

շրջակա երեսուն բնակավայրերում՝ տասը հազար դավանափոխ եղած հայերով: Սակայն Հռոմի որդեգրած քաղաքականությունը չէր սահմանափակվում միայն Արևմտյան Հայաստանի տարածքներով, այն տեղ գտավ նաև Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում, Զմյուռնիայում, Այդինում և այլ քաղաքներում, ուր կար ոչ միայն հայերի, այլև բազում քրիստոնյա ազգերի հոծ բնակչություն:

Կասկածից վեր է, որ Օսմանյան կայսրությունը հայերի նկատմամբ վարում էր երկդիմի քաղաքականություն: Մի կողմից՝ առանձին համայնքի (միլլեթի) ստեղծումով փորձ էր անում կրոնական հողի վրա հայերի միջև պառակտում մտցնել, մյուս կողմից՝ գիտակցում էր, որ նորաստեղծ համայնքի հետ խնդիրների առաջացման դեպքում հաշվի էր նստելու եվրոպական երկրների, հատկապես Հռոմի հետ:

Ինչպես նշում են որոշ հետազոտողներ, կաթոլիկ հայերին առանձին համայնք ճանաչելու հանգամանքը վկայում է նաև այն մասին, որ Օսմանյան կայսրությունը շարունակ վարում էր ազգային փոքրամասնությունների մեջ հնարավորինս շատ ինքնակառավարման կենտրոններ ստեղծելու քաղաքականություն, որով առավել կուժեղացվեին պետական մեքենայի մանիպուլյացիոն հնարավորություններն այդ շրջանակներում[1]: Այդուհանդերձ, շատ դեպքերում նրանց վերաբերմունքը հայ կաթոլիկների նկատմամբ եղել է թշնամական, և օգտագործվել է յուրաքանչյուր պատրվակ կաթոլիկներին հալածելու համար: Երբ 1827թ. հոկտեմբերին թուրքական նավատորմը պարտու-

[1] *Տաթևիկ Խաչիկյան,* Միսիոներությունը Թուրքիայում, «Կրոն և հասարակություն», N9, Երևան, 2009, էջ 36:

թյուն կրեց Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միացյալ նավատորմից, սուլթանի հատուկ ֆիրմանով (հրաման- *Ա.Ս.*), որպես այդ պետության լրտեսներ ձերբակալվեցին և աքսորվեցին բազմաթիվ հայ կաթոլիկներ: 1828թ. հունվարին Անկարայից աքսորվեցին հայ կաթոլիկներն իրենց 26 հոգևորականների հետ: Շուտով մեկ այլ ֆիրմանով հայ կաթոլիկները հայտարարվեցին Օսմանյան կայսրության թշնամիներ: Այդ ֆիրմանով Կ.Պոլսից պետք է աքսորվեին հայ կաթողիկե եպիսկոպոսն ու բոլոր հոգևորականները: 1829թ. հունվարի 27-ին Կ.Պոլսից աքսորվեցին ևս 15 հազար հայ կաթոլիկներ, որոնց մի մասը մահացավ ցրտից ու սովից: Շատերն այս բռնագաղթը համարում են 1915թ. Հայոց եղեռնի նախատիպը[1]:

Եվրոպական երկրների ճնշման արդյունքում 1830թ. հայ կաթոլիկները ճանաչվեցին որպես առանձին միլլեթ (ազգ): Առանձին միլլեթի ստեղծման և համայնքի ձևավորման կողմնակից էր Ֆրանսիան, քանի որ հայերի կաթոլիկացման քաղաքականության մեջ նրանց դերը ևս ազդեցիկ էր, որը դրսևորվում էր այդ երկրից Արևմտյան Հայաստան ու Օսմանյան կայսրության այլ վայրեր միսիոներներ ուղարկելով[2]:

Հստակ պահանջներ դրվեցին Բ.Դռան առջև. *«Կայսրության հարկատու ազգերը՝ հույները, հայերը, հռոմեադավանները և հրեաները, ազատ պետք է լինեն իրենց դավանանքի և հավատի հարցերում, և օսմանյան տերությունը չպետք է սահմանափակի այդ իրավունքները»*: Այս պահանջի մի կետով էլ նշվում է. *«Հռո-*

[1] *Արոեան Ս.,* նշվ. աշխ.:
[2] Այս մասին մանրամասն տե՛ս *Durmuş Yılmaz,* Fransa'nın Türkiye Ermenilerini Katolikleştirme Siyaseti, Konya, 2001:

մէկանք Հայք (կաթոլիկ հայերը- *Ս.Ա.) ազատ լիցին ի պաշտել զհաւատ իւրեանց»:* Այնուհետև նշվում է, որ հռոմեադավան հայերին պետք է անջատել Հայոց պատրիարքարանի իրավասությունից և նրանց տալ առանձին իշխանություն: Սուլթանն ընդունում է պահանջը, բայց կաթոլիկ հայերի և տեղի հռոմեադավան այլ ազգերի հարաբերությունների միջև որոշ սահմանափակումներ է մտցնում. *«Արգելել իր հպատակ հայերին հարաբերություններ ունենալ կասկածելի նպատակներով օտար միսիոներների և պետությունների հետ. ուստի փոխանակ Լատինների եկեղեցի հաճախելու, այսուհետ նախընտրելի է, որ ունենան իրենց սեփական եկեղեցիները՝ անկախ Հայոց Պատրիարքարանից, բայց միանգամայն անջատ Լատիններից»*[1]:

Այդ քաղաքականությունը ձեռնտու էր, որովհետև թույլ էր տալիս մարդկային մեծ զանգվածներին տարանջատված, ուստի և կառավարելի պահել: Այդ պատճառով էլ նրանք իրենց հայ հպատակներին դիտում էին ըստ կրոնական հատկանիշների, այսինքն՝ ըստ իրենց «եկեղեցուն» նրանց պատկանելության[2]:

Չնայած հայ կաթոլիկներն արդեն ունեին, մեղմ ասած, լայն լիազորություններ, սակայն Ադրիանապոլսի պայմանագրով Օսմանյան կայսրության տարածքներից ռուսական զորքերի հետ միասին, Մխիթարյան հայր Եփրեմ Սեթի գլխավորությամբ, Կարնո նահանգից Զավախք հեռացավ հայ կաթոլիկ բնակչության ստվար մասը: Եփրեմ Սեթը՝ բավական հեռատես մի հոգևորական, գիտակցել էր, որ նույնիսկ Հռոմի և եվրոպա-

[1] *Բյուզանդ Եղիայան,* Հայ կաթոլիկ և ավետարանական հարանվանությանց բաժանումը ԺԹ դարում, Լիբանան-Անթիլիաս,1971, էջ 123:
[2] Հայ կաթոլիկ եկեղեցի, araratian-tem.am/media/Hay%20Katolik%20Ekexeci.doc:

կան երկրների հովանավորությունն ի վիճակի չէր պաշտպանելու հայերի անվտանգությունը թուրքական իշխանություններից։ Ի վերջո, հասկանալի էր, որ օսմանյան հակահայ քաղաքականությունն ուղղված էր ազգային և ոչ թե դավանանքային տարբերության դեմ։

Դավանանքային քաղաքականությունը հաղթաթուղթ էր, որը ծառայեցվեց հայերի մեջ անջատողական տրամադրությունների տարածմանը։ Արդյունքում՝ հայամերժ «լատին» դարձած ուծացած այս խմբի ներկայացուցիչները բացահայտ հայտարարեցին, որ իրենք հայ ազգից չեն սերում, և որ իրենք «լատիններ» են։ Հայ «լատինների» հետ վերջնական կապերը խզելու համար Բ.Դուռը 1831թ. աքսորի սպառնալիքով հրաման արձակեց, որով արգելվում էր խնամիական կապեր հաստատել հայ կաթոլիկների և «ֆրանկացած», «լատինացած» հայերի միջև[1]։

Սակայն հարցը սրանով չսահմանափակվեց. հայադարձության նպատակով բավական ծավալուն աշխատանք կատարեցին Մխիթարյան հայրերը։ Թե նրանց առաքելությունը Զմյուռնիայում (Իզմիր) ինչ ազդեցություն է ունեցել «ֆրանկացած», օտարացած հայ կաթոլիկների վրա՝ ազգային զգացումի վերազարթոնքի ուղղությամբ, փաստում է ժամանակագրությունը. «*Երբեմն անունն Հայ, որ միշտ առընթեր ունի վերադիր մի գարշահոտ՝ անիծեալ էր եւ ոչ ոք յուղղափառաց կամէր կրել զայն ի վերայ իւր։ Այժմ սկսան առնուլ զայն յանձն եդեալ առընթեր Հայոյն եւ զանունն կաթոլիկ, որ մերժէ ի բաց վերադիրն*

[1] *Բյուզանդ Եղիայան,* նշվ. աշխ., էջ 126։

զարշահոտ: Յետ այսորիկ սկսան տակաւ խնդրել զծէս իւրեանց, տեսեալ զի եւ ֆրանկք մեծարգոյ համարին զնոյն»[1]:

Հարկ է նշել, որ հայ կաթոլիկներին դարձի բերելու հարցում անտարբեր չէին ինչպես Հայ Առաքելական եկեղեցին, այնպես էլ հասարակական-քաղաքական գործիչները: Հարություն Բեզջիյանը՝ սուլթան Մահմուդ Երկրորդի ֆինանսական և անձնական հարցերով խորհրդականը, ղեկավարում էր նաև կաթոլիկացած հայերին Առաքելական եկեղեցի վերադարձնելու գործընթացը: Երկար բանակցությունների արդյունքում կաթոլիկ բազմաթիվ հայերի վերադարձն Առաքելական եկեղեցի ոմանք ուրախությամբ էին ընդունում, բայց Բեզջիյանի այս աշխատանքը հանդուրժողականությամբ չէր ընդունվում[2]: Ընդ որում, այս ամենը կատարվում էր մինչև միլլեթի ստեղծումը, սակայն Բեզջիյանի աքսորից հետո հայտնի չէ, թե գործընթացն ինչ շարունակություն է ունեցել:

Դավանանքային հողի վրա պառակտումն արդեն փաստ էր: Այս ամենն էլ ավելի խորացրեց հայության տարանջատումը, առավել ևս, երբ 1846թ. առանձին միլլեթի կարգավիճակում հայտնվեցին նաև հայ բողոքականները: Այս ամենի պատճառով սկսեցին կազմավորվել սեփական խնդիրների վրա ինքնակենտրոնացված ինքնուրույն համայնքներ:

[1] Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, հատոր Բ, Իսթանպուլ, 2008, էջ 68:
[2] Aileler ve insanlar, Bir emanet: Artin Bezciyan, http://www.minidev.com/kulturler/kulturler_ermeni_mimar10.asp

Հայոց Մեծ եղեռնը և հայ կաթոլիկները

20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից պետական մակարդակով Հայոց դեմ իրականացված ցեղասպանության հարցերին նվիրված հայրենական ուսումնասիրություններում հազվադեպ ենք հանդիպում հայ կաթոլիկներին առնչվող աղբյուրներ, որոնք մատնացույց են անում այն, որ օսմանյան ղեկավարության համար դավանանքային տարբերությունն ամենևին էլ կարևոր նշանակություն չուներ, երբ հարցը վերաբերում էր հայերի համակարգված և ծրագրված ոչնչացմանը: Հակառակ այն իրողությանը, որ հայ կաթոլիկների նկատմամբ առանց խտրականության իրականացվել է ցեղասպանության նույն քաղաքականությունը, ինչ և կայսրության ողջ հայության նկատմամբ, թուրքական գիտական և մերձգիտական շրջանակները չհիմնավորված նշում են, որ հայ կաթոլիկները չեն տուժել, քանի որ եղել են եվրոպական տերությունների և հատկապես Հռոմի պապի պաշտպանության տակ: Սակայն փաստերը, աղբյուրները վկայում են, որ թուրքական այսպես կոչված «գիտական» մոտեցումներն անհիմն են:

Նախ՝ ցեղասպանության հարցում ժխտողականության դիրքերից հանդես եկող թուրք «գիտնականները» (Յուսուֆ Հալաչօղլու[1], Դավութ Քըլըչ[2] և այլք) Առաջին աշխարհամարտի տարիներին կայսրության կաթոլիկ և ավետարանական հայերի վերաբերյալ հրատարակած հետազոտություններում այդ համայնքների հանդեպ իրենց «լավատեսական» գնահատականնե-

[1] *Yusuf Halaçoğlu,* Ermenilerin Suriye'ye nakli: sürgün mü, soykırım mı?: belgeler, Ankara, 2004.
[2] *Davut Kılıç,* “1915’te Tehcir Edilmeyen Ermeniler”, Ermeni Arastırmaları 1. Türkiye Kongresi Bildirileri, II, Ankara 2003, s. 114-117.

ը կառուցում են մի քանի թուրքական պետական փաստաթղթերի հիման վրա, որոնք, անկասկած, միակողմանի են ու չեն դիմանում այլ աղբյուրների հակառակ պնդումներին։ Միայն Օսմանյան կայսրությունում դիվանագիտական առաքելության մեջ գտնվող օտարերկրյա դեսպանների, հյուպատոսների, կաթոլիկ և ավետարանական միսիոներների հեռագրերը, նաև ջարդերից փրկված հայ կաթոլիկների՝ հետագայում տպագրված հուշերը և այլ նյութեր բացահայտում են հայ կաթոլիկների նկատմամբ իրականացված տեղահանման, համատարած կոտորածների, բռնի իսլամացման և թուրքացման համակարգված քաղաքականությունը։ Հարկ է նկատել, որ նախքան Մեծ եղեռնը Օսմանյան կայսրությունում գոյություն ուներ 120 հազարանոց հայ կաթողիկե համայնք։ Միայն Արևմտյան Հայաստանում և Կ.Պոլսում հայ կաթոլիկների թվաքանակը 84.000 հազար էր, որից 25.000-ը փրկվեց ջարդերից և մաս կազմեց սփյուռքի Հայության[1]։

Սկսենք նրանից, որ դեռևս 1915թ. փետրվարին անակնկալ կերպով Ստամբուլի հայ կաթողիկե համայնքին պատկանող Մխիթարյան վարժարան է այցելում կրթության նախարարության կողմից ուղարկված պատկառելի մի հանձնախումբ և պահանջում տեղեկություններ ուսուցիչների, անձնակազմի, դպրոցի և ծրագրերի մասին[2]։ Հատկանշական է, որ դա կատարվում է այն ժամանակ, երբ կայսրությունն արդեն պատերազմի մեջ էր։ Կարծում ենք, որ հիշյալ նախարարությունը կրթական ինչ-ինչ

[1] *Թորգոմ Փոսթանճեան,* Հայաստանեայց եկեղեցին եւ միւսները, Լոս Անճելոս, 2005, էջ 192։
[2] Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, Հատոր Ա, Իսթանպուլ, 2008, էջ 43։

խնդիրների պատրվակով տեղեկություններ է հավաքել և հավանաբար տրամադրել պետությանը՝ հայերի տեղահանության և կոտորածներին նախապատրաստվելու համար։

1915թ. ապրիլի 24-ին, Կ.Պոլսի հայ մտավորականության ձերբակալությանը զուգահեռ, թուրքական ժանդարմերիայի կողմից իրականացվել է մեկ այլ գործողություն ևս՝ Ախալքալաքի ռուսահպատակ հայ կաթոլիկների նկատմամբ, որոնք, տնտեսական և սոցիալական ծանր պայմաններից ելնելով, առևտուր էին անում կամ ուսումնառության նպատակով գտնվում էին Կ.Պոլսում՝ որոշակիորեն պահպանելով կապը նաև իրենց բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանում գտնվող Կարին-Էրզրումի հետ։ Անգամ օտարերկրյա քաղաքացիությունը չի խանգարել թուրքերին ձերբակալել և Դեր-Զոր աքսորել նաև հայության այս շերտին[1]։

Ցեղասպանության տարիներին հայ կաթոլիկների վերաբերյալ առաջին թուրքական աղբյուրները թվագրվում են 1915թ. մայիսի 24-ով։ Դրանցում մասնավորապես նշվում էր. «*Հայերի հանդեպ կառավարության կողմից ձեռնարկված հարկադիր միջոցառումները բացառապես հիմնված են երկրի անվտանգության և հասարակական կարգ ու կանոնը բավարարելուն և պաշտպանելուն։ Հայերի դեմ կառավարությունը չի վարում ջարդերի քաղաքականություն, դեռևս չեզոք դիրքորոշման մեջ մնացող կաթոլիկներին և բողոքականներին ձեռք չեն տվել*»[2]։ Սա Օսմանյան պետության կողմից տրված պատասխանն էր

[1] Մանրամասն տե՛ս *Մակարոֆ Ն.,* «Դեյր-Էզ-Զորի Աքսորյալը», Երևան, 2001։

[2] *Yusuf Halaçoğlu,* Ermenilerin Suriye'ye nakli: sürgün mü, soykırım mı?: belgeler, Ankara, 2004, s. 21-22.

արևմտյան երկրներին, որը փորձ էր պետական մակարդակով հերքելու ջարդերի վերաբերյալ տեղեկությունները, որոնք արձագանք էին գտել արևմտյան մամուլում և դիվանագետների հեռագրերում: Հայ կաթոլիկների և ավետարանականների մասին «դրական» շեշտադրումները բացառապես նպատակ ունեին չեզոքացնել այն երկրների արտաքին միջամտության հնարավորությունները, որոնք շահագրգռված էին տեղի հայ կաթոլիկների և բողոքականների «պաշտպանվածությամբ»:

Չնայած թուրքական կեղծ հավաստիացումներին, թե հայերի, մասնավորապես՝ կաթոլիկ և ավետարանական դավանանքային խմբերի նկատմամբ բացառվում էր որևէ գործողություն, այդուհանդերձ, կոտորածները չշրջանցեցին վերջիններիս: Հայ կաթոլիկ հոգևորականությունը որոշակի ջանքեր էր գործադրում փրկելու իր համայնքը կոտորածներից և տեղահանություններից: Այս առումով հիշարժան են այդ տարիներին Հայ Կաթողիկե եկեղեցու պատրիարք, նորին մեծություն Պողոս-Պետրոս ԺԳ-ի ջանքերը, որոնք առանձնապես դրական ազդեցություն չունեցան: Այսպես, դանիական աղբյուրներից իմանում ենք, որ *«1915 թվականի օգոստոսի 16-ին Գերմանիայի դեսպանն ընդունելության ժամանակ իր մոտ է կանչել Թուրքիայի նախարարին և խնդրել նրան՝ համոզել իր կառավարությանը վերջ դնել հայերի հալածանքներին, հատկապես կաթոլիկ հայերի, ովքեր երբեք ոչ մի հեղափոխության չեն մասնակցել և չեն խառնվել քաղաքականության մեջ... Երբ թուրք վեզիրի տված խոստումները դրժվեցին, և հալածանքներն ու սպանությունները շարունակվեցին, նորին մեծություն Փոլ Պիեռ 13-րդը* (Պողոս-Պետրոս ԺԳ- *Ա.Ս.)՝ հայ-կաթոլիկ եկեղեցու պատրիարքը, դի-*

մեց Իսպանիայի նախարարին և խնդրեց նրան Իսպանիայի անունից ևս մեկ անգամ դիմել վեզիրին, որ գոնե կաթոլիկ հայերին չենթարկեն հալածանքների: Իսպանիայի նախարարը համաձայնեց և անցած երկուշաբթի օրը ընդունելության ժամանակ դիմեց վեզիրին, սակայն վերջինս «զարմացավ» ՝ լսելով, թե ինչ դաժանություններ են կատարվել, և խոստացավ անմիջապես հրամայել, որ կաթոլիկ հայերին ձեռք չտան»[1]:

Հայ կաթոլիկների կոտորածներին վերջ դնելու՝ Պողոս-Պետրոս ԺԳ-ի հորդորները պատահական չէին: Դեռ 1915թ. մայիս-հունիսին տարաբնույթ պատրվակներով նախ աքսորվում, հետո տարբեր վայրերում ոչնչացվում են Մխիթարյան և Արծիվյան միաբանությունների բազմաթիվ կղերականներ: Հայ Կաթողիկե եկեղեցուն ծառայող հոգևորական դասի նկատմամբ նման առաջին գործողություններն իրականացվեցին Մալաթիայի եպիսկոպոս Միքայել Խաչատուրյանի, Տիգրանակերտում՝ եպիսկոպոս Անդրեաս Չելեպյանի, տեղի եկեղեցու հայ քույրերի հետ, հետագա ամիսներին դրանք շարունակվեցին այլ վայրերում:

Իզմիթի Մխիթարյան հայրերը երկարամյա տառապանքներից հետո վերադարձան աքսորից ազդեցիկ և պատվական մի հայի միջամտությամբ: Իսկ Պարտիզակի հայրերն աքսորվելուց հետո, մեկ այլ բարերարի միջնորդությամբ, հնարավորություն են ստանում ապաստանել Կ.Պոլսում: Մինչդեռ Մարդին քաղաքի հայ կաթողիկե համայնքի առաջնորդ Իգնատիոս արքեպիսկոպոս Մալոյանը, ինչպես նաև Տրապիզոնում գտնվող Մխիթարյան երեք հայրերը սպանվում են: 1915թ. հունիսին Մալոյանին առաջարկում են հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել

[1] Հայոց ցեղասպանության վերաբերյալ դանիական փաստաթղթերից, http://norkhosq.net:

մահմեդականություն, ինչը նա մերժում է, ինչից հետո նրա հետ միասին Մարդին քաղաքի հայ կաթողիկե համայնքի 400 բնակիչներ տեղահանվում են և ուղարկվում դեպի Տիգրանակերտ: Ճանապարհին տեղահանվածներն առանձնացվում են միմյանցից և վերածվում փոքր խմբերի ու մերձակա ձորակներում ոչնչացվում թուրք զինվորականների կողմից: Իսկ Մալոյանը Տիգրանակերտի մոտակայքում գտնվող Քարաքյոփրու անունը կրող գյուղում գնդակահարվում է[1]:

Կոտորածներին զուգահեռ՝ իրականացվել է նաև հայ կաթոլիկների իսլամացման գործընթաց: Սակայն պետք է փաստել, որ հայ կաթոլիկների բռնի իսլամացումը կայսրության տարածքում սկսվել էր ավելի վաղ: Մինչև ցեղասպանությունը բռնի կրոնափոխվել են ամբողջ գյուղեր Արդահանում (Մամանելիս, Վել և այլն), իսկ ցեղասպանության տարիներին այդ գործընթացները շարունակվում էին: Կրոնափոխության դեպքեր հայ կաթոլիկների մեջ արձանագրվել են նաև Կարինի հայաբնակ Արծաթի և Թվանջ գյուղերում: Այս գյուղերի բնակիչների մի մասը, որ 1830թ. չէր տեղափոխվել Ջավախք, Հայոց ցեղասպանության տարիներին մահվան սպառնալիքի տակ հրաժարվել է կաթոլիկությունից և իսլամացել, իսկ մի մասն էլ կոտորվել է:

Օսմանյան բանակում ծառայող զինվորականների և այդ երկրում դիվանագիտական առաքելության մեջ գտնվող գերմանացի բարձրաստիճան ծառայողների հեռագրերից հայտնի են դառնում հայ կաթոլիկների և բողոքականների նկատմամբ իրա-

[1] Տե՛ս «Մասիս», ապրիլ, Պեյրութ, 2011, էջ 22-30:

գործված տեղահանությունների և իսլամացման փաստեր. *«Հայերի հետապնդումներն արևելյան նահանգներում թևակոխել են իրենց վերջնական փուլը: Թուրքական կառավարությունը թույլ չտվեց իրեն խանգարել Հայկական հարցի լուծումը հայ ցեղի ոչնչացման ճանապարհով իր ծրագրի կատարմանը ո՛չ մեր միջնորդությունների, ո՛չ ամերիկյան դեսպանի և պապական լեգատի, ինչպես նաև Անտանտի կողմից սպառնալիքների, առավել ևս Արևմուտքի հասարակական կարծիքը հաշվի առնելու միջոցով: Այժմ նա պատրաստվում է ձուլել և ցրել առաջին տեղահանությունը վերապրած հայերի վերջին մնացորդները: Ընդ որում, խոսքը վերաբերում է հյուսիսային Սիրիայում (Մարաշ, Հալեպ, Ռաս-ուլ-Այն), ինչպես նաև Փոքր Ասիայի որոշ խոշոր բնակավայրերում (Անգորա, Կոնիա) մնացածներին, հատկապես նրանց, ովքեր այնտեղ են հայտնվել տեղահանության հետևանքով, կամ էլ ավելի շուտ այնտեղ տեղափոխվածներին: Սակայն հնաբնակների շրջանում, ինչպես նաև* ***կաթոլիկ և բողոքական հայերի շրջանում,*** *այժմ կատարվում են «զտումներ», թեև Բարձր Դուռը կրկին խոստացել է խնայել այս վերջիններին:*

Այս մնացածները մասամբ տեղահանվում են ավելի հեռու Միջագետք, իսկ մասամբ էլ ենթարկվում են մահմեդականացման: Մարաշում և Հալեպում տեղահանությունն ընթանում է մեծ թափով: Դիարբեքիրում իր գործունեությամբ հայտնի վալի Ռաշիդ բեյը Անգորայում զբաղված է նրանով, որ փնտրում է վերջին ***հայերին՝ ներառյալ կաթոլիկներին,*** *և տեղահանում նրանց: Նույն ձևով վարվում էին Էսքիշեհիրում և Իզմիթի շրջակայքում դեռ* ***մնացած բողոքական և կաթոլիկ հայերի*** *հետ (*ընդգծումները մերն են- *Ս.Ա.): Չնայած պաշտոնական անձանց*

բոլոր ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում մեծ դեր է խաղում մահմեդականացումը»[1]:

Հայ կաթոլիկների բռնի իսլամացման քաղաքականությունն անգամ Եղեռնի տարիներին եղել է կառավարության ուշադրության կենտրոնում: Դրա վկայությունն է հետևյալ փաստը: 1917թ. հունիսին Էդիրնեի և Անկարայի նահանգներում բարձրանում է այնտեղ մնացած և իսլամ ընդունած կաթոլիկ հայերին աքսորելու խնդիրը: Ինչպես պարզվում է, իսլամ ընդունած կաթոլիկ հայերի շրջանում պետությունը նկատել էր գաղտնի կերպով քրիստոնեական կաթոլիկ սովորույթների պահպանման դեպքեր, ինչն էլ հիմք է ծառայել նրանց աքսորելու համար[2]:

Գերմանացի հետազոտող Վոլֆգանգ Գուստը, անդրադառնալով Օսմանյան կայսրության հայ կաթոլիկ և ավետարանական բնակչության նկատմամբ գերմանական կաթոլիկ և բողոքական եկեղեցիների պահվածքին, նշում է. *«Գերմանիայի կայսրը միայն մեկն էր նրանցից, ովքեր կարող էին փրկել հայերին: Կային նաև այլ հզոր և ազդեցիկ հաստատություններ՝ գերմանական եկեղեցիներ: Բարձրագույն կաթոլիկը քաղաքական գործիչների շրջանում՝ Մաթթիաս էրցբերգերն էր, որը հաճախ էր լինում Թուրքիայում և հաղորդագրություններ էր կազմում, թե ինչպես կարելի է փրկել հայերին: Նրա առաջարկները բավականին պարզամիտ էին: Այնուամենայնիվ, նրա միջոցով տեղեկացված էր Գերմանիայի կաթոլիկ եկեղեցին: Եվ ի՞նչ արեց*

[1] *Մեսերնիխ,* Հայերի հետապնդումները Թուրքիայի արևելյան շրջաններում, Տերապիա, 10 հուլիսի 1916թ., Կայսերական գերմանական դեսպանություն N 368, http://www.genocide-museum.am/arm/german.php:

[2] *Dündar F.,* Modern Turkiyenin şifresi. İttihat ve Terakki'nin etnisite muhendisliği (1913-1918), İstanbul, 2008 (2-inci baskı), s. 315.

այն։ Ոչինչ։ Ավելի նշանակալից էր ավետարանչական եկեղեցու վերաբերմունքը։ Նրա բարեգործական կենտրոնները Թուրքիայում անում էին ամեն ինչ հայերի տառապանքները մեղմացնելու համար։ Եվ նրանք ստույգ տեղեկություններ էին հաղորդում ցեղասպանության մասին, ինչպես նաև Լեփսիուսն էր ճշգրտորեն տեղեկացրել իր ավետարանչական եղբայրներին գաղտնի հանդիպումների ժամանակ։ Եվ ի՞նչ արեցին գերմանացի բարձրագույն բողոքականները։ Ոչինչ։ Նրանք ընդհանուր բանաձև հղեցին կանցլերին՝ հստակ իմանալով, թե ինչ քաղաքականություն է նա վարում հայերի հանդեպ։ Միայն իր ստորադրյալների քանակով և որակով հարգանքի արժանի այս հուշագիրը փոխանցվեց Կոստանդնուպոլսի դեսպանատանը և հանգեցրեց այն բանին, որ Գերմանիայի բարձրաստիճան ներկայացուցիչները Թուրքիայում սկսեցին խնդրել խնայել գոնե հայ կաթոլիկներին, նախնառաջ հայ բողոքականներին, քանի որ նրանք հատկապես օրինապաշտ են և զերծ հեղափոխական գաղափարներից։ Այլ կերպ ասած՝ գերմանական բողոքականների կարծիքով՝ հարկավոր չէր անվերապահորեն վստահել գրիգորյանական հայերին։ Ցեղասպանության համար պատասխանատվություն կրող թուրք պաշտոնյաները «իրար էին շփում ձեռքերը» բավականին անսպասելի այս օժանդակությունը ստանալով։ Կաթոլիկ և բողոքական հայերին գրեթե ոչինչ չօգնեց, նրանք նահատակվեցին, ինչպես և իրենց հայ առաքելական հավատակից եղբայրները»[1]։

[1] Հատված Վոլֆգանգ Գուստի *«Կարո՞ղ էր արդյոք Գերմանիան փրկել հայերին»*, Ֆրանկֆուրտի Ս. Պողոս եկեղեցում 2009թ. ապրիլի 24-ի ելույթից, http://www.wolfganggust.net/armenocide/gusthome.nsf/d3cb8075f11223b4c12572ef004f2e81/e4971e2aa8ad1bd3c12576210077c32e?OpenDocument։

Եվ ինչպես իրավացիորեն նկատել է պատմաբան Ս.Արոյանը. «*Թուրքական ջարդարարները հայերին կոտորում էին ոչ թե նրա համար, որ նրանք առաքելականներ էին կամ հայ կաթողիկեներ: Նրանք կոտորվեցին միայն նրա համար, որ ... հայ էին*»[1]: Պատմական փաստերի համաձայն, հայ կաթոլիկ համայնքից ցեղասպանության զոհ դարձան 30 հազար հայեր, Հայ Կաթողիկե եկեղեցու 102 հոգևորական, մի քանի եպիսկոպոս և 45 վանական[2]: Հայ կաթոլիկների մեծ մասը ստիպված եղավ գաղթել եվրոպական և մերձավորարևելյան երկրներ:

Ներկայացված մի քանի փաստերը հայ կաթոլիկների նկատմամբ իրականացված ցեղասպանական գործողություններ-ի ընդամենը դրվագներ են և վկայում են, որ այն «գիտական» մոտեցումները, թե հայ կաթոլիկները գտնվել են եվրոպական երկրների հովանու ներքո, ընդամենը իրական փաստերն աղավաղելու փորձեր են:

[1] *Արոեան Ս.,* նշվ. աշխ.:
[2] Հայ Կաթոլիկ եկեղեցի, http://araratian-tem.am/media/Hay%20Katolik%20Ekexeci.doc.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թուրքիայի հայ կաթողիկե համայնքի կյանքում առկա արդի միտումների տրամաբանությունը, դրանց օրինաչափությունները ճիշտ ընկալելու և գնահատելու, համապատասխան եզրակացություններ և կանխատեսումներ անելու համար կարևոր նշանակություն ունեն համայնքի վրա ազդող գործոնների վերհանումը և վերլուծությունը։

1923-2012թթ. ընկած ժամանակահատվածում հայ կաթողիկե համայնքի անդամների թվաքանակի և կազմակերպչական կառույցների նվազման գործընթացի քաղաքական պատճառների և հետևանքների վերհանումը ևս կարևոր է, քանի որ դրանք անմիջականորեն առնչվում են գործնական կյանքի (քաղաքականության) հետ։ Խնդրի լուծման համատեքստում դիտարկվելու են Թուրքիայի հայ կաթողիկե համայնքի գործունեության ուղղությունները, որի արդյունքում փորձ կարվի բացահայտել դրանց ազգային, քաղաքական և քաղաքակրթական դերն ու նշանակությունը Թուրքիայի հայ համայնքի կյանքում, ինչպես նաև տարածաշրջանային գործընթացներում։ Այդ կերպ փորձ կարվի բացահայտել, թե ինչպիսի (ազգային, քաղաքական, քաղաքակրթական) գործոն են հանդիսանում հայ կաթոլիկները ժամանակակից Թուրքիայում։ Կարևոր է հատկապես հայ կա-

թողիկե համայնքի ծիրում գործող Մխիթարյան միաբանությանը պատկանող դպրոցների ու նախակրթարանների գործունեության դիտարկումը, որտեղ կրթություն են ստանում ոչ միայն այդ համայնքի ներկայացուցիչները, այլև վերջին շրջանում Հայաստանից արտագաղթած մեր հայրենակիցները։

Խոսելով Թուրքիայի կաթոլիկ հայության այժմեական խնդիրների մասին՝ պետք է ասել, որ դրանք սկսվում են ոչ միայն հոգևոր-եկեղեցական դաշտից, որն առավելապես ունի համայնքապաշտպան գործառույթ, այլև մարդկային գործոնից (փոխադարձ ընկալման խնդիր), ինչպես նաև համայնքի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունից։ Մեր դիտարկումներից ելնելով՝ փաստենք, որ թուրքական և հայկական տեղեկատվական դաշտում այս համայնքի ներկա գործունեության մասին տեղեկությունները կցկտուր են և հակասական։ Մասնավորապես, Թուրքիայի տարածքում բնակվող հայերի մասին քննարկումները սահմանափակվում են կամ «պաշտոնական», այն է՝ առաքելադավան հայկական համայնքի, կամ ծպտյալ և բռնի իսլամացած հայերի սերունդների խնդիրներով, իսկ կաթոլիկների պարագայում՝ նրանց թվաքանակի նշմամբ։ Բնական է, հայկական կողմի «թերացումը» պայմանավորված է մի շարք խոչընդոտներով, իսկ թուրքական կողմը սահմանափակվում է մակերեսային տեղեկատվությամբ՝ շեշտելով միայն համայնքի գոյության մասին, ինչն, անշուշտ, նպատակային քաղաքականություն է՝ միտված այդ երկրում հայության դավանանքային տարանջատվածության թմբկահարմանը։

Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը նույն հալածանքի քաղաքականությունն է վա-

րում հայ կաթոլիկ և առաքելադավան համայնքների նկատմամբ։ Հանրապետական Թուրքիայի կազմավորումից ի վեր հայ կաթոլիկներն ունեցել են բազում խնդիրներ, որոնք բացասական ներգործություն ունեցան և «խթանեցին» համայնքի քայքայումը։ Դա անուղղակի և ուղղակի ազդեցություն ունեցավ նաև հայ առաքելական և ավետարանական համայնքների վրա։ Այդ քաղաքականությունն իրականացվում էր հետևողականորեն՝ տարբերություն չդնելով հայերի դավանանքային խմբերի միջև։ Պետական մակարդակով համայնքապատկան կրթադաստիարակչական կառույցների ներքին խնդիրներին միջամտելը, հայ ուսուցիչների ու տնօրենների հանդեպ իրականացված «զտումները» հատկապես Մխիթարյան դպրոցներում և այդ պաշտոններում թուրքեր նշանակելը ևս բացասական գործոն էին, ինչը համայնքին ներսից վերահսկելու հնարավորություն էր տալիս պետական օղակներին։

Փաստորեն, 1923թ. հանրապետական Թուրքիայի հռչակումն ընդհանուր առմամբ վերջ չդրեց կրոնական և ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող այն սահմանափակումներին ու հալածանքներին, որոնք ընթանում էին օսմանյան ողջ ժամանակաշրջանում։ Ուղղակի փոխվեցին դրանց տեսակներն ու միջոցները։

Ի՞նչ զարգացումներ տեղի ունեցան հայ կաթողիկե համայնքում Օսմանյան կայսրության փլուզումից հետո։ Հայերի դեմ իրականացված ցեղասպանությունից և Օսմանյան կայսրության փլուզումից հետո Հայ Առաքելական, Ավետարանական և Կաթողիկե եկեղեցիների ողջ մնացած հետևորդների մեծագույն մասը կարողացավ գոյատևել հիմնականում Ստամբու-

լում, ուր կենտրոնացան և իրենց մեջ որպես համայնք ինքնակազմակերպվելու ուժ գտան: Ավելի փոքր թվաքանակով հայ կաթոլիկներ գոյատևեցին Անկարայում, Մարդինում, Մերսինում, Տրապիզոնում, հատուկենտ ընտանիքներ՝ տարբեր քաղաքներում: Սակայն համայնքի ակտիվ գործունեության համար չկային այնպիսի նախադրյալներ, որոնք նրան թույլ կտային զարգանալ: Այդ բացն անմիջականորեն զգացվեց. նահանջ գրանցվեց ներհամայնքային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, որից մինչև այսօր չի ձերբազատվել: Տարբեր քաղաքներում գործող հայ կաթոլիկ համայնքները խնդիրների առումով ունեն և՛ ընդհանրություններ, և՛ հսկայական տարբերություններ, հատկապես լեզվի, արտագաղթի, հայեցի կրթություն ստանալու և, բնական է, հոգևոր-եկեղեցական հարցերում:

Կաթոլիկ համայնքները և թվաքանակը

Փաստ է, որ Թուրքիայի էթնիկական կազմի վերաբերյալ պատկերացումներն առաջին հերթին կազմվում են թուրքական պետական և վիճակագրական կառույցների ուսումնասիրությունների գնահատականների հիման վրա: Սակայն տարբեր նկատառումներից ելնելով՝ տրվում են իրարամերժ և հակասական վիճակագրական տվյալներ այդ երկրի բնակչության ազգային կազմի վերաբերյալ: Օրինակ, հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո այդ երկրի պաշտոնական վիճակագրական տվյալները երբևէ հայ կաթոլիկներին չեն հիշատակում՝ հակառակ նրան, որ վերջիններս բնակվում են Թուրքիայի տարբեր վայրերում և այդ երկրի քաղաքացիներն են: Չենք բացառում, որ 1927-1965թթ. ընկած ժամանակահատվածում Թուրքիայում

իրականացված մարդահամարների ժամանակ որոշ թվով հայ կաթոլիկներ ընդգրկված լինեն ներքոհիշյալ տվյալներում, քանի որ վիճակագրական տվյալները ոչ թե էթնիկ պատկանելության վրա են հիմնված, այլ՝ թե որ լեզվի կրողն է եղել տվյալ քաղաքացին: Նման մեխանիզմով բերված տվյալներն արժեզրկում են ստացված արդյունքները և հետապնդել են որոշակի նպատակներ՝ հաշվի առնելով այն, որ հայության մի զգալի հատված թուրքախոս է եղել: Այդ պաշտոնական վիճակագրությունն ուներ հետևյալ պատկերը.

Տարեթիվ	Հայերենը՝ մայրենի լեզու	Հայերենը՝ երկրորդ լեզու	Ընդհանուր	Թուրքիայի ընդհանուր ազգաբնակչությունը[1]
1927	67.745	-	67.745	13.629.488
1935	57.599	9.782	67.381	16.157.450
1945	47.728	12.354	60.082	18.790.174
1950	52.776	9.322	62.098	20.947.188
1955	56.234	6.084	63.319	24.064.763
1960	52.756	19.444	72.200	27.754.820
1965	33.094	22.260	55.354	31.391.421

Հայ կաթոլիկների թվաքանակի մասին բավական ուշագրավ տեղեկություններ ենք իմանում Հռոմի Կաթոլիկ եկեղեցու կողմից տարբեր տարիներին եկեղեցապատկան համայնքների անդամների վերաբերյալ հավաքված աղբյուրներից, որտեղ հստակ երևում են համայնքի անդամների նվազման տեմպերը: Ստորև ներկայացված աղյուսակից պարզ երևում է, որ նվազման միտումները միայն հայ կաթոլիկ համայնքին հատուկ չեն

[1] *Fuat Dündar,* Türkiye Nüfus Sayımlarında Azınlıklar, Istanbul, 1999, s. 91.

եղել, նույն վիճակում էին նաև նույնադավան մյուս համայնքները, բացառությամբ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հետևորդների (Թուրքիայի հայ կաթողիկե համայնքի նվազման միտման մասին տե՛ս Աղյուսակ 1-ում)։

Որոշ տվյալների համաձայն՝ հայ կաթոլիկների թիվը 1970-ական թթ. շուրջ 14 հազար էր[1], թեև այս թիվը կասկածելի է, եթե հաշվի առնենք, որ բռնագաղթն ու կոտորածները չէին շրջանցել վերջիններին, քանի որ Հռոմի տվյալները ցույց են տալիս, որ համայնքն այդ թվականներին ուներ շուրջ 8500 անդամ։ Մինչդեռ 1980թ. համայնքն էապես կրճատվեց. անդամների թիվը հասավ 4500-ի։ Թուրքիայի քաղաքական անկայուն իրավիճակը, ռազմական հեղաշրջումներն ու ճնշումները հայության նկատմամբ ստիպեցին համայնքի մեծ մասին արտագաղթել Ֆրանսիա, Կանադա և ԱՄՆ։ Չի բացառվում, որ արտագաղթի կազմակերպման հարցում կարևոր դեր էին խաղում արևմտյան երկրները[2]։

Այս առումով, թերևս, տեղին է նշել, որ հայ կաթողիկե համայնքի վրա առանձնահատուկ բացասական ներգործություն ունեցան երկրում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական տեղաշարժերը, թուրքական իշխանությունների շարունակական և ճնշող քաղաքականությունը տեղի հայության նկատմամբ, ինչն էլ դարձավ արտագաղթի խթան։

[1] Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 163։

[2] Ի դեպ, ներկայում Իրանի հայ կաթոլիկ համայնքի անդամներին ԱՄՆ արտագաղթեցնելու քաղաքականությունը նախաձեռնում և ղեկավարում են իսրայելյան և իրանական (իսլամական) մի շարք կազմակերպություններ։

Աղյուսակ 1

Թուրքիայի կաթոլիկների թվաքանակն ըստ տարիների														
Եկեղեցական կառույցներ	1950	1970	1980	1990	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2008	2009	2012
Հայ Կաթողիկե եկեղեցի[1]	7.000	8.500	4.500	3.670	3.680	3.650	3.800	3.750	3.700	3.670	3.670	3.650	3.450	3.350
Հունաբյուզանդական կաթոլիկ եկեղեցի	1.000	134	70	50	40	40	45	-	-	40	40	-	25	25
Ասորական կաթոլիկ եկեղեցի	-	-	-	2.500	-	2.125	-	-	-	-	2.155	-	2.100	2.000
Խալդյան կաթոլիկ եկեղեցի	-	-	6.000	2.900	5.000	5.000	5.100	5.100	4.800	5.925	5,925	4.226	4,720	4.473
Հռոմի կաթոլիկ եկեղեցի	9.525	13.050	-	-	-	20.800	-	-	-	20.850	-	-	-	21.683

[1] Տե՛ս Archeparchy of Istanbul (Armenian),Constantinopolitanus Armenorum, http://www.catholic-hierarchy.org/diocese/disar.html և Ronald G. Roberson, The Eastern Catholic Churches 2012, http://www.cnewa.org/source-images/Roberson-eastcath-statistics/eastcatholic-stat12.pdf

Այստեղ հարկ է անդրադառնալ Թուրքիայի ընդհանուր կաթոլիկությանը ևս: Միայն այս դեպքում է հնարավոր հասկանալ այն խորքային պատճառները, որոնք դարձան կաթոլիկ համայնքների փոշիացման նախասկիզբը:

Կաթոլիկների թվաքանակը, տարբեր աղբյուրների համաձայն, կազմում է մոտ 30 հազար՝ Թուրքիայի ընդհանուր ազգաբնակչության 0.05%-ը: Ինչպես և վերևում ներկայացրել ենք, հետևորդները ցրված են տարբեր ծիսակարգերի վրա հիմնված եկեղեցիներում: Ըստ այդմ, Թուրքիայում գործում են կաթոլիկ դավանանքի հետևյալ եկեղեցիները՝ Հայ Կաթողիկե (հայկական ծիսակարգով), Հռոմի կաթոլիկ (լատինական ծիսակարգով), Հունա-բյուզանդական կաթոլիկ (հունական ծիսակարգով), Ասորական և Խալդյան կաթոլիկ եկեղեցիները:

Հռոմի Կաթոլիկ եկեղեցին, ի տարբերություն ունիական հենքի վրա ձևավորված մյուս կաթոլիկ եկեղեցիների, գերազանցում է հետևորդների քանակով, իսկ ազգային տեսանկյունից այն անընդհատ փոփոխություններ է կրել: Դեռևս 1935թ. այս եկեղեցու հետևորդ էին իտալական և ֆրանսիական ծագում ունեցող լևանտները՝ մոտ 15 հազար (բացառությամբ Լիվորնոյից Թուրքիա գաղթած սեֆարիդյան հրեաների, որոնց ևս երբեմն դիտում են որպես լևանտներ, որոնք հիմնականում հուդայական կրոնի հետևորդ են): Սակայն 1955թ. սեպտեմբերյան ջարդերը[1] բացասական ներգործություն ունեցան համայնքի վրա, ինչի արդյունքն էր համայնքի անդամների անհամեմատ արագ միգրացիան Իտալիա և այլուր:

[1] Տե՛ս *Մելքոնյան Ռ.,* Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության, Երևան, 2010, էջ 20-21:

Հռոմի կաթոլիկ եկեղեցիները գլխավորապես կենտրոնացված են Ստամբուլի, Տրապիզոնի, Ադանայի, Մերսինի շրջաններում: Ազգային տեսանկյունից հետևորդների մեջ կան ֆրանսիացիներ, իտալացիներ, ասորիներ, մարունիներ, հույներ և անգամ հայեր: Վերջիններս կարող էին լինել Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդներ, մինչդեռ բնակավայրում (հատկապես Տրապիզոն, Մերսին, Ադանա, Սամսուն քաղաքներում) սեփական եկեղեցու բացակայության պայմաններում ստիպված են առայսօր հաճախել Հռոմի Կաթոլիկ եկեղեցի, ինչով պայմանավորված էլ փոքրաթիվ հայ կաթոլիկները չեն կարող դասվել հայ կաթողիկե համայնքի անդամների շարքին: Ընդհանուր առմամբ, այս եկեղեցու հետևորդ է շուրջ 21.000 հոգի:

Խալդյան կաթոլիկ եկեղեցու հետևորդների թվաքանակը, ինչպես տեսանք, 1950-2010թթ. ընկած ժամանակահատվածում անընդհատ տատանվել է 2000-6000-ի սահմաններում: Ազգային տեսանկյունից այս եկեղեցու հետևորդներն ասորիներ ու կաթոլիկ դավանանքին հարող սիրիացի քրիստոնյա արաբներ են: Նրանք Թուրքիայում երբևէ մեծ թիվ չեն կազմել, և համայնքը համալրվել է ի հաշիվ Իրաքի դավանակիցների ներգաղթի, քանի որ այն հատկապես աճեց իրաքյան երկու պատերազմներից հետո: Հիմնականում ապրում են Դիարբեքիր, Մերսին և Ստամբուլ քաղաքներում:

Թուրքիայի «կրոնական քարտեզից» իսպառ անհետացած բուլղարական կաթոլիկ համայնքի ճակատագիրն է կարծես կրկնում նաև հունա-բյուզանդական կաթոլիկ համայնքը: Եթե 1950թ. ստամբուլյան այս համայնքում շուրջ 1000 մարդ կար, ապա այսօր այդ թիվը սիմվոլիկ է՝ ընդամենը 25 հոգի: Իսկ ար-

տագաղթի հիմնական պատճառը, բնականաբար, սեպտեմբերյան ջարդերն էին: Թեև նման բացասական զարգացումների հետևանքով համայնքները նվազեցին, այդուհանդերձ, պահպանեցին կրոնական փոքրամասնության դե-ֆակտո կարգավիճակը: Ինչո՞ւ կրոնական, քանի որ Թուրքիայում «փոքրամասնություն» հասկացությունը խիստ սահմանափակված է. Լոզանի պայմանագրով իբրև այդպիսին ճանաչվում են ոչ մուսուլման համայնքներից երեքը՝ հայկականը, հունականը և հրեականը[1]:

Կրոնական անհանդուրժողականությունը

Թուրքիայի կաթոլիկները, կարելի է ասել՝ նաև բողոքականները, այսօրվա դրությամբ իսլամական ծայրահեղականների և ազգայնականների համար թիրախ խմբեր են հանդիսանում: Կաթոլիկների նկատմամբ անհանդուրժողականությունը նոր երևույթ չէ, ի հայտ է եկել դեռ 1960-ական թթ.: Մի կողմից՝ սեպտեմբերյան ջարդերը, մյուս կողմից՝ պետական մակարդակով իրականացվող ճնշումներն այս համայնքները դնում էին անելանելի իրավիճակում:

Օրինակ, շինարարական գործունեություն իրականացնելու պատրվակով փորձ էր արվում օտարել եկեղեցական հողերը կամ նույնիսկ քանդել եկեղեցիները, կամ դրանք հանձնել հանրային օգտագործման: 1963թ. տեղական ինքնակառավարման մարմինները գրադարանի վերածեցին Գիրեսուն քաղաքի Հռոմեական Կաթոլիկ եկեղեցին: 1976թ. Սամսունի քաղաքապետ Վեհբի Գյուլն իսկական արշավ սկսեց տեղի կաթոլիկ եկեղեցու դեմ. եկեղեցու քանդման հրաման արձակեց՝ տեղում այգի

[1] UN Human Rights Instruments, HRI/CORE/TUR/2007, 8 July 2008, p. 36.

կառուցելու նպատակով: «Պապի ավանակներին ուղարկել Վատիկան», «Եկեղեցի չէ, այլ միսիոներական օջախ» կարգախոսներով փորձում էին ընդդեմ եկեղեցու ոտքի հանել նաև Սամսունի թուրք հասարակությանը:

Թեև Վատիկանի և Իտալիայի հյուպատոսության միջամտությունից հետո խնդիրը լուծվեց հօգուտ եկեղեցու, սակայն 1994թ. Սամսունի եկեղեցին կրկին հայտնվեց ուշադրության կենտրոնում: Եկեղեցու ֆրանսիացի հոգևորական Պիեռ Բռունիսեին մեղադրեցին թուրք աշակերտներին կրոնափոխելու, պոռնոֆիլմեր ցուցադրելու և ալկոհոլային խմիչքներ տրամադրելու մեջ, ինչը հրահրվել էր հոգեկան խնդիրներ ունեցող Աթիլլա Նուրի կողմից: Այս դեպքից հետո կաթոլիկ համայնքի անդամները, որ հիմնականում ֆրանսիացիներ, ամերիկացիներ ու հայեր էին, լքեցին քաղաքը՝ հետագա բարդություններից խուսափելու համար, տասներկու տարի անց վանահայրը դանակահարվեց հոգեկան խնդիրներ ունեցող նույն անձի կողմից[1]:

2000թ. ի վեր Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հոգևորականների սպանությունների ու այլ իրավախախտումների կտրուկ աճը վկայում է, որ համայնքը շարունակում է թիրախ հանդիսանալ ազգայնամոլների համար: Մասնավորապես, 2005թ. ապրիլին անհայտ անձինք փորձել էին այրել Անթալիայի Սուրբ Պողոս մշակութային կենտրոնը, 2006թ. փետրվարին Տրապիզոնում սպանվել է կաթոլիկ հոգևորական Անդրեա Սանթորոն, Սամսունում դանակահարվել է վանահայր Ռենե Բռունիսեն, 2007թ. դեկտեմբերին Իզմիրում դանակահարվել է իտալացի վանահայր Ադրիանո Ֆրանչինին, 2010թ. սպանվեց Իսկենդերունի

[1] Kapusen rahiplerin gelişi: http://www.anadolukatolikkilisesi.org/samsun/tr/storia.pdf

կաթոլիկ եպիսկոպոս Լուիջի Պադովեզեն: Փաստերը վկայում են, որ Թուրքիան և՛ անցյալում, և՛ այսօր հեռու է կրոնական հանդուրժողականությունից, և զուր են պետական մակարդակով հնչեցվող կարծիքները, թե երկրում այլադավան և այլակրոն խմբերի հանդեպ հանդուրժողականությունը բարձր մակարդակի վրա է: Համենայնդեպս, տարբեր քրիստոնեական դավանանքների ուղղություններին պատկանող եկեղեցիների վերականգնմանը և վերանորոգմանն ուղղված քաղաքականությունը ևս համոզիչ չէ և կրում է ձևական բնույթ:

Երևում է, որ թուրքական իշխանություններն առանձնապես չեն ընդունում առկա խնդիրը, և ցանկացած միջադեպ, որն ավարտվում է մարդկային զոհերով, վերջիններիս կողմից ընկալվում է որպես մարդու իրավունքների հերթական խախտում, բայց ոչ ատելության և կրոնական անհանդուրժողականության հետևանք, որն աստիճանաբար կարող է կլանել հասարակության ավելի լայն շերտերի: Անգամ այսօր, երբ թուրքական իշխանությունները ԵՄ-ին անդամակցման ճանապարհին խոստացել են ազատականացնել քրիստոնյաների իրավունքները սահմանափակող օրենսդրությունը, երկրի քրիստոնյա բնակչությունը (0,1%) դեռևս բախվում է անվերջանալի սահմանափակումների և խոչընդոտների: Դրա մասին է վկայում նաև Միացյալ Նահանգների կրոնական ազատությունների հանձնաժողովի ամենամյա զեկույցը, որտեղ նշվում են տարբեր դավանանքների ազատության նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ցուցաբերող 16 պետությունները, որոնց մեջ է նաև Թուրքիան: Ինչպես նշում է ԱՄՆ միջազգային կրոնի ազատության հարցերով հանձնաժողովի ներկայացուցիչ Նինա Շինը, Թուրքիան այժմ օգտա-

գործում է ավելի բարդ մեթոդներ, որոնք հանգեցնում են քրիստոնեական և ոչ մահմեդական փոքրամասնությունների չեզոքացմանը: Թուրքիան մահակի փոխարեն օգտագործում է բյուրոկրատական սահմանափակումները, որոնք խանգարում են եկեղեցիներին շարունակել իրենց գործունեությունը[1]:

Քրիստոնյաների նկատմամբ ահանդուրժողականության հրահրման և տարածման մեջ իրենց լուման են ներդնում թուրքական որոշակի գաղափարախոսությամբ առաջնորդվող լրատվամիջոցները: Ցանկացած քրիստոնեական եկեղեցու օրինական գործողություն լրատվամիջոցները ներկայացնում են բացասական լույսով, այն աստիճան, որ նույնիսկ որոշ եկեղեցիներ ներկայացվում են որպես ահաբեկչական կառույցներ: Եվ ինչպես նշել էր Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական պատրիարքը, քրիստոնյաները Թուրքիայում համարվում են երկրորդ կարգի մարդիկ:

Ինչպիսի՞ն է հայ կաթոլիկների նկատմամբ վերաբերմունքն այդ երկրում: Թուրքական մամուլում սույն համայնքի մասին ցանկացած անդրադարձ շահարկման առարկա է դառնում: Քուրշաթ Քահրամանօղլուն, օրինակ, իր հոդվածներից մեկում հայ առաքելականների և կաթոլիկների մարդկային որակների համեմատական եզրեր է անցկացնում, փորձում քողարկված բացասական երանգներով սրել երկու համայնքների անդամների հարաբերությունները: Այսպես. *«...չնայած հայ կաթոլիկները թվաքանակով քիչ են, սակայն իրենց հայ առաքելա-*

[1] Վաշինգտոնում Անկարայի դաշնակիցները ձգտում են լռեցնել Թուրքիայի հակաքրիստոնեական քաղաքականության հասցեին հնչող քննադատությունը, http://news.am/arm/news/98168.html

կաններից ավելի վեր են դասում և նրանց մի տեսակ վերևից են նայում»[1],- նշում է հեղինակը:

Խնդիրն այն է, որ այս համեմատությունն արվել է Հրանտ Դինքի և հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչ, վերլուծաբան Էթիեն Մահչուփյանի միջև: Ակնհայտ է, որ հայերի նկատմամբ թուրքական քաղաքականությունում դավանանքային տարբերությունների գործոնն էական դեր չի խաղում:

Ի տարբերություն հայոց և հունաց պատրիարքների՝ կաթոլիկ եկեղեցիների ղեկավարների նշանակման հարցում պետության միջամտությունը համեմատաբար փոքր է: Այնուհանդերձ, նկատենք նաև, որ վերջին երկու տարիներին Վատիկանի ներկայացրած պահանջները, այդ թվում և եկեղեցու իրավական կարգավիճակի հարցը, մերժվել են իշխանությունների կողմից՝ առանց որևէ բացատրության[2]:

Փաստացի, թեև այս համայնքները գոյություն ունեն և պետության կողմից ճանաչված են որպես գործող, իրավական տեսանկյունից, սակայն, ճանաչված չեն և չունեն որևէ կարգավիճակ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ կաթոլիկները երկփեղկված և անջատաբար գործող համայնքներ են, որի հիմնական պատճառն այս եկեղեցիների հետևորդների էթնիկ խայտաբղետությունն է: Սակայն ավելի լուրջ համագործակցության ձև են մնում միջեկեղեցական հարաբերությունները, որտեղ շոշափվում են կրոնական, համայնքային հեռանկարների հարցերը:

[1] *Kürşad Kahramanoğlu,* Etyen'i Anlamak, Birgun gazetesi, 27 Ağustos 2008.
[2] Католической церкви отказано в юридическом статусе на территории Турции, http://www.cnlnews.tv/2011/01/22/turkey/

Թուրքիայում կաթոլիկներին մեղադրում են նաև միսիոներական գործունեության մեջ, ինչն ուռճացված է և կրում է զուտ քարոզչական նպատակ։ Իրականում այսպես կոչված կրոնական առաքելություններ Թուրքիայում կատարում են բողոքական տարբեր հարանվանություններ։ Նրանց վարած քարոզչության հետ են կապված այն պնդումները, որ վերջիններիս կատարած կրոնափոխության արդյունքում Թուրքիան կբռնի քրիստոնեացման ուղին, և այդ պատճառով նրանց նկատմամբ հասարակության և ուժային կառույցների վերաբերմունքն ավելի խիստ ու ագրեսիվ է արտահայտված։ Ե՛վ կաթոլիկներին, և՛ բողոքականներին վախի մթնոլորտում պահելու նպատակով թուրքական կողմը, մուսուլման հասարակությանն այդ համայնքների դեմ ուղղորդելու համար, օգտագործում է այն թեզը, թե իբր դրանք միսիոներական կետեր են, ինչը, բնականաբար, իսլամական միջավայրի համար բավական զգայուն թեմա է։ Թուրքիայում անշարժ գույք և հողատարածքներ գնող օտարները կրոնական «ազատության» քողի տակ, իբր թե սադրանքների և տարբեր խոստումների միջոցով, փողով, հատկապես երիտասարդների շրջանում կրոնափոխության գաղափարներ են տարածում և օգտվելով տեղի տնտեսական դժվարություններից՝ ժողովրդին կրոնափոխության են տանում։ Նման մոտեցման պատճառով, բնականաբար, միսիոներությունը Թուրքիայում ընկալվում է որպես երկրի կրոնական միասնականությանը, անգամ տարածքային ամբողջականությանը սպառնացող գործընթաց։ Ինչպես իրավացիորեն նկատել է Թուրքիայում երկար տարիներ քահանայած կաթոլիկ վանահայր Ֆելիքս Քյորները, եթե քեմալական գաղափարախոսությամբ առաջ-

նորդվող շրջանակներում գլխաշորը երկրի աշխարհիկ կարգերին հարվածող խորհուրդ ունի, ապա խաչն այս երկրում ընկալվում է որպես Թուրքիայի ավարտի սկիզբ:

Հաջորդն այն է, որ քարոզչական գործունեությունը բնութագրող թուրքերեն *«misyonerlik faaliyetleri»* բառակապակցությունը, որն օգտագործվում է ինչպես պաշտոնական քննարկումներում և զեկույցներում, այնպես էլ հասարակության ազգայնամոլ հատվածների կողմից, ըստ թուրք վերլուծաբան Գյուզիդե Ջեյհանի՝ ունի խիստ բացասական ենթատեքստ: *«Misyonerlik faaliyetleri»*-ն կարող է թարգմանվել որպես քարոզչական գործունեություն, որը չի պարունակում այդ գործունեության ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական գնահատական: Սակայն *«misyonerlik faaliyetleri»*-ն թուրքերենում ունի քարոզչական դավադրության, խառնակչության և ինտրիգի ենթաիմաստներ[1]:

Ընդհանրապես, բողոքական միսիոներական խմբերը, ըստ մեզ, երկրի կրոնական համայնապատկերում փոփոխություն մտցնելու համար բավական նվազ հնարավորություններ ունեն, այն էլ՝ իսլամական մեծամասնության պարագայում: Պարզապես ուռճացնելով նրանց գործունեությունը՝ թուրքական տարբեր խմբավորումներ հարստացնում են երկրի թշնամիների ցանկը: Իրականում միսիոներական գործունեություն բողոքականները ծավալում են ոչ այնքան թուրքերի, որքան բռնի իսլամացված հայերի, ասորիների, անգամ հույների սերունդների շրջանում: Հետաքրքիր է, որ իսլամից բողոքականության անցումը տեղի է ունենում նաև Ստամբուլի իսլամադավան գնչուների շրջանում, ինչը, համենայնդեպս, նոր երևույթ է:

[1] *Օթմար Օհրինգ, Գյուզիդե Ջեյհան,* Թուրքիայում կրոնական ազատությունների մասին հետազոտություն, «Կրոն և հասարակություն», N9, Երևան, 2009, էջ 139-140:

Հայ կաթոլիկների հարաբերություններն իսլամացված շերտերի հետ սահմանափակվում են միայն վերջիններիս կրթական հարցերով: Օրինակ, հայ կաթոլիկ Մխիթարյան դպրոցներ հաճախող իսլամացված հայերի սերունդները կամովին գալիս են այդ կառույցներ՝ հայեցի կրթություն ստանալու: Այստեղ խոսք անգամ չի կարող լինել այն մասին, որ դա արվում է ստիպողաբար, և թուրքական կողմի՝ միսիոներական գործունեություն ծավալելու համար հայ կաթոլիկներին հասցեագրված մեղադրանքները հիմնազուրկ են:

Կրոնական-ազգային փոքրամասնությունների նկատմամբ այսպիսի քարոզչության հետևանք է այն, որ Թուրքիայի քաղաքացիների 48%-ը չի ցանկանում ապրել քրիստոնյա, 54%-ը՝ հրեա հարևանի հետ[1]: Այնպես որ, ատելություն սերմանելով քրիստոնյա փոքրամասնությունների, այդ թվում՝ ամենամեծ քրիստոնեական համայնքի՝ հայերի նկատմամբ, թուրքական իշխանությունները և այդ գործին լծված «գործիքները» պարարտ հող են ստեղծում երկրի վերջնական ապաքրիստոնեացման համար: Այսօրինակ պայմանները քրիստոնյաներին թելադրում են ավելի զուսպ լինել իրենց կրոնական ազատություններում և բնակվել այդ երկրում «գետոյի» կարգավիճակում:

Ստամբուլի հայ կաթողիկե համայնքը

Թուրքիայի հայ կաթոլիկների համայնքային և հոգևոր-եկեղեցական կյանքի առաջին լուրջ փոփոխությունը, որն անմիջականորեն առնչվում է Ստամբուլին, 1928թ. Հռոմի որոշումն էր, ըստ

[1] Почти половина турков не хотят соседствовать с христианами, http://www.sedmitza.ru/news/2363764.html

որի՝ հայ կաթոլիկների պատրիարքարանը (ամբողջական անվանումը՝ «Կաթողիկոսական-Պատրիարքական Աթոռ Տանն Կիլիկիոյ») Ստամբուլից տեղափոխվեց Լիբանան։ Կ.Պոլսի նախկին նստավայրը ստացավ նոր կարգավիճակ՝ անվանվելով Արքեպիսկոպոսական Աթոռ, որի ազդեցությունը սահմանափակվում էր միայն Թուրքիայի հայ կաթոլիկներով։ Մեր կարծիքով՝ կրոնավարչական բնույթի նման փոփոխությունը պայմանավորված էր նախևառաջ Թուրքիայի հայ կաթոլիկների սակավաթվությամբ, քանի որ կաթոլիկադավան հայության մեծագույն մասը կենտրոնացել էր Մերձավոր Արևելքի արաբական երկրներում, Եվրոպայում և այլուր։ Հետևաբար, աշխարհով մեկ սփռված հայ կաթոլիկ համայնքների ղեկավարումը Լիբանանից ավելի դյուրին էր, քան Թուրքիայից, ուր ինչպես Հռոմի կաթոլիկ, այնպես էլ Հայ կաթողիկե եկեղեցին չունեին որևէ իրավական կարգավիճակ, որի բացակայության պայմաններում դժվար էր կանոնակարգել համայնքի բնականոն զարգացումը։ Այնպես որ, Ստամբուլը մնում է Թուրքիայի հայ կաթողիկե համայնքների կառավարման գլխավոր կենտրոնը, որը ղեկավարում է 93-ամյա արքեպիսկոպոս Հովհաննես Չոլաքյանը։

Համայնքը բաղկացած է մոտ 2000 անդամից, բավական կազմակերպված է, ունի ոչ միայն համայնքապատկան եկեղեցիներ (12 հատ), այլև բարեգործական կառույցներ, ինչը որոշակիորեն թեթևացնում է համայնքի առջև ծառացած խնդիրները։ Համայնքի ներսում մեծ աշխատանք են կատարում Երիտասարդական և Տիկնանց միությունները։ Շուրջ 50 երկսեռ անդամից բաղկացած Երիտասարդական միությունը համայնքի նեսում վարում է հոգևոր, բարեգործական և թատերական գործունեություն, իսկ

Տիկնանց միությունը զբաղվում է հիմնականում համայնքապատկան Ս.Հակոբ հիվանդանոցի հիվանդների խնամքով։

1940-1970-ական թվականներին արտագաղթի հիմնական հարվածը ստացավ մարդինահայությունը, այն աստիճան, որ քաղաքն այսօր լիովին դատարկվել է հայերից։ 1940-ականներին Մարդինի հայ կաթոլիկ բնակչությունը կազմել է 1612 հոգի, սակայն 1950-ական թվականներից սկսած՝ նկատվում է ծավալուն արտագաղթ դեպի արաբական երկրներ և արտահոսք դեպի Ստամբուլ[1]։

Հայ կաթոլիկներին, որոնց մեծ մասը զբաղվում էր ոսկերչությամբ, գրավում էր Ստամբուլի մեծ շուկան, որը ընտանեկան եկամուտների ապահովման լայն հնարավորություններ էր տալիս։ Մնացյալ հատվածի՝ Մարդինից Ստամբուլ տեղափոխվելը պայմանավորված էր անձնական դրդապատճառներով։ Ոմանք ցանկություն ունեին ստանալ ավելի լավ կրթություն, ոմանք՝ փնտրել աշխատանք, ոմանք՝ ապրել նոր, ավելի հարմարավետ ու ժամանակակից պայմաններում[2]։

Հեռանալով Մարդինց և հոծ բնակություն հաստատելով Ստամբուլի Թառլաբաշը թաղամասում՝ հայ կաթոլիկները կարողացան պահպանել իրենց ենթամշակութային ինքնությունը։ Նոր միջավայրը խոր տպավորություն թողեց և ազդեց այն բանի վրա, որ հետագա սերունդներն արդեն իրենց ստամբուլցի համարեցին։ Այս ադապտացման հետևանքով կտրուկ խզվեց կա-

[1] Մարդինի հայության զգալի հատվածը քաղաքաբնակ էր, որոշ մասն էլ բնակվում էր Դերիք գյուղում։ Քաղաքաբնակները բացառապես կաթոլիկներ էին, Դերիքում՝ առաքելադավաններ։ Մինչև 1965 թվականը Դերիք գյուղում կար 1200 հայ բնակչություն, իսկ այսօր մնացել են 391 հոգի։

[2] *Fadime Deli,* «Comportement communautaire en migration des Arméniens de Mardin», Séminaire mensuel de la Société des Etudes Arméniennes, Jeudi 10 février, 2005, p. 3։

պը բնօրրանի հետ, Մարդինի հայ կաթողիկե համայնքը կազմաքանդվեց, այսօր այն ընդգրկում է ընդամենը 4 հոգի։

Սակայն վերջին տարիներին ուշադրության կենտրոնում է հայտնվել Մարդինի Սուրբ Գևորգ Հայ կաթողիկե եկեղեցին։ 2012թ. այն վերադարձվեց տեղի հայ կաթողիկե սակավաթիվ համայնքին, որն էլ տեղեկացրեց, որ դեմ չի լինի, եթե Թուրքիայի հայերն իրենց ուժերով նորոգեն եկեղեցին, բայց ֆինանսական սուղ հնարավորությունները բավարար չեն վերականգնման համար[1]։ Սբ Գևորգը երկար տարիներ Թուրքիայի գյուղատնտեսության նախարարության կողմից օգտագործվել էր որպես պարարտանյութի (թունաքիմիկատների) և դեղորայքի պահեստ։ Վնասների փոխհատուցման և պատասխանատվության հարցը պետք է դրվեր սույն նախարարության վրա, որն, ինչպես նմանատիպ այլ դեպքերում, անտեսվեց։ Այն, ինչ այսօր մնացել է հայ կաթոլիկ համայնքից Մարդինում, 2 եկեղեցին է (բացի Սուրբ Գևորգ չգործող եկեղեցուց, կանգուն է սուրբ Հովսեփ եկեղեցին) և մի քանի հոգի, ու որևէ հույս չկա, որ համայնքը երբևէ կվերականգնի նախկին վիճակը։

Մի կողմից՝ շատ է խոսվում այն մասին, որ տեղի հայությունն ունի պետական քաղաքականության և ֆինանսների բացակայության հետևանքով առաջացած բազում չլուծված խնդիրներ, մյուս կողմից՝ ի հայտ են գալիս փաստեր, որ տարիների ընթացքում այդ երկրում ձևավորվել է հայկական կապիտալ։ Այսպես, 2010թ. դեկտեմբերին «Աքշամ» օրաթերթը տեղեկացրեց, որ հայկական կաթողիկե «Սուրբ Հակոբ» հիմնադրամը

[1] *Ayça Örer,* Ermenilere harap bir müjde, http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalDetayV3&ArticleID=1097243&CategoryID=77

նախատեսել էր Ստամբուլի կենտրոնական թաղամասում՝ Թաքսիմում գնել 48 հազար քմ հողատարածք, որի համար պատրաստ էր վճարել $150 մլն: Հիմնադրամը նախատեսում էր Թաքսիմում կառուցել առևտրի և մշակույթի կենտրոն: Չնայած Եվրամիության նոր պահանջները Թուրքիային ստիպել են փոխել օրենքները (օրինակ, ազգային փոքրամասնությունների հիմնադրամներին թույլատրվում է ձեռք բերել նոր գույք), բայց ներկայացված նախագիծը մերժվեց[1]: Խնդրով զբաղվող կառույցները, փաստորեն, դեմ գնալով Եվրամիության պահանջներին, խոչընդոտեցին հայկական հիմնադրամի նախաձեռնությանը մի պարզ պատճառով. նման քայլի դրական լուծման դեպքում համայնքը կարող էր կրկնապատկել ֆինանսական կարողությունները և հետագայում օգտագործել ի շահ համայնքի:

Հակառակ այն իրողության, որ կաթոլիկների նկատմամբ Թուրքիայում ձևավորվել է անհանդուրժողական մթնոլորտ և դա բացասաբար է անդրադառնում այդ համայնքների վրա, Ստամբուլի հայ կաթողիկե համայնքում տիրում է որոշակի աշխուժություն՝ կապված կրթական, հոգևոր-եկեղեցական և այլ խնդիրների հետ: Այսպես, 2010թ. ապրիլին «Անադոլու» լրատվական գործակալությունը տեղեկացրեց, որ Դիարբեքիրի վաքըֆների (կրոնական կալվածքներ) շրջանային վարչությունը վերականգնում է կաթոլիկ և բողոքական համայնքներին պատկանող եկեղեցիները: Շրջանային վարչության պետ Յաքուբ Աքթյուրքն իր հարցազրույցում մասնավորապես նշել է, որ իրենք պատրաստվում են ավարտին հասցնել 19-րդ դարի հայ-

[1] *Ercan Sarıkaya,* Ermeni Vakfı'nın 150 milyon dolarlık talebi reddedildi. Akşam, 06.12. 2010.

կական կաթողիկե և բողոքական համայնքներին պատկանող եկեղեցիների վերանորոգումը և դրանք հանձնել հասարակական շահագործման՝ տեղական ու նահանգային իշխանությունների հետ խորհրդակցելուց հետո[1]։

Հատկանշական է, որ փաստի վերաբերյալ լուռ դիտորդի դերում գտնվեց Թուրքիայի Հայ Կաթողիկե եկեղեցին, համենայնդեպս՝ չարձագանքեց թուրքական նահանգային իշխանությունների «աչք ծակող» նախաձեռնությանը։ Խնդիրն այն է, որ Դիարբեքիրում հայ կաթողիկե համայնք գոյություն չունի և անհասկանալի է, թե ում պետք է այն ծառայի։ Ի վերջո, 2010թ. ընթացքում Թուրքիայում հայկական եկեղեցիների վերանորոգման հետ կապված գործընթացը շարունակությունն էր հայ-թուրքական հարաբերությունների, բայց այս քայլով իշխանությունները միաժամանակ փորձում են մեղմել կաթոլիկ և բողոքական հոգևորականների սպանությունների հետ կապված Արևմուտքի զայրույթը՝ ցույց տալով, որ իրենց երկրում քրիստոնյաների նկատմամբ հանդուրժողականությունը գտնվում է բարձր մակարդակի վրա, և իրենց վերագրելով մշակութային երկխոսության գաղափարը։

Ստամբուլի կաթոլիկ համայնքի ծիրում գործող կառույցներից առաջին հերթին հիշատակման են արժանի Մխիթարյան միաբանության ենթակայության տակ գործող դպրոցները։

[1] Ermeni Katolik ile Protestan Cemaati kiliseleri restore ediliyor, http://www.emlakkulisi.com/29723_ermeni_katolik_ile_protestan_cemaati_kiliseleri_restore_ediliyor

Ստամբուլի հայ կաթողիկե համայնքի դպրոցները

Ստամբուլի հայ առաքելական և ավետարանական համայնքներին պատկանող դպրոցների կողքին հայության կրթադաստիարակչական գործում մեծ դերակատարություն են ունեցել և այսօր էլ ունեն Մխիթարյան դպրոցները: Մինչև Հայոց մեծ եղեռնը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ վայրերում գործում էին տասնյակ Մխիթարյան դպրոցներ: Սակայն ցեղասպանության տարիներին՝ 1915-1923թթ., ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Իզմիրի և կայսրության արևմտյան տարածքներում գործող Մխիթարյան դպրոցները հիմնահատակ ավերվեցին և ոչնչացվեցին, և միայն Ստամբուլի Մխիթարյան դպրոցները կարողացան խուսափել նման ճակատագրից:

1923թ. հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո արգելվեց օտարազգիների ուսուցանումը Ստամբուլի Մխիթարյան դպրոցներում: Դպրոցները դիտվեցին որպես փոքրամասնության վարժարաններ, որոնցում թույլատրվեց ընդունել միայն հայկական ծագմամբ աշակերտների, իսկ տնօրեններ նշանակվում էին միայն աշխարհականները՝ հոգևորականների փոխարեն, ելնելով լաիցիզմի (աշխարհիկության) դրույթներից:

Հետագայում՝ 1942-1943թթ., Թուրքիայի կրթության նախարարությունը փոքրամասնությունների վարժարանների փոխտնօրեններ է կարգում հիմնականում թուրքերի, ինչը չողջունվեց թե՛ համայնքի և թե՛ Մխիթարյան հայրերի կողմից[1]: Կառուցվածքային տեսանկյունից հայ համայնքի դպրոցներն անընդհատ ենթարկվել են փոփոխության, դրա արդյունքում Մխի-

[1] Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, հատոր Ա, Իսթանպուլ, 2008, էջ 48:

թարյան դպրոցները ևս ունեցան կորուստներ՝ հատկապես աշակերտների նվազման տեսքով: Կարևոր է փաստել, որ պետությունն օրենսդրորեն վերահսկողություն է սահմանում թե՛ դասավանդվող առարկաների, թե՛ դպրոցի ղեկավարման և ուսուցիչների նշանակման ոլորտում[1], և այն տարածվում է կրոնական-ազգային փոքրամասնություններին պատկանող բոլոր կրթական կառույցների վրա:

Այսօր Ստամբուլում գործում են Հայ կաթողիկե համայնքին պատկանող 4 դպրոցներ, որոնք ենթարկվում են կրթության նախարարությանը: Դրանք են՝

- Վիեննայի Մխիթարյան միաբանության Բանկալթիի վարժարան: Ունի մանկապարտեզ, նախակրթարան և միջնակարգ բաժիններ: Վարժարանը երկսեռ է[2]:
- Բոմոնթիի Մխիթարյան վարժարան[3]:
- Սամաթիայի Անարատ Յղութեան վարժարան:
- Բանկալթիի Անարատ Յղութեան վարժարան:

Ստորև բերվող Աղյուսակ 3-ում ներկայացված են հայ կաթողիկե համայնքի վարժարանների մասին 2010թ. տվյալներ[4], որտեղ բացակայում են Բանկալթիի Անարատ Հղության վարժարանի վերաբերյալ տեղեկությունները.

[1] *Ռուբեն Մելքոնյան,* Թուրքիայի հայության կրթական խնդիրների շուրջ, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (38), 2011, էջ 50:
[2] Վիեննայի Մխիթարյան միաբանության Բանկալթիի վարժարանի պաշտոնական կայք http://www.pangaltilisesi.k12.tr/default.asp
[3] Բոմոնթիի Մխիթարյան վարժարանի պաշտոնական կայք, http://www.bomontiermeni.k12.tr
[4] Տե՛ս *Ռուբեն Մելքոնյան,* Թուրքիայի հայության կրթական խնդիրների շուրջ, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (38), 2011, էջ 50:

Վարժարան	Մանկապարտեզ			Նախակրթարան			Լիցեյ			Ընդամենը		
	Ընդամենը	Տղա	Աղջիկ	Ընդամենը	Տղա	Աղջիկ	Ընդամենը	Տղա	Աղջիկ	Ընդամենը	Տղա	Աղջիկ
Բանվալթիի Միհիթարյան (մասնավոր)	41	20	21	175	80	95	65	29	36	281	129	152
Սամաթիայի Անարատ հղության Միհիթարյան	13	7	6	47	27	20	-	-	-	60	34	26
Բոսֆորի Միհիթարյան	1	-	1	23	18	5	-	-	-	24	18	6

Վերջին ժամանակաշրջանում Ստամբուլի Մխիթարյանների մոտ ուսանելու են գալիս ոչ միայն կաթոլիկ հայեր, այլև առաքելական համայնքի անդամներ, խառնամուսնություններից ծնված երեխաներ։ Այս առիթով հետաքրքիր պարզաբանումներ է տվել Պոլսո Մխիթարյան վարժարանի տնօրեն Գարեգին Պարսամյանը. *«Օրեցօր աճում են խառնամուսնությունները։ Նրանք սերունդ են տալիս։ Թեև այս երեխաներից ոմանք անձնագրով նշված են որպես մուսուլման, սակայն մեր դպրոցներում ստանում են հայ քրիստոնյայի դաստիարակություն։ Մեծանալու դեպքում իրենք են որոշելու իրենց ազգային ինքնությունը։ Ինչ վերաբերում է հայաստանցի երեխաներին, ապա անցյալ տարի մենք նրանց հարցով դիմեցինք կրթության նախարարություն՝ ընդգծելով, որ նրանք զրկված են ուսուցման իրավունքից, և մեր դիմումը դրական արձագանք գտավ։ Ամենայն հավանականությամբ, շուտով մեր դռները կբացենք նաև հայաստանցի երեխաների առաջ»*[1]։ Պահանջված կարգի համաձայն՝ նախկինում հայկական վարժարաններ կարող էին հաճախել միայն հայ ծնողներ ունեցող երեխաները, սակայն կրթության նախարարությունը փոխել է այդ կարգը։ Այժմ վարժարաններ կարող են հաճախել նաև այն երեխաները, ում ծնողներից միայն մեկն է հայ։ Հատկանշական է, որ այստեղ սովորում են ոչ միայն խառնամուսնություններից ծնված երեխաները, այլև իսլամացված հայերի սերունդները, ինչպես նաև ասորական և հունական ծագումով աշակերտներ։

[1] *Vercihan Zifliogiu,* Armenian schools open doors to a different audience, Hürriyet Daily News, 30.01.2011.

Չենք բացառում, որ թուրքական այս «սիրալիր» քաղաքականությունն ուղղված է այլ նպատակների: Մասնավորապես, իսլամացված հայերին հայկական կրթական հաստատություններ ընդունելով՝ շահագրգիռ պետական վերահսկող կառույցները, գրանցման միջոցով, որոշակի հստակեցում են մտցնում մուսուլման հայերի թվաքանակի և այլ հարցերում: Այնպես որ, այս գործընթացը՝ որքան էլ դրական ազդեցություն ունենա մուսուլման հայերի վրա, այնուամենայնիվ, կարող է պարունակել վտանգներ, ինչը ևս պետք է հաշվի առնել, մանավանդ որ իսլամացված հայերի՝ արմատներին վերադառնալու հանդեպ պետական բացասական դիրքորոշումը Թուրքիայում մնում է անփոփոխ:

Բանկալթիի հայկական վարժարանի աշակերտներն աչքի ընկան մի շարք համարձակ նախաձեռնություններով՝ թուրքական դասագրքերում հակահայկական արտահայտությունների հետ կապված: Թուրքիայի կրթության նախարարի հետ հանդիպման ժամանակ վարժարանի սաները հայտնել էին իրենց անհանգստությունը դպրոցական դասագրքերում առկա հակահայկական արտահայտությունների վերաբերյալ՝ շեշտելով, որ լավ կլինի, եթե դրանք հանվեն: Նախարարն էլ հանձնարարել է աշակերտներին՝ դասագրքերից հանել և իրեն ուղարկել հակահայկական արտահայտությունները: Հայ աշակերտները կատարել են հանձնարարությունը, դասագքրքերում առկա հակահայկական արտահայտությունները գրանցել և ուղարկել են նախարարին[1]:

Ի տարբերություն Բանկալթիի՝ Բոմոնթիի Մխիթարյան դպրոցը վերջին մի քանի տարիներին հայտնվել էր լինել-չլինելու

[1] Հայկական վարժարանը՝ լավագույններից մեկը Ստամբուլում..., http://daily.am/?p=4862&l=am

խնդրի առջև: Բանն այն է, որ դպրոցի շենքը «1936թ. հայտարարագրի» *(1936 Beyannamesi)* զոհ էր դարձել: Ի՞նչ է այդ հայտարարագիրը: 1936թ. հայկական, հունական և հրեական համայնքներից պահանջվեց ներկայացնել իրենց պատկանող բոլոր համայնքային կալվածքների ցուցակը, որը որպես հավելված կցվեց 1935թ. ընդունված 2762 թվակիր՝ Կալվածքների օրենքին և ստացավ «1936թ. հայտարարագիր» անվանումը: 1936-1971թթ. զանազան դրդապատճառներով մի շարք տներ, հողակտորներ կամ կալվածքներ կտակի, նվիրատվության կամ ուղղակի վաճառքի միջոցով փոխանցվեցին համայնքային տարբեր խորհուրդներին, սակայն, սկսած 1974 թվականից, թուրքական իշխանությունները հայտարարեցին, որ «1936թ. հայտարարագրում» չնշված կալվածքները չեն կարող համայնքային սեփականություն համարվել: Դրանից հետո իշխանությունների կողմից հարուցվեցին դատական գործեր, և Կալվածքների տնօրինության ու գանձապետարանի միջոցով այդ կալվածքները պետականացվեցին[1]:

Քաղքքյոյի սահմաններում գտնվող մի գույք վաճառելով վաքըֆն այն ժամանակվա օրենքների շրջանակներում Էմինե Թևֆիքա Այաշլըից գնել էր Ստամբուլի Շիշլի թաղամասի Արփասույու փողոցում գտնվող մի շենք և նույն՝ 1958թ. սկսած էլ խնդիրների էր հանդիպել: Սակայն, չնայած բոլոր բացասական երևույթներին, 1964 թվականից սկսել էր շենքն օգտագործել որպես Բոմոնթիի Մխիթարյան նախակրթարան: Այաշլըն, որը բազմաթիվ այլ անշարժ գույքերի տեր էր, որոնք նրա մահից հետո, որպես նվիրատվություն, հանձնվեցին Այաշի քաղաքապե-

[1] *Ռուբեն Մելքոնյան,* Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության, 1920-ականներից մինչև մեր օրերը, Երևան, 2010, էջ 33, տե՛ս նաև *Ավագյան Արսեն, Մելքոնյան Ռուբեն,* Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Երևան, 2009, էջ 32-48:

տարանին, վախճանվել էր հենց նույն թվականին, երբ իրականացվել էր հիշյալ շենքի վաճառքի գործարքը: Չնայած կառույցի վաճառքի գործարքը կատարվել էր 1958թ., Այաշի քաղաքապետարանը սկսել էր պնդել, թե դպրոցի շենքը Էմինե Թևֆիքա Այաշլրին պատկանած գույքերից մեկն է, և այդ տարեթվից սկսած անհանգստացրել էր վաքըֆին ու պահանջել շենքը դատարկել: Կառույցը, «36-ի հայտարարագրի» վրա հիմնված դատական որոշմամբ, 1985թ. փոխանցվել էր Այաշի քաղաքապետարանին: Վաքըֆի ղեկավարությունը, որն ստիպված էր վարձ վճարել այն շենքի համար, որը գնել էր ինքը, դիմել էր դատարան՝ 2011 թվականին ուժի մեջ մտած այն օրենքի դրույթում տեղ գտած որոշման շրջանակներում, որը նախատեսում է հասարակական հաստատությունների անվամբ գրանցված գույքերի վերադարձը համայնքային վաքըֆներին: Ստամբուլի 13-րդ հիմնարար իրավունքների դատարանում քննված սույն դատական գործն ավարտվեց հետևյալ վճռով՝ դպրոցական շենքը վերադարձնել վաքըֆին: Բոմոնթիի Մխիթարյան վաքըֆի ղեկավար Ռիտա Նուրնուրը գոհունակություն է հայտնել այս փաստի կապակցությամբ՝ ասելով, թե սույն դատական վճռի շնորհիվ վերացել է նաև անորոշությունը դպրոցի ապագայի հարցում[1]: «Հյուրիեթ դեյլի նյուզ» թերթին տված հարցազրույցում հիմնադրամի ղեկավար Ռիտա Նուրնուրը նշել էր, որ արդարությունը կայացավ՝ ավելացնելով, որ հիմնադրամի գլխավոր տնօրեն Ադնան Էրթեմն էր խորհուրդ տվել դիմել դատարան[2]:

[1] Bomonti Mıhitaryan Okulu'nun 27 yıllık mağduriyeti son buldu, http://agos.com.tr/haber.php?seo=bomonti-mihitaryan-okulunun-27-yillik-magduriyeti-son-buldu&haberid=3197, 2012/11/03:

[2] *Vercihan Zifliogłu,* Historic school returned, http://www.hurriyetdailynews.com/historic-school-returned.aspx?pageID=238&nID=34105&NewsCatID=339 , November/07/2012

Բոմոնթիի Մխիթարյան դպրոցի հետ կապված հիշատակման է արժանի այն սկանդալը, որի մեջ հայտնվեց կրթարանը. դպրոցի շենքի մուտքին փակցված է եղել Քեմալ Աթաթյուրքի հայտնի ***«Երջանիկ եմ, որ թուրք եմ»*** արտահայտությամբ ցուցանակը: Վարժարանի տնօրինությունը պարտադրեց տեղական ինքնակառավարման մարմիններին հանել այն, ինչը դժգոհությունների ալիք բարձրացրեց ինչպես հասարակությունում, այնպես էլ մամուլում: Փոքրամասնություններին պատկանող դպրոցներում թուրքեր չեն սովորում, և հետաքրքիր է, որ հատկապես նման դպրոցներն են հայտնվում այդպիսի իրավիճակում:

Այս կապակցությամբ հետաքրքիր պարզաբանում է անում հայ համայնքի ներկայացուցիչ Սասուն Էսթուքյանը. *«Սա հայերին և դպրոցում կրթություն ստացող հայ երեխաներին ուղղված ուղերձ է: Ավելին, Թուրքիայի ազգային հիմնի կատարման մրցույթները անց են կացվում առաջին հերթին ազգային փոքրամասնությունների դպրոցներում»:* Նույն իրավիճակում է հայտնվել Սամաթիայի թաղամասի առաքելական համայնքին պատկանող Սահակյան-Նունյան հայկական դպրոցը: Դպրոցի հոգաբարձու Ֆիլոր Ուլուքը բավական հիմնավոր պարզաբանումներ է տալիս՝ նշելով, որ *«սեփական էթնիկ ինքնությունը մերժող մի ժողովուրդ ինչպե՞ս կարող է սեփական լեզվով ուսում ստանալ: Մեր երեխաները մեզանից հարգանք են պահանջում: Երեխաս մի օր ինձ ստախոս անվանեց, իմ այն հարցին, թե ինչո՞ւ, պատասխանեց, որ մենք հայ ենք, իսկ դպրոցում մեզ ասում են, որ դուք թուրք եք»*[1]:

[1] *Mehmet Akgül,* Bu fotoğraftaki yanlışı bulun, http://www.evrensel.net/news.php?id=14753

Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ ազգային փոքրամասնությունների հանդեպ վարվող պետական քաղաքականությունում, անկախ նրանից, թե ինչ լծակներ ու մեթոդներ են ընտրվում, միևնույն է, դավանանքային տարբերությունը (լինի առաքելական, թե հայ կաթոլիկ) էական դեր չի կատարում. առաջնայինն ազգայինն է, և այսպիսի խնդիրների առաջ են կանգնում ոչ միայն վերոհիշյալ համայնքների անդամները, այլև նրանց համայնքապատկան կառույցները:

Անկախ այս իրադարձություններից, Մխիթարյան դպրոցները, ըստ թուրքական աղբյուրների, բավական բարձրորակ կրթություն են ապահովում: Վարժարանի աշակերտների բարձր առաջադիմության շնորհիվ 2012թ. Բանկալթիի վարժարանը Ստամբուլի 917 վարժարանների շարքում հայտնվել է լավագույն տասնյակում[1]: Բոլոր շրջանավարտները հեշտությամբ հաղթահարում են բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու քննությունները, և չկա մի շրջանավարտ, որը ցանկության դեպքում չկարողանա ընդունվել աշխարհի լավագույն համալսարաններ:

Անկարայի հայ կաթողիկե համայնքը

Հատկանշական է, որ Անկարայի հայ կաթոլիկները 1915թ. հետո վերածվեցին ինքնամփոփ համայնքի՝ մասնակցություն չունենալով Թուրքիայի հայության խնդիրներին: Ցեղասպանության հիշողությունները դեռ թարմ էին միջին սերնդի մոտ, և նման պարագայում, երբ իշխում էր վախի մթնոլորտը, դժվար էր

[1] Pangaltı Mıkhitaryan Ermeni Lisesi İstanbul'un en başarılı 10 Lise sıralamasında ilk 10 da, http://hyetert.blogspot.com/2012/04/pangalt-mkhitaryan-ermeni-lisesi.html

սպասել դրական զարգացումներ: Իսկ վերջին տարիներին դրան ավելացան նաև Թուրքիայի կաթոլիկ հոգևորականների սպանությունները, ինչն էլ ավելի բացասական ներգործություն ունեցավ հայ կաթողիկե համայնքի վրա:

Ուծացման խնդիրն Անկարայի հայ կաթոլիկների մոտ դրսևորվեց առավելապես մայրենի լեզվի կորստյամբ: Եթե 19-րդ դարավերջին, ըստ որոշ ականատեսների, ընտանիքներում մեկ-երկու նախադասություն արտասանվում էր հայերենով, ապա հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո տարիների ընթացքում հայերենի գործածությունն իսպառ դուրս մղվեց կենցաղից: Թուրքերենը կիրառելի դարձավ անգամ եկեղեցում[1]:

Թուրք պատմաբան Իլբեր Օրթայլուի կարծիքով՝ Անկարայի հայ կաթոլիկներն իրենք են էթնիկ և կրոնական ընտրության պարագայում նախապատվություն տվել կրոնական ինքնությանը՝ համարելով իրենց ոչ թե հայեր, այլ միայն կաթոլիկներ[2]: Պատմաբանը չի մատնանշում, թե որն է այդ նախապատվության իրական պատճառը՝ արժեզրկելով իր «հայտնագործությունը»: Մինչդեռ հետազոտող Գևորգ Հանջին իր «Անկարայի հայ կաթոլիկները» ուսումնասիրության մեջ հակափաստարկ է ներկայացնում պատմաբանին: Ըստ Գևորգ Հանջիի՝ մայրաքաղաքի հայ կաթոլիկները հասարակական ճնշման պատճառով է, որ խուսափում են իրենց երեխաներին հայկական անուններ տալ (*նախապատվություն են տալիս լատինա-*

[1] *Ömer Türkoğlu,* 19.yy' dan 20.yy'a geçiş Sürecinde Ankara, Atılım Üniversitesi Rektörlüğü Atatürk İlkeleri Ve İnkılap Tarihi Bölüm Başkanlığı tarafından düzenlenen konferans çıkışından, Ankara, 14.10.2009.

[2] Ortaylı, İlber, "19.yüzyılda Ankara", in Enis Batur, (der), *Ankara Ankara*, İstanbul: Yapı Kredi Yayınları, 1994, p. 110.

կան և ֆրանսիական անուններին, օրինակ՝ Հանրի, Ժակլին, Մելիսա և այլն- Ս.Ա.) և իրենց ավելի շատ որպես կաթոլիկներ, քան թե հայեր են ընկալում[1]:

Սա վառ օրինակն է այն բանի, որ թուրք հասարակության ճնշման արդյունքում «էթնիկ ինքնությունը» տարիների ընթացքում աստիճանաբար ձևափոխվել է «կրոնական ինքնության»: Այսպիսի սահուն անցումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ տվյալ էթնիկ խումբն արտաքին բացասական ազդակների դեմ պայքարում (*ֆիզիկական բնաջնջման երկյուղի և այլ պատճառներից ելնելով*) կրում է «պարտություն», բայց միաժամանակ զոյատևում է կրոնական ինքնության շրջանակներում: Որպես հետևանք նշենք, որ մարդահամար անցկացնող պետական կառույցները թեև կաթոլիկների վերաբերյալ բաց տեղեկություններ չեն հայտնում, սակայն ինչպես Անկարայի հայ կաթոլիկներին, այնպես էլ այլ էթնիկ կաթոլիկներին գրանցում են ոչ թե ըստ էթնիկ, այլ կրոնական պատկանելության:

Մյուս կողմից՝ այս հարցում կարևոր դեր է խաղում նաև բնակավայրը: Մասնավորապես, Անկարայում բնակվելը նրանց համար առաջացրել է «մայրաքաղաքի քաղաքացի» լինելու սոցիալական կարգավիճակ, որի պատճառով, թերևս, Ստամբուլը և այնտեղի հայությունն ընկալվում են որպես ոչ իրենց հավասար: Հաճախ «փոքրամասնություն» եզրը շատ ավելի համազոր է դառնում «օտար» հասկացությանը, հետևաբար հայ կաթոլիկները, և ոչ միայն նրանք, բավական արագ ինտեգրվում-ձուլվում են թուրքական միջավայրում, որպեսզի չտարբերվեն մեծամասնությունից: Իսկ նման ինտեգրմանը նպաստող առաջին գործոնը,

[1] *Hancı Kevork,* "Ankaralı Ermeni-Katolikler," *Birikim* 73, 1995, Mayıs: s. 35-36.

բնականաբար, լեզուն է, որն Անկարայի հայ կաթոլիկները, ինչպես նշվեց, վաղուց կորցրել են: Պատճառների շարքում կարելի է ընդգծել տեղի հայկական դպրոցների բացակայությունը:

Ի հավելումն վերն ասվածի նշենք, որ թուրք հետազոտող Այշեգյուլ Քոմշուօղլուն, խոսելով Անկարայի հայ համայնքի մասին, նույնպես փաստում է, որ միատարր մշակութային կյանքին ինտեգրվելու հետևանքով մայրաքաղաքի հայ կաթոլիկների մեջ աստիճանաբար թուլացել է էթնիկ ինքնագիտակցությունը, որն էլ իր հերթին արտահայտվել է հայկական համայնքի (*Թուրքիայի ընդհանուր հայ համայնքի*- Ա.Ս.) հետ հարաբերությունների մասնակի կորստով[1]:

Ինչպես նշում են որոշ ականատեսներ, հայերն Անկարայում հայ լինելու մասին հիշում են այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը պատահաբար հիշեցնում է: Հայերենը, գործածական չլինելով, գնահատվում է զուտ շուկայական իրականության տեսակետից[2]: Նույնիսկ լեզվի հարցում երկու տարբեր դավանանքի անկարայաբնակ հայերը տարբեր մոտեցումներ ունեն: *«Ես չեմ խոսում հայերեն, բայց կուզենայի, որ իմ զավակները գիտենային մեր լեզուն: Անկարայում հայերը հայերեն չեն խոսում, իսկ Ստամբուլում հայերեն իմանալը կարող է պետք գալ: Եթե Անկարայում դպրոց լիներ, երեխաները կգնային: Իմ փոքր եղբայրը լավ գիտե հայերեն, բայց նա սովորել է Ստամբուլում»,*- ասում է առաքելական Մարտիրոսը: Հակառակ Մարտիրոսի՝ այլ կարծիքի է կաթոլիկ Հանրին. «*Այստեղ ոչ մի տեղ հայերենը*

[1] *Komşuoğlu A.,* Türkiye Ermenilerinin Siyasal Tutum ve Davranışları Üzerine Notlar, Istanbul Universitesi, SBF Dergisi, 62/1, Istanbul, 2006, s. 151.

[2] *Ա.Հարությունյան,* Հայեր՝ առանց հայերենի և միայն ծնողներով, «ԱԶԳ» օրաթերթ, N 218, 04-12-2004:

պետք չէ, դպրոց էլ չկա Անկարայում: Իմ զավակներին հայերենը ոչինչ չէր տա»[1]:

Համեմատության համար նշենք, որ Անկարայում բնակվող առաքելական հայերն ավանդույթների հարցում ավելի հետևողական են և ցանկանում են պահպանել հայկական մշակույթը, որն առավելապես համարվում է արևելյան: Մինչդեռ հայ կաթոլիկներն ավելի արևմտյան կողմնորոշում ունեն և ցանկանում են որքան հնարավոր է շուտ մոդեռն դարձնել համայնքը և ինտեգրվել Եվրոպային[2]: Այսինքն՝ տարբեր դավանանքի հայերի մեջ ի հայտ են գալիս նաև քաղաքակրթական՝ արևելյան և արևմտյան կողմնորոշումները:

Այս բոլոր խնդիրներին զուգահեռ՝ նկատելի է, որ Անկարայի հայ կաթողիկե համայնքը «ծերանում» է: Անկարայում բնակվող հայ կաթողիկե համայնքի ներկայացուցիչ, 78-ամյա Մելիսան նշում է, որ տարիների ընթացքում Անկարայի հայության մեծ մասը (*հատկապես երիտասարդությունը*- Ա.Ս.)՝ նեռաոյալ իր հարազատները, արտագաղթեցին ԱՄՆ, և ինքը միայնակ է հոգ տանում իր մասին: Միայն քրիստոնյա համայնքն է[3], որ կարողանում է նեցուկ լինել իրեն: *«Ես 25 տարուց ի վեր բնակվում եմ այս տանը: Հարևան թուրք կանանցից մեկը մի օր ինձ հարցրեց՝ դու հայ ես, չէ՞, իսկ ես ասացի, որ <u>տեղացի եմ</u>»*[4],- ասում է Մելիսան:

[1] Նույն տեղում:

[2] *Atauz, Akın,* "Kale ve Sur: Ankara Kal'ası" in Tunç, Güven; Figen Özbay (der.), *Şehrin Zulası Ankara Kalesi*, İstanbul: İletişim Yayınları, 2004, p. 140.

[3] Անկարայում, բացի կաթոլիկ և հայ առաքելականներից, բնակվում են նաև քրիստոնեական այլ դավանանքի ներկայացուցիչներ՝ հայ ավետարանականներ, լատինածես կաթոլիկներ (հիմնականում թուրքախոս), հույն և ասորի ուղղափառներ:

[4] Dr. *Felix Körner,* Türkiye ve Almanya'da Dini Azınlıklar- *St. Térèse Kilisesi örneğinde, Göç ve Entegrasyon – Almanya ve Türkiye'de Azınlık-Çoğunluk İlişkileri, Ankara. 2008, s. 185.*

Գերմանացի կաթոլիկ հոգևորական Ֆելիքս Քյորները, հետազոտելով Անկարայի հայ համայնքի դրությունը, փաստում է, որ մայրաքաղաքի հայկական գերեզմանները դիտավորյալ ոչնչացվում են, իսկ շիրմաքարերի վրա եղած խաչերը՝ կոտրվում[1], ինչը թուրքական իշխանությունները փորձում են բացատրել եղանակային կամ այլ անտրամաբանական պատճառաբանումներով։

Ի տարբերություն Ստամբուլի՝ Անկարայի հայ կաթողիկե համայնքը կազմակերպված չէ։ Սա Հայ Կաթողիկե եկեղեցու բացթողումներից է։ Թուրքիայում կաթոլիկ հոգևորականների նկատմամբ հալածանքները, նրանց սպանությունները կարող են հոգեբանական ներգործություն ունենալ համայնքներն սպասարկող քահանաների վրա։ Նույնիսկ Ստամբուլի նույնադավան համայնքի հետ որևէ առնչություն չունեն։ Միայն առիթից առիթ քաղաք են այցելում Ստամբուլի քահանաները, որոնք փորձում են գոնե համախմբել շուրջ 60 ընտանիք ունեցող համայնքը։ Փաստացի այսօր Անկարայի հայ կաթոլիկները սեփական եկեղեցի չունեն, իսկ դա կնպաստեր համախմբմանը, բայց Թուրքիայում նման հարց բարձրացնելը կապված է վարչահիրավական մեծ դժվարությունների հետ։ Այս ամենի հետևանքով հայ կաթոլիկներն ստիպված են հավաքվել ֆրանսիական եկեղեցում, որտեղ քարոզները կարդացվում են միայն թուրքերեն։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ չնայած հայ կաթոլիկները թվաքանակով փոքր են՝ մոտ 3500, այդուհանդերձ, համայնքապատկան կառույցների հետ միասին որոշակի դերակատարում ունեն Թուրքիայի հայության կազմակերպման հար-

[1] Նույն տեղում, s. 184.

ցում։ Այսօր Ստամբուլի հայ կաթողիկե համայնքը գլխավորապես բաղկացած է գավառներից այստեղ տեղափոխված հայ կաթոլիկներից։ Ստամբուլի հին ավանդական հայ կաթոլիկ շերտը փոքր տոկոս է կազմում։ Հայկական դպրոցներ և սեփական եկեղեցի չունենալու պատճառով կազմակերպչական տեսանկյունից, ցավոք, Անկարայի հայ կաթողիկե համայնքի ապագան ևս մշուշոտ է։

Հոգևոր-եկեղեցական կյանքում առաջիկայում լուրջ հարց է լինելու Հայ կաթողիկե նոր ղեկավարի ընտրությունը՝ հաշվի առնելով, որ ներկայիս ղեկավար Հովհաննես Չոլաքյանը 93 տարեկան է։ Այս պարագայում, կարծում ենք, թուրքական իշխանությունները կցանկանան հայ կաթոլիկների դրածո ղեկավար նշանակել։ Ակնհայտ է նաև, որ քրիստոնյա փոքրամասնությունների հոգևոր առաջնորդների ընտրության հարցում թուրքական կողմը չի պատրաստվում զիջումների գնալ անգամ միջազգային ճնշումների դեպքում և ամեն կերպ փորձում է միջամտել այդ համայնքների ներքին կազմակերպչական հարցերին։

Ինչ վերաբերում է հայ կաթողիկե համայնքի դպրոցներին, ապա դրանք ունեն հայ ուսուցիչների պակաս, և ժամանակի ընթացքում հավանաբար այդ բացը կծածկվի թուրքերով, ինչը չի խրախուսվում համայնքի կողմից։

Չնայած ներկայում հայ կաթողիկե համայնքում կան որոշակի դրական միտումներ կրթական և այլ ոլորտներում, այդուհանդերձ, դիտարկելով վերջին 30 տարիների համայնքի նվազման միտումները՝ կարելի է ասել, որ այն կանգնած է գոյապահպանության լուրջ խնդրի առջև։

Աղբյուրներ և գրականություն

1. *Աղավնի Հարությունյան,* Հայեր՝ առանց հայերենի և միայն ծնողներով, «ԱԶԳ» օրաթերթ, N 218, 04-12-2004:
2. *Ավագյան Արսեն, Մելքոնյան Ռուբեն,* Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Երևան, 2009:
3. *Բյուզանդ Եղիայան,* Հայ կաթոլիկ և ավետարանական հարանվանությանց բաժանումը ԺԹ դարում, Լիբանան-Անթիլիաս, 1971:
4. *Թորգոմ Փոսթանճեան,* Հայաստանեայց եկեղեցին եւ միւսները, Լոս Անճելոս, 2005, էջ 192:
5. Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, Հատոր Ա, Իսթանպուլ, 2008:
6. Համայնապատկեր Վիեննական Մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, հատոր Բ, Իսթանպուլ, 2008:
7. Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979:
8. Մեր նահատակ կղերականները, «Մասիս», ամսագիր, ապրիլ, Պեյրութ, 2011, էջ 22-30:
9. *Մակարոֆ Նուբար,* «Դեյր-Էզ-Զորի Աքսորյալը», Երևան, 2001:
10. *Ռուբեն Մելքոնյան,* Թուրքիայի հայության կրթական խնդիրների շուրջ, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (38), 2011, էջ 45-52:
11. *Ռուբեն Մելքոնյան,* Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության, 1920-ականներից մինչև մեր օրերը, Երևան, 2010:
12. *Տաթևիկ Խաչիկյան,* Միսիոներությունը Թուրքիայում, «Կրոն և հասարակություն», N9, Երևան, 2009, էջ 35-44:
13. *Օթմար Օհրինգ, Գյուզիդե Զեյհան,* Թուրքիայում կրոնական ազատությունների մասին հետազոտություն, «Կրոն և հասարակություն», N9, Երևան, 2009, էջ 135-149:

Օտարալեզու գրականություն

1. *Atauz, Akın,* “Kale ve Sur: Ankara Kal’ası” in Tunç, Güven ; Figen Özbay (der.), Şehrin Zulası Ankara Kalesi, İstanbul: İletişim Yayınları, 2004.
2. *Davut Kılıç,* “1915’te Tehcir Edilmeyen Ermeniler”, Ermeni Arastırmaları 1. Türkiye Kongresi Bildirileri, II, Ankara 2003.
3. *Durmuş Yılmaz,* Fransa'nın Türkiye Ermenilerini Katolikleştirme Siyaseti, Selçuk Üniversitesi Vakfı Yayınları, Konya, 2001:
4. *Ercan Sarıkaya,* Ermeni Vakfı'nın 150 milyon dolarlık talebi reddedildi. Akşam, 06.12. 2010.

5. *Fadime Deli,* «Comportement communautaire en migration des Arméniens de Mardin», Séminaire mensuel de la Société des Etudes Arméniennes, Jeudi 10 février, 2005.
6. *Felix Körner,* Türkiye ve Almanya'da Dini Azınlıklar- St. Térèse Kilisesi örneğinde, Göç ve Entegrasyon–Almanya ve Türkiye'de Azınlık-Çoğunluk İlişkileri, Ankara, 2008, s. 183-188.
7. *Fuat Dündar,* Türkiye Nüfus Sayımlarında Azınlıklar, Istanbul, 1999.
8. *Fuat Dündar,* Modern Turkiyenin şifresi. İttihat ve Terakki'nin etnisite muhendisliği (1913-1918), İstanbul, 2008 (2-inci baskı).
9. *Hancı, Kevork,* "Ankaralı Ermeni-Katolikler," Mayıs, Birikim 73, 1995, s. 35-36.
10. *Komşuoğlu A.,* Türkiye Ermenilerinin Siyasal Tutum ve Davranışları Üzerine Notlar, Istanbul Universitesi, SBF Dergisi, 62/1,Istanbul, 2006, s.149-164.
11. *Kürşad Kahramanoğlu,* Etyen'i Anlamak, Birgun gazetesi, 27 Ağustos 2008
12. *Ortaylı, İlber,* "19.yüzyılda Ankara", in Enis Batur, (der), Ankara Ankara, İstanbul: Yapı Kredi Yayınları, 1994.
13. *Ömer Türkoğlu,* 19.yy' dan 20.yy'a geçiş Sürecinde Ankara, Atılım Üniversitesi Rektörlüğü Atatürk İlkeleri Ve İnkılap Tarihi Bölüm Başkanlığı tarafından düzenlenen konferans çıkışından, Ankara, 14.10.2009:
14. UN Human Rights Instruments, HRI/CORE/TUR/2007, 8 July 2008.
15. *Yusuf Halaçoğlu,* Ermenilerin Suriye'ye nakli: sürgün mü, soykırım mı?: belgeler, Ankara: Ankara Ticaret Odası, 2004.
16. *Vercihan Zifliogiu,* Armenian schools open doors to a different audience, Hürriyet Daily News, 30, 01, 2011.

Համացանցային նյութեր

1. *Արոեան Ս.,* Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (կաթոլիկ) Եկեղեցու, 2002, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf:
2. Հայ կաթոլիկ եկեղեցի, www.araratian-tem.am/media/Hay%20Katolik%20Ekexeci.doc:
3. Հայոց ցեղասպանության վերաբերյալ դանիական փաստաթղթերից, http://norkhosq.net
4. Մետերնիխ, Հայերի հետապնդումները Թուրքիայի արևելյան շրջաններում, Տերապիա, 10 հուլիսի 1916թ., Կայսերական գերմանական դեսպանություն N 368, www.genocide-museum.am/arm/german.php:
5. *«Կարո՞ղ էր արդյոք Գերմանիան փրկել հայերին»,* հատված Վոլֆգանգ Գուստի Ֆրանկֆուրտի Ս. Պողոս եկեղեցում 2009թ. ապրիլի

24-ի ելույթից, http://www.wolfganggust.net/armenocide/gusthome.nsf/d3cb8075f11223b4c12572ef004f2e81/e4971e2aa8ad1bd3c12576210077c32e?OpenDocument
6. Վաշինգտոնում Անկարայի դաշնակիցները ձգտում են լռեցնել Թուրքիայի հակաքրիստոնեական քաղաքականության հասցեին հնչող քննադատությունը, http://news.am/arm/news/98168.html
7. Հայկական վարժարանը՝ լավագույններից մեկը Ստամբուլում..., http://daily.am/?p=4862&l=am
8. Archeparchy of Istanbul (Armenian),Constantinopolitanus Armenorum, http://www.catholic-hierarchy.org/diocese/disar.html
9. *Ronald G. Roberson,* The Eastern Catholic Churches 2012, http://www.cnewa.org/source-images/Roberson-eastcath-statistics/eastcatholic-stat12.pdf
10. Kapusen rahiplerin gelişi: http://www.anadolukatolikkilisesi.org/samsun/tr/storia.pdf
11. Aileler ve insanlar, Bir emanet: Artin Bezciyan, http://www.minidev.com/kulturler/kulturler_ermeni_mimar10.asp
12. Ermeni Katolik ile Protestan Cemaati kiliseleri restore ediliyor, http://www.emlakkulisi.com/29723_ermeni_katolik_ile_protestan_cemaati_kiliseleri_restore_ediliyor
13. Pangaltı Mıkhitaryan Ermeni Lisesi İstanbul'un en başarılı 10 Lise sıralamasında ilk 10 da, http://hyetert.blogspot.com/2012/04/pangalt-mkhitaryan-ermeni-lisesi.html
14. *Ayça Örer,* Ermenilere harap bir müjde, http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalDetayV3&ArticleID=1097243&CategoryID=77
15. Bomonti Mıhitaryan Okulu'nun 27 yıllık mağduriyeti son buldu, http://agos.com.tr/haber.php?seo=bomonti-mihitaryan-okulunun-27-yillik-magduriyeti-son-buldu&haberid=3197
16. *Vercihan Zifliogˇlu,* Historic school returned, www.hurriyetdailynews.com/historic-school-returned.aspx?pageID=238&nID=34105&NewsCatID=339, November/07/2012
17. Католической церкви отказано в юридическом статусе на территории Турции, http://www.cnlnews.tv/2011/01/22/turkey/
18. Почти половина турков не хотят соседствовать с христианами, www.sedmitza.ru/news/2363764.html

Հավելված

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ	ՔԱՂԱՔԸ
Հիսուս փրկչի Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Գալաթա թաղամաս
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Օրթաքյոյ թաղամաս
Անարատ Յղութեան Սուրբ Երրորդություն Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Սամաթիա թաղամաս
Սուրբ Աստվածածին վերա-փոխման Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Բյույուքդերե թաղամաս
Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Թաքսիմ թաղամաս
Սուրբ Հովհաննես Մկրտիչ Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Ենիքյոյ թաղամաս
Սուրբ Աստվածածին Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Բեյօղլու թաղամաս
Անարատ Յղութեան Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Բանկալթի թաղամաս
Սուրբ Անտոն Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Թարաբյա թաղամաս
Սուրբ Պողոս Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Բյույուքդերե թաղամաս
Սուրբ Լևոն Հայ Կաթողիկե եկեղեցի	Ստամբուլ, Քաղրքյոյ թաղամաս
Սուրբ Գևորգ Հայ Կաթողիկե եկեղեցի	Մարդին
Սուրբ Հովսեփ Հայ Կաթողիկե եկեղեցի	Մարդին

ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՔԱՂԱՔԸ
Սուրբ Հակոբ հիվանդանոց	Ստամբուլ
Սուրբ Հակոբ հանգստյան տուն	Ստամբուլ
Սուրբ Հակոբ բարեգործական մարմին	Ստամբուլ
Սուրբ Հակոբ դարմանատուն	Ստամբուլ

ԴՊՐՈՑՆԵՐ	ՔԱՂԱՔԸ
Բանկալթիի Մխիթարյան մասնավոր վարժարան	Ստամբուլ
Բոմոնթիի Մխիթարյան վարժարան	Ստամբուլ
Սամաթիայի Անարատ հղության վարժարան	Ստամբուլ
Բանկալթիի Անարատ հղության վարժարան	Ստամբուլ

Վահրամ Հովյան

ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայոց մեջ ավետարանականության առաջացման ու տարածման նախադրյալները

Օսմանյան կայսրությունը հայ ավետարանականության համար առանձնահատուկ է նրանով, որ ավետարանակության տարածումը հայերի մեջ տեղի է ունեցել հենց այստեղ: 1846թ. Կ.Պոլսում ձևավորվեց հայ ավետարանականների առաջին համայնքը: Այստեղից այն աստիճանաբար տարածվեց Օսմանյան կայսրության մյուս հայաշատ շրջաններում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում: 1860-ական թթ. հայ ավետարանականները Օսմանյան կայսրությունում միավորված էին 4 եկեղեցական միություններում.

- Բութանիայի (ստեղծվել է 1864թ., միավորում էր 27 եկեղեցի)
- Արևելյան՝ 4 շրջաններով (ստեղծվել է 1866թ., միավորում էր 68 եկեղեցի)
- Կիլիկիայի՝ 4 շրջաններով (ստեղծվել է 1867թ., միավորում էր 65 եկեղեցի)
- Կենտրոնական՝ 3 շրջաններով (ստեղծվել է 1868թ., միավորում էր 42 եկեղեցի)[1]:

[1] *Թութիկյան Վ.,* Հայ Ավետարանական եկեղեցի (1846-1996), Դետրոյթ, 1996, էջ 65, հղումը ըստ՝ *Խաչիկյան Տ.,* Բողոքական հայերը Թուրքիայում, Կրոն և հասարակություն, 2010, փետրվար, թիվ 10, էջ 82:

Հետագայում, Հայոց ցեղասպանության հետևանքով, հայ ավետարանականությունը տարածվեց նաև Սփյուռքի համայնքներում, որով էլ սկսվեց «հայ ավետարանականության Սփյուռքի շրջանը»[1]:

Մինչև առաջին համայնքի ձևավորումը, սակայն, արևմտահայ իրականության մեջ տեղի են ունեցել ավետարանականությանն առնչվող խմորումներ և իրադարձություններ:

Որո՞նք էին 19-րդ դարի կեսին հայ և, մասնավորապես՝ արևմտահայ իրականության մեջ ավետարանականության առաջացման և տարածման պատճառները: Հայերի մեջ ավետարանականության տարածման գործում, հոգևոր-եկեղեցական խնդրին զուգահեռ, պակաս կարևոր դեր չեն խաղացել նաև քաղաքական և սոցիալական հանգամանքները: Արդ, հայոց մեջ ավետարանականության ծագման և տարածման պատճառներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երեք մասի՝ հոգևոր-եկեղեցական, քաղաքական և սոցիալական:

Հոգևոր-եկեղեցական: Բազմաթիվ տեսակետների համաձայն՝ ավետարանականությունը հայոց մեջ ունի ներքին՝ հայկական ծագում: Այն կապվում է Հայ Առաքելական եկեղեցու ներսում դեռևս 17-րդ դարից սկիզբ առած բարենորոգչական շարժման հետ:

Բարենորոգությունների էությունը հանգում էր դարերի ընթացքում կուտակված ծիսական ավելորդություններից հրաժարվելուն, դավանաբանական հարցերում Աստվածաշնչի գերակայությանը, վերադարձին քրիստոնեության և Հայ Առաքելական եկեղեցու նախնական պարզ տարբերակին, աշխարհի-

[1] *Խաչիկյան Տ.,* նշվ. աշխ., էջ 77:

կացմանը, աշխարհաբարի տարածմանը (քարոզների, կրոնական արարողությունների և այլնի անցկացումը աշխարհաբարով) և այլն: Սրանք խնդիրներ էին, որ իրենց արդիականությունը պահպանել և արծարծվել են Հայ Առաքելական եկեղեցու ներսում դեռ երկար ժամանակ[1]:

Սկզբնական շրջանում Հայ Առաքելական եկեղեցու բարեկարգչական թևը խաղաղ գոյակցել է նրա ավանդապահ թևի հետ: Հետագայում, սակայն, տեղի է ունեցել պառակտում, որն էլ հանգեցրել է Հայ Ավետարանական եկեղեցու կամ համայնքի առաջացմանը: 1846թ. ավետարանական հայերը արժանանում են Կ.Պոլսի հայոց պատրիարք Մատթեոս Երկրորդի բանադրանքին և վտարվում Մայր եկեղեցուց: Դա նշանակում էր, որ նրանք հայտնվում են հայ համայնքից դուրս կարգավիճակում, որի պատճառով *«...նրանց հանգուցյալները մնում էին չհուղարկավորված, երեխաները՝ չկնքված, երիտասարդները՝ չամուսնացած, և ողջ իրավական պաշտպանությունը մերժվում էր...»*[2]: Ստեղծված իրավիճակը ենթադրում էր նոր համայնքի ձևավորում, ինչը և տեղի է ունենում:

Այսպիսով, ըստ այս տեսակետի՝ օտարերկրյա միսիոներությունը նպաստել է ավետարանականության տարածմանը հայոց մեջ, սակայն չի հանդիսացել վերջինիս առաջացման միակ պատճառը: Այլ կերպ ասած՝ օտարերկրյա միսիոներները հայերի մեջ պարզապես պարարտ հող են գտել իրենց գործունեությունը ծավալելու համար:

[1] Տե՛ս, օրինակ, *Հովհաննիսյան Հ.,* Հայ Առաքելական Եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901-1906թթ. (կրոնագիտության վերլուծություն), Եր., 2008, էջ 110-195:
[2] *Chakmakjian H.A.,* The Armenian Evangelical Church and The Armenian People http://www.cacc-sf.org/c-aecHAC.html

Քաղաքական պատճառներն աղերսներ ունեն Օսմանյան կայսրության միջազգային դրության և ներքին քաղաքականության հետ: Այս տեսակետից որպես պատճառ առանձնացվում են, մասնավորապես, հետևյալ երկուսը.

Արևմտյան երկրների քաղաքական և քաղաքակրթական ներթափանցումը թուլացող Օսմանյան կայսրություն: Թուլացման և անկման ուղին բռնած Օսմանյան կայսրությունը 19-րդ դարում պարարտ հող էր արևմտյան տերությունների քաղաքական և քաղաքակրթական ներթափանցման համար, ինչն իրականացվում էր նաև կայսրության քրիստոնյա բնակչության կամ փոքրամասնությունների միջոցով: Ըստ տարբեր տեսակետների, վերջիններիս իրավունքները պաշտպանելու պատրվակով արևմտյան տերությունները միջամտում էին կայսրության ներքին գործերին: Այլ կերպ ասած՝ Օսմանյան կայսրության քրիստոնյաները հաճախ գործիք էին արևմտյան տերությունների համար՝ իրենց քաղաքականությունն այնտեղ իրականացնելու տեսանկյունից: Իսկ սեփական քաղաքականության առավել արդյունավետ իրականացումը ենթադրում էր քրիստոնյաների թվաքանակի մեծացում, որին էլ նպատակաուղղված էր Արևմուտքի քաղաքականության որոշ ուղղվածությունն Օսմանյան կայսրությունում:

Այս տրամաբանության մեջ է տեղավորվում այն միսիոներական շարժումը, որը նախաձեռնվել և լայն թափով իրականացվում էր ինչպես Հռոմի Կաթոլիկ եկեղեցու, այնպես էլ տարբեր բողոքական եկեղեցիների ու միսիոներական կազմակերպությունների կողմից:

Օսմանյան կայսրությունում բողոքական միսիոներությունը սկիզբ է առել 19-րդ դարի սկզբին։ 1810թ. ԱՄՆ Քոնեկթիկուտ նահանգի Ֆարմինգտոն քաղաքում երիտասարդ բողոքական հոգևորականների կողմից հիմնվում է Արտաքին առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհուրդը *(American Bord of Commisioners for Foreign Mission)*, որի նպատակն էր քրիստոնեություն տարածել արտերկրի հեթանոսների՝ ոչ քրիստոնյաների շրջանում։ Սույն միսիոներական կազմակերպությունն արևմտահայերի շրջանում հայտնի էր Ամերիկյան Պորտ ընկերություն անվանմամբ։ Որպես գործունեության թատերաբեմ ընտրվում է նաև Մերձավոր Արևելքը, այդ թվում նաև Օսմանյան կայսրությունը։

Թեև միսիոներության նպատակն ի սկզբանե եղել է քրիստոնեության տարածումն այլակրոնների շրջանում, սակայն գալով Օսմանյան կայսրություն՝ քարոզիչներն իրենց գործունեությունը տարածում են նաև կայսրության քրիստոնյա ժողովուրդների վրա՝ նպատակ ունենալով նրանց դավանափոխել բողոքականության։ Պատճառը գլխավորապես մուսուլմանների և հրեաների անընկալունակությունն էր ավետարանական քարոզչության նկատմամբ, և նրանք Օսմանյան կայսրությունում բախվեցին վերջիններիս բացասական վերաբերմունքին։ Բացի այդ, մուսուլմանների կողմից կրոնափոխությունը դատապարտվում էր մահապատժով։

Այսպիսով, անհաջողության մատնվելով այլակրոններին քրիստոնեացնելու գործում՝ միսիոներներն իրենց գործունեության հիմնական թիրախ են դարձնում Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդներին՝ նպատակ հետապնդելով վերջին-

ներիս դարձնել իրենց դավանակիցը: Միսիոներ Փ.Ֆիսկը 1821թ. Միացյալ Նահանգներ ուղարկված իր նամակում հետևյալ կերպ է հիմնավորում իրենց գործունեության ուղղության վերանայումը. *«Մահմեդական երեխաներին սովորեցնելու հեռանկարը ամբողջությամբ դուրս է օրակարգից, և ես վախենում եմ, որ հրեաների պարագայում նույն հեռանկարը պակաս վանող չէ: Սակայն երկրում առկա քրիստոնյաների տարբեր խմբերի շրջանում ինչ-որ բան կարելի է անել»*[1]:

Միսիոներներն Օսմանյան կայսրության քրիստոնյաների շրջանում իրենց գործունեությունն իրականացնելիս շեշտը դնում են հատկապես հայերի վրա[2]: Սրա հիմքում ընկած էին հայերի առավել մեծ հետաքրքրվածությունը և ընկալունակությունը ավետարանական քարոզչության նկատմամբ: Ամերիկյան միսիոներները 1824թ. մի նամակում գրում են. *«Մենք մեծ ցանկություն ունենք անհապաղ ինչ-որ բան անելու հայերի համար: Մեզ ոգևորում է Աստվածաշունչ ձեռք բերելու նրանց պատրաստակամությունը»*[3]:

Միսիոներական գործունեության կենտրոնացումն առավելապես հայերի վրա հետապնդում էր մի քանի նպատակ.

1. *Քրիստոնեական արժեքների ու գիտելիքների խորացում հայերի մեջ:* Ինչպես նշում էին իրենք՝ միսիոներները, հայերը, չնայած քրիստոնյա լինելուն, «չէին խորացել քրիստո-

[1] *Kutvirt Th.,* "The Establishment of an American Protestant Mission to the Armenians (1810-1830)" – The Armenian Review, Boston, 1972, Vol. 25, No 3 (99), p. 44.

[2] Ուշագրավ է, որ միսիոներ Ս.Նյուելի 1814թ. մի գրության մեջ Հայաստանը դիտվում է որպես առանձին երկիր, չնայած Արևմտյան Հայաստանը 19-րդ դարում գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում, տե՛ս նույն տեղում, էջ 37:

[3] Նույն տեղում, էջ 45:

նական հավատում»[1] կամ՝ «նրանց մոտ պակասում էր Աստծո ոգին»[2]: Հարկ է նշել, որ հայ մասնագետի կողմից այս տեսակետը գնահատվել է որպես սխալ[3]:

2. *Միսիոներության խթանում:* Բողոքականացնելով հայերին՝ օտարերկրյա միսիոներներն իրենց համար «զինակիցներ» էին պատրաստում: Գաղտնիք չէ, որ միսիոներական գործունեությունը ենթադրում է նաև տեղական կադրերի՝ քարոզիչների պատրաստում: Բողոքականություն ընդունած հայերը, ըստ միսիոներների մտայնության, այնուհետև իրենք պետք է լծվեին միսիոներական գործունեությանը՝ քրիստոնեություն տարածելով այլակրոնների (մուսուլմանների) շրջանում: Փաստորեն, ամերիկացի միսիոներների համար հայերը հանդես էին գալիս որպես «անհավատներին քրիստոնյա դարձնելու դժվարին գործի իրենց դաշնակիցները»[4]:

3. *Բողոքականության տարածում:* Հայաստանն օտարերկրյա միսիոներների համար պետք է, ռազմավարական լեզվով ասած՝ ցատկահարթակ լիներ քրիստոնեությունը (բողոքականությունը) դեպի Պարսկաստան և Մերձավոր Արևելքի մյուս երկրներ տեղափոխելու համար: *«... Հայոց եկեղեցին կարող է դառնալ կարևոր գործիք Ասիայի արևմտյան հատվածի ավետարանականացման գործում. Հայաստանից կյանքի խոսքը կտարածվի դեպի Պարսկաս-*

[1] *Փայասլյան Ստ.,* Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2005, թիվ 1, էջ 121:
[2] Նույն տեղում, էջ 125:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 121:
[4] Նույն տեղում:

տան, Միջագետք, Սիրիա, Պաղեստին, Արաբիա և Փոքր Ասիա ...»,- նշվում է միսիոներների նամակներից մեկում[1]: Իսկ դրա համար նախ անհրաժեշտ էր բողոքականացնել Հայաստանը:

Արևմտյան միսիոներական կառույցների գործունեությունն Օսմանյան կայսրության հայության շրջանում դրսևորվում էր հետևյալ ձևերով.

1. *Քարոզչական:* Միսիոներները հայաբնակ վայրերում հավաքում էին մարդկանց խմբեր և կրոնական քարոզչություն իրականացնում, Աստվածաշնչի ընթերցանություններ կազմակերպում և այլն: Նրանք անցնում էին գյուղից գյուղ, անգամ՝ տնից տուն և մեկնաբանում Աստվածաշնչի դրույթները:
2. *Հրատարակչական:* Միսիոներները Կ.Պոլսում և այլ վայրերում հիմնած միսիոներական կենտրոններում բացում էին հրատարակչատներ, որտեղ աշխարհաբար հայերենով և հայատառ թուրքերենով հրատարակում էին Աստվածաշունչ և այլ կրոնական գրականություն: Հրատարակված գրականությունն այնուհետև տարածվում էր հայերի շրջանում՝ տրվում էր եկեղեցիներին ու դպրոցներին, բաժանվում անհատ մարդկանց և այլն: Այդ հրատարակությունները մեծ պահանջարկ էին վայելում գրաբարին այլևս չտիրապետող հայության շրջանում և կրոնական քարոզչության առումով տալիս ցանկալի արդյունք:

[1] *Kutvirt Th.,* նշվ. աշխ., էջ 39:

3. *Կրթական:* Միսիոներներն Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում եռանդով ձեռնամուխ եղան նաև դպրոցաշինության գործին: Նրանք հիմնեցին հարյուրավոր կրթական հաստատություններ՝ նախակրթարաններ, դպրոցներ, վարժարաններ, քոլեջներ, ճեմարաններ, որտեղ հայ մանուկները ստանում էին հոգևոր և աշխարհիկ կրթություն: Միսիոներական կառույցների ունեցած լուրջ ֆինանսական հնարավորությունների շնորհիվ նրանց հիմնադրած կրթական հաստատությունները մի շարք հարցերում որոշակի առավելություն ունեին հայ առաքելական ծխական դպրոցների նկատմամբ՝ նորմալ շենքային պայմաններ, որակյալ ուսուցում, դասագրքեր և այլն: Այդ պատճառով նրանք գրավիչ էին հայերի համար, որոնք, իրենց երեխաներին բարձրակարգ կրթության տալու ցանկությամբ լցված, պատրաստակամությամբ ուղարկում էին նրանց այդ կրթական հաստատությունները:

Արևմտյան երկրների՝ Օսմանյան կայսրություն քաղաքական ներթափանցման շրջանակներում կարևոր տեղ է ունեցել նաև հետախուզական գործունեությունը, ինչը մասնակիորեն իրականացվում էր նաև միսիոներական գործունեության միջոցով: Այս առումով պատահական չէ, որ «...Օսմանյան կայսրությունում՝ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայում գործող կաթոլիկ և բողոքական քարոզիչների թվում եղել են նաև հետախուզության աշխատակիցներ»[1]:

[1] *Տերոյան Վ.,* Իմպերիալիստական ծիծեռնակներ. միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Ե., 2008, էջ 20:

Հայերին պառակտելու նպատակով օսմանյան իշխանությունների հովանավորությունը միսիոներների գործունեությանը։ Մեծ կայսրությունները սովորաբար իրենց կազմում գտնվող նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը ջլատելու և հյուծելու նպատակով գնում են նրանց մեջ պառակտում սերմանելու, նրանց հատվածավորելու և այդ հատվածները միմյանց հակադրելու ճանապարհով։ Օսմանյան կայսրությունն այս առումով բացառություն չէր։ Ուստի, հայությանը պառակտելու նպատակով թուրքական իշխանությունները խրախուսում էին միսիոներների գործունեությունը հայերի շրջանում և առանձին հայ ավետարանական համայնքի ձևավորումը։

Այսպես, օրինակ, մինչև Զեյթունի 1862թ. ապստամբությունը միսիոներները, չնայած իրենց գործադրած ջանքերին, բախվելով զեյթունցիների կոշտ հակազդեցությանը, ոչ մի արդյունքի չէին կարողանում հասնել այնտեղ։ Վերջիններս, գիտակցելով, որ բողոքական քարոզչությունը պառակտում է մտցնելու հայերի մեջ՝ օգնելով օսմանյան իշխանություններին հասնելու իրենց կիսանկախ վիճակի վերացմանը, ամեն կերպ ձախողում էին Զեյթունում ավետարանական համայնք ստեղծելու միսիոներների փորձերը[1]։ 1862թ. ապստամբությունից հետո, սակայն, երբ ամրապնդվեցին թուրքական իշխանությունների դիրքերը, միսիոներները Զեյթունում ավելի ապահով և անկաշկանդ գործելու հնարավորություն ստացան, ինչն էլ կարճ ժամանակ անց հանգեցրեց ավետարանական համայնքի կազմավորմանը[2]։

[1] Հաճընում 1861թ., երբ տեղացի հայերը հալածեցին և քաղաքից վտարեցին դպրոցի հիմնադրման փորձ անող ամերիկացի միսիոներներին, վերջիններիս բողոքի հիման վրա տեղական իշխանությունները ձերբակալեցին 100-ից ավելի մարդու (տե՛ս *Փայասյան Ստ.,* Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի երկրորդ կեսին, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2006, թիվ 2, էջ 117։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 116-117։

Օսմանյան իշխանությունների կողմից բողոքականության տարածմանը նպաստելու տրամաբանության մեջ է տեղավորվում նաև այն, որ Կ.Պոլսում հայ ավետարանական առաջին համայնքի փաստացի ձևավորումից (1846թ.) չորս տարի անց՝ 1850թ., սուլթան Աբդուլ Մեջիդ 1-ինի (1839-1861թթ.) հրամանով այն ստացավ պաշտոնական պետական ճանաչում՝ կոչվելով Բողոքական ազգ (Պրոտեստանտ միլլեթ)[1]:

Նման քաղաքականությունը, այնուամենայնիվ, «երկսայրի սուր» էր Օսմանյան կայսրության համար: Մի կողմից, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների մի մասի դավանափոխությանը նպաստելով՝ նրանք կարողացան դավանանքային հիմքով հատվածավորում մտցնել հայության մեջ՝ ի դեմս Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների ձևավորման: Մյուս կողմից, սակայն, միսիոներական գործունեության խրախուսումը և կաթողիկե ու ավետարանական համայնքների ձևավորումը լայն դուռ բացեցին կայսրության ներքին գործերին արտաքին միջամտության և այդ միջամտության օրինականացման համար[2]:

Սոցիալական պատճառներն աղերսվում են այն ծանր դրության հետ, որում հայտնվել էին հայերն Օսմանյան կայսրությունում: Վերջինիս կազմում գտնվող քրիստոնյաներն ընդհանրապես սոցիալական կարգավիճակի առումով ի սկզբանե երկրորդական տեղ են ունեցել մուսուլմանների համեմատությամբ: Նրանք զուրկ էին այն իրավունքներից ու արտոնություններից, որոնցից օգտվում էին մուսուլմանները:

[1] Օսմանյան կայսրության պետական համակարգը հիմնված էր կրոնադավանանքային հիմքի վրա:
[2] Տե՛ս *Ղանալանյան Տ.,* Հայ բողոքականներ, 21-րդ ԴԱՐ, 2010, թիվ 4, էջ 39:

Թե Օսմանյան կայսրությունում ինչ վիճակում էին քրիստոնյաները մուսուլմանների համեմատ՝ ակնառու կերպով ցույց է տալիս հետևյալ դիտարկումը. *«Յանկացած փաշա, ենիչերի և այլն կարող էր անպատիժ կերպով բռնություն գործադրել անպաշտպան քրիստոնյա «ռայայի» նկատմամբ: Քրիստոնյաներին չէր թույլատրվում զենք կրել, հագնել նույնպիսի զգեստներ և կոշիկներ, ինչպես մահմեդականները: Նույնիսկ պաշտոնական փաստաթղթերում ոչ մահմեդականների նկատմամբ կիրառվում էին արհամարհական ու հայհոյական մականուններ: Մահմեդական դատարանը չէր ընդունում քրիստոնյաների վկայությունները»*[1]:

19-րդ դարում օսմանյան իշխանությունները որոշակի քայլեր ձեռնարկեցին քրիստոնյաների դրությունը բարելավելու տպավորություն ստեղծելու ուղղությամբ, ինչը պայմանավորված էր.

- *Միջազգային ճնշմամբ:* Եվրոպական քրիստոնյա երկրները, ինչպես նաև Ռուսաստանն Օսմանյան կայսրության հետ դիվանագիտական հարաբերություններում միշտ էլ օրակարգային հարց են դարձրել վերջինիս քրիստոնյա փոքրամասնությունների դրությունը բարելավելու հարցը՝ այդ առնչությամբ շոշափելի ճնշում գործադրելով նրա վրա:
- *Կայսրության տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների (հույներ, սերբեր, հայեր և այլն) ազգային ազատագրական շարժումները կանխելու նկատառումներով:* Օգտվելով Օսմանյան կայսրության թուլացումից, ինչպես նաև ստանալով եվրոպական երկրների որոշակի աջակցությունը՝ նրա տիրապետության տակ դարեր շա-

[1] *Բայբուրդյան Վ.,* Օսմանյան կայսրության պատմություն, Եր., 2011, էջ 318-319:

> ռունակ ճնշվող և կեղեքվող քրիստոնյա ժողովուրդները սկսեցին պայքարի դուրս գալ օսմանյան լուծը թոթափելու և անկախություն նվաճելու համար: Ամենուրեք բռնկվող ազգային-ազատագրական ապստամբությունները ոչ պակաս մեծ սպառնալիք էին Օսմանյան կայսրության մասնատման և կործանման համար: Ուստի, առանց այդ էլ բազմաթիվ սոցիալ-քաղաքական խնդիրների տակ կքած կայսրության իշխանություններն այդ գլխացավանքից ազատվելու նպատակով հարկադրված էին գնալ նվաճված քրիստոնյա ժողովուրդների դրությունը բարելավելու ճանապարհով: Նման քաղաքականությամբ օսմանյան իշխանություններն իրենց ներքին գործերին արտաքին միջամտությունից խուսափելու և արտաքին աշխարհում կայսրության մասին դրական հասարակական կարծիք ձևավորելու նպատակ էին հետապնդում:

Ներմուծված բարեփոխումները ենթադրում էին քրիստոնյաների և մուսուլմանների իրավահավասարություն, խտրականության բացառում, կրոնական ազատությունների երաշխավորում, որոնք քրիստոնյաներին տալիս էին.

- կյանքի և գույքի ապահովություն,
- բանակում ծառայելու իրավունք,
- դատարանում վկայություն տալու իրավունք,
- քաղաքացիական և հասարակական պաշտոններ զբաղեցնելու իրավունք,
- պառլամենտում ընտրվելու իրավունք,
- եվրոպական ոճով հագնվելու իրավունք և այլն:

Այդ բարեփոխումները, սակայն, գործնականում չհանգեցրին կայսրության քրիստոնյաների դրության էական բարելավմանը, ինչը պայմանավորված էր.

- *Տիրապետող իսլամի գաղափարախոսությամբ պայմանավորված՝ դրանց թերի բնույթով:* Օսմանյան կայսրությունը, չնայած իրականացված բարեփոխումներին կամ եվրոպականացման գծին, շարունակում էր մնալ կրոնապետություն՝ իսլամական գաղափարախոսության գերակշռությամբ, որը չի հանդուրժում որևէ հավասարություն մուսուլմանի և քրիստոնյայի միջև: Հետևաբար, իրականացված բարեփոխումներն էլ չէին կարող լիարժեք հավասարություն ապահովել այդ երկու կրոնների ներկայացուցիչների միջև:
- *Հասարակական որոշ հետադեմ շերտերի կատաղի դիմադրությամբ:* Չկարողանալով ձերբազատվել իրենց հնացած կրոնական նախապաշարմունքներից, ինչպես նաև չցանկանալով կորցնել իրենց արտոնյալ դիրքը՝ իսլամական հոգևոր շրջանակները (հատկապես՝ նրանց մոլեռանդ հատվածը) դեմ էին արտահայտվում բարեփոխումներին: Բացի նրանցից, օսմանյան հասարակությունում կային արտոնյալ դիրք ունեցող որոշակի այլ սոցիալական, ինչպես նաև զինվորական շերտեր, որոնց շահերին նույնպես հակադրվում էին այդ նորամուծությունները: Դրանց արդյունքում վերջիններս նույնպես կորցնում էին իրենց արտոնյալ դիրքը: Ուստի, նրանք և հոգևոր շրջանակները պայքարում էին կայսրության արդիականացման դեմ՝ լավագույնս օգտագործելով հետամնաց մուսուլման բնակչու-

թյան կրոնական զգացմունքներն ու սնոտիապաշտությունը: Բարեփոխումների նկատմամբ ցուցաբերվող այդ կատաղի դիմադրությունը մեծապես խանգարեց դրանց կենսագործմանը:

- *Բարենորոգումների նկատմամբ կայսրության քրիստոնյա ժողովուրդների թերահավատությամբ:* Օսմանյան դաժան տիրապետության տակ դարեր շարունակ ճնշված ու կեղեքված քրիստոնյա ժողովուրդները կասկածանքով էին վերաբերվում հռչակված բարեփոխումների քաղաքականությանը: Նրանք համարում էին, որ օսմանյան իշխանությունները չնչին և ձևական բարեփոխումներով իրականում նպատակ են հետապնդում բթացնել իրենց զգոնությունը և մարել իրենց ազատագրական շարժումները: Ավելին, ներմուծված բարեփոխումներն ավելի շատ բացասաբար, քան դրականորեն էին ընկալվում քրիստոնյա ժողովուրդների կողմից: Այսպես, օրինակ, քրիստոնյաներին բանակում ծառայելու իրավունքի շնորհումը վերջիններիս կողմից ընկալվեց որպես քրիստոնյաներին իրենց հավատակիցների՝ քրիստոնյա պետությունների դեմ պատերազմներում օգտագործելու խորամանկ քայլ: Պատահական չէ, որ հենց «թանզիմաթյան բարեփոխումների տարիներին հակաթուրքական խոշոր ապստամբություններ տեղի ունեցան Բուլղարիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում և Ալբանիայում»[1]:

[1] Նույն տեղում, էջ 470:

Այս գործոնների ազդեցությամբ բարեփոխումների նպատակով ընդունված օրենքները գործնականում կյանքի չէին կոչվում, որի հետևանքով քրիստոնյաների դրությունը շարունակում էր մնալ նույնքան ծանր, որքան նախկինում: «XIXդ. կեսերից թանզիմաթյան բարեփոխումները,- գրում է Վ. Բայբուրդյանը,- սկսեցին կորցնել իրենց նախկին թափը: Կյանքը համոզիչ փաստերով ցույց տվեց, որ այն, ինչ գրված է թղթերի վրա, շատ դժվարությամբ է իր համար ճանապարհ հարթում իրական կյանքում»[1]:

Ավելին, 19-րդ դարում, կապված Թուրքիայի միջազգային և ներքին դրության էլ ավելի ծանրացման հետ (պարտություններ պատերազմներում, ներքին ապստամբություններ, քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքար և այլն), նոր թափով բորբոքվեց թուրքական հասարակության և իշխանությունների ատելությունը քրիստոնյաների նկատմամբ՝ հանգեցնելով վերջիններիս հանդեպ հալածանքների ու հետապնդումների խստացմանը:

Ընդհանուր առմամբ, տպավորություն էր ստեղծվում, որ ներմուծվող բարեփոխումները ցուցադրական էին, այսինքն՝ օսմանյան իշխանությունները բարեփոխումներ անում էին եվրոպական տերությունների ճնշման ներքո՝ գործնականում ցանկություն չունենալով բարելավել իրենց քրիստոնյա հպատակների դրությունը: «Սա մի պատկեր է,- գրում է ավստրիացի հետազոտող Վիլհելմ Բաումը,- որն իր վավերականությունը չի կորցրել մինչև օրս. Թուրքիան, ելնելով Եվրոպայում իշխող հասարակական կարծիքից, բարեփոխումների որոշումներ է կայացնում, որոնք հետագայում իրականության մեջ երբեք չեն գործադրվում»[2]:

[1] Նույն տեղում:
[2] *Բաում Վ.,* Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Եր., 2010, էջ 48:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների նկատմամբ իրականացված բարենորոգչական քայլերը մեծ հաշվով կրում էին ձևական բնույթ։ Գործնականում դրանց կյանքի կոչման համար անհրաժեշտ էր գործուն լծակ, որը կստիպեր կենտրոնական և տեղական իշխանություններին հետևել այդ բարեփոխումներին։ Այդպիսի լծակի դերում հանդես էին գալիս բողոքական միսիոներական կազմակերպությունները, որոնք վայելում էին արևմտյան տերությունների հովանավորությունը։ *«Հայերը միսիոներների մեջ ... տեսնում էին այն հզոր ուժին, որոնց հովանավորության տակ գտնվելով, իրենց ավելի ապահով էին զգում»*[1]։

Միսիոներական կառույցների գործունեությունն Օսմանյան կայսրությունում, բացի կրոնական քարոզչությունից, դրսևորվում էր նաև հայերին որոշակի օգնություն ցույց տալու տեսքով։ Այդ օգնությունը դրսևորվում էր երկու ձևով.

Պաշտպանություն իշխանությունների և մուսուլման հասարակության հալածանքներից։ Միսիոներները, իրենց թիկունքում ունենալով արևմտյան պետությունների քաղաքական հովանավորությունը, Օսմանյան կայսրությունում հանդես էին գալիս քրիստոնյա փոքրամասնությունների յուրահատուկ «իրավապաշտպանի» դերում։ Նրանք ոչ միայն նյութապես ու բարոյապես էին աջակցում քրիստոնյաներին՝ բարեգործական, կրթական և այլ գործունեության միջոցով, այլև արձագանքում էին ջարդերին ու կոտորածներին՝ փորձելով կանխել կամ դադարեցնել դրանք, օգնել այդ ջարդերից տուժածներին։

[1] *Փայասլյան Մտ.,* նշվ. աշխ., էջ 133։

Իսկ բողոքականություն ընդունած քրիստոնյաները, ավելի մոտ լինելով միսիոներական կառույցներին, բնականաբար, ավելի մեծ չափով և առարկայորեն էին զգում այդ աջակցությունը, ինչը խթանում էր ջարդերի և կոտորածների մշտական սպառնալիքի տակ գտնվող հայերին՝ ապահովության ակնկալիքով ընդունել բողոքականություն: Այս առնչությամբ Ռաֆֆին 1878թ. գրում է. *«...կրոնափոխ եղող հայերը ... մահմեդականների հալածանքների դեմ պաշտպանություն գտնելու համար են հեռանում մայրենի եկեղեցուց...»*[1]: Պատահական չէ, որ հայերի բողոքականացումը լայն թափ ստացավ հատկապես 1890-ական թթ. համիդյան ջարդերից և 1909թ. Ադանայի կոտորածից հետո:

Պակաս կարևոր չէր նաև օտարերկրյա միսիոներների գործունեության բարոյական նշանակությունը ծանր պայմաններում հայտնված հայերի համար: Դա հատկապես շոշափելի էր ինքնապաշտպանական կռիվների ժամանակ: Օրինակ, Վանի նշանավոր ինքնապաշտպանության ժամանակ բժիշկ Քլարենս Աշըրը հրաժարվում է ամերիկյան հիվանդանոցի դեղատունը հանձնել իշխանություններին: Նա դեղերը տալիս էր հայերին և իր կնոջ՝ Էլիզաբեթի հետ վիրահատում ու բուժում հայ հիվանդներին ու վիրավորներին[2]: Այս օգնությունը, հասկանալի է, բացի մարդկային կյանքեր փրկելուց, ուներ նաև զգալի բարոյական՝ ոգևորիչ նշանակություն:

Սոցիալական օգնություն: Այս առումով ընդհանուր առմամբ արտաքին բողոքական կառույցների օգնությունը հայերին հանգում էր հետևյալ ոլորտներին.

[1] *Ռաֆֆի,* Ի՞նչ վերանորոգություններ պետք են տաճկական Հայաստանին, Երկերի ժողովածու, հ. 11, Եր., 1991, էջ 55:
[2] *Տերոյան Վ.,* նշվ. աշխ., էջ 7:

1. Բարեգործական: Միսիոներական կառույցները հայերի շրջանում բարեսիրական գործունեություն են ծավալել ինչպես նախացեղասպանական շրջանում, այնպես էլ ցեղասպանության ժամանակ: Օրինակ, 1887թ., երբ Հաճընում սով սկսվեց, միսիոներները հայ բնակչությանը սննդամթերք ու դրամական միջոցներ բաժանեցին[1]:

Հայկական ջարդերի և ցեղասպանության տարիներին միսիոներական կառույցների մարդասիրական օգնությունը դրսևորվում էր.

- *Որբախնամ առաքելությամբ:* Մահաբեր աղետը ծնողազուրկ դարձրեց բազմահազար հայ երեխաների, որոնց «...մի մասի հոգածությունն ստանձնեցին տարբեր ազգությունների և երկրների կաթոլիկ և բողոքական միսիոներները»[2]:
- *Հայ գաղթականությանը ցուցաբերվող օգնությամբ:* Մասնավորապես՝ հայ և ասորի գաղթականության օգնության գործը կազմակերպելու նպատակով ամերիկացիները 1915թ. հիմնում են Հայկական և Սիրիական նպաստամատույց կոմիտեները[3]:
- *Հայրենիք վերադարձածներին օժանդակությամբ:* Միսիոներական կառույցները զգալի ավանդ ունեցան նաև Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ռուսական զորքերի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքներ վերադարձած հայության սոցիալ-տնտեսական դրությունը թեթևացնելու գործում: Էրզրումի

[1] *Փայասլյան Մտ.,* Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի երկրորդ կեսին, ..., էջ 117:
[2] *Տերոյան Վ.,* նշվ. աշխ., էջ 5:
[3] Նույն տեղում, էջ 7:

ազատագրումից հետո, օրինակ, Ամերիկյան Կարմիր խաչը գումար է ուղարկում այնտեղ գտնվող միսիոներ Սթեփլթոնին՝ քաղաք վերադարձած հայերին օգնություն ցույց տալու նպատակով[1]։

2. Կրթական։ Այս ասպարեզում միսիոներների օգնությունը դրսևորվում էր առավելապես կրթական հաստատությունների հիմնման և գործարկման միջոցով։ Միայն ամերիկյան բարեգործական կազմակերպություններն Օսմանյան կայսրությունում հիմնել են 551 տարրական և միջնակարգ դպրոց և 8 քոլեջ[2]։ Բացի կրթական հաստատությունների հիմնումից, միսիոներները նաև կազմակերպում էին հայերի կրթությունն արտասահմանում։

3. Բժշկական։ Քանի որ շատ միսիոներներ բժիշկ էին, նրանք իրենց միսիոներական գործունեությունը զուգորդում էին բժշկության հետ՝ բնակչությանը տալով անվճար և որակյալ բուժօգնություն։ Այս ոլորտում միսիոներական կառույցների գործունեությունը հանգում էր հիվանդանոցների, դեղատների և այլ առողջապահական հաստատությունների հիմնմանը։ Օրինակ, Վանում գործող բժիշկ Ռեյնոլդսը, նրա երկու օգնականներ Քլարենս Աշըրը և Էռնեստ Յարոուն *«... մեծ նուիրումով մը ... երկար տարիներ ծառայեցին հայութեան եւ արդարօրէն վայելեցին յարգանքն ու սէրը մեր երախտագէտ ժողովուրդին»*[3]։

Միսիոներների կողմից ցուցաբերվող աջակցությունը լուրջ խթան էր հայերի համար՝ ընդունելու բողոքականություն։

[1] Նույն տեղում։
[2] *Մահակյան Ռ.,* Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Եր., 2005, էջ 76։
[3] *Փափազեան Վ.,* Իմ Յուշերը, հատոր առաջին, Պոսթըն, 1950, էջ 229։

Ընդհանուր ձևակերպում տալով՝ կարող ենք ասել, որ հայերը բողոքականություն էին ընդունում գլխավորապես այն հույսով, որ *«կունենան Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի և ԱՄՆ-ի պաշտպանությունը, ինչպես նաև կկարողանան ուսանել այդ պետությունների ուսումնական հաստատություններում և ստանալ որակյալ ու անվճար բուժօգնություն»*[1]:

Հայ ավետարանական համայնքը ցեղասպանության տարիներին

Ավետարանական հայերի՝ Հայության անբաժանելի մասը լինելու հանգամանքը ունի երկու չափում՝ արտաքին և ներքին:

Արտաքին չափումը վերաբերում է օտարների կողմից նրանց ընկալմանը: Օտարների, մասնավորապես՝ թուրքերի կողմից նրանք ընկալվել են նախնառաջ որպես հայ, այլ ոչ թե որպես ավետարանական, թեև, ինչպես արդեն նշվեց, օսմանյան իշխանությունները հայությանը պառակտելու նպատակով ժամանակին խրախուսում էին ավետարանականության տարածումը հայերի շրջանում և առանձին ավետարանական համայնքի ձևավորումը:

Այն, որ թուրքերի կողմից ավետարանականներն ընկալվել են առաջին հերթին որպես հայ, առավել վառ կերպով արտահայտվել է ջարդերի և ցեղասպանության տարիներին: Թուրքերը կարևորությունը տալիս էին իրենց զոհերի ազգային, այլ ոչ թե դավանանքային ինքնությանը: Հետևաբար, այդ տարիներին «...գրեթէ առանց խտրականութեան՝ ոչնչացուել են ինչպէս հայ առաքելականները, այնպէս էլ հայ կաթոլիկներն ու աւետարա-

[1] *Տերոյան Վ.,* նշվ. աշխ., էջ 5-6:

նականները»[1]: Այդ է պատճառը, որ հայ ավետարանականները նույնպես իրենց վրա կրեցին հայկական ջարդերի և ցեղասպանության աղետալի հետևանքները:

Ներքին չափումը հայ ավետարանականների ինքնընկալումն է Հայության անբաժանելի մասը լինելու մասին, ինչպես նաև գործնական կյանքում ցուցաբերած ներդրումը նրա ճակատագրում՝ քաղաքակրթական, կրթամշակութային, սոցիալական և այլ առումներով[2]: Հայկական ջարդերի և ցեղասպանության տարիներին դա երևաց ինքնապաշտպանական կռիվներին և, առհասարակ, Հայության գոյապայքարին ավետարանական հայերի ցուցաբերած մասնակցությամբ: *«...Որպէս հայ զգացում ու* ***հայ տիպարականութիւն կրող Աւետարանական հայերը*** *(ընդգծումը հեղինակինն է) չեն կրնար անտարբեր հանդիսատեսներ ըլլալ օրուայ բարբարոսութեանց որ տեղի կ'ունենար երկրին մէկ ծայրէն միւսը»,*- գրում է Կ.Ատանալյանը[3]:

Ջարդերի և կոտորածների ազդեցությունը հայ ավետարանական համայնքի վրա

Առաջին աշխարհամարտը լավագույն պայմաններն էր ստեղծում երիտթուրքերի համար՝ իրականացնելու իրենց որդեգրած պանթյուրքիստական ծրագիրը, որը, ի թիվս այլ նպատակների, ենթադրում էր նաև Թուրքիան վերածել մոնոէթնիկ պետության: Դա նշանակում էր, որ Օսմանյան կայսրության ոչ

[1] Արամ Ա կաթողիկոս.- «Մենք հատուցում ենք պահանջում ցեղասպան Թուրքիայից», Ալիք, Թեհրան, 01.11.2009:

[2] Առավել մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Բողոքական հայերը՝ տարադավան հայության շերտ, Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2010, թիվ 1, էջ 15-20:

[3] *Ատանալեան Կ.Պ.,* Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952, էջ 395:

թուրք ժողովուրդները պետք է կամ թուրքացվեին, կամ ոչնչացվեին, որպեսզի այդ կերպ վերացվեր այն սեպը, որ խրված էր թյուրքական ժողովուրդների միավորման ճանապարհին։

Հայոց ցեղասպանությունն աղետալի հետևանքներ ունեցավ նաև հայ ավետարանական համայնքի համար երկու՝ մարդկային և գույքային առումով։

Մարդկային վնասն այն է, որ ցեղասպանության ընթացքում հայ ավետարանականների մի մասը բովանդակ հայության հետ միասին զոհ գնաց, մի զգալի մասն էլ տարագրվեց։ Եթե ցեղասպանության նախօրեին հայ ավետարանականների թվաքանակն Օսմանյան կայսրությունում կազմում էր մոտ 60 հազ., նրանք սփռված էին ողջ կայսրությունով մեկ և միավորված էին 4 եկեղեցական միություններում, ապա 1915-ից հետո Թուրքիայում մնաց ընդամենը 14 հազ. հայ ավետարանական։ Այսինքն՝ ցեղասպանության հետևանքով հայ ավետարանականների թվաքանակը Թուրքիայում կրճատվեց ավելի քան չորս անգամ։ Եթե ցեղասպանությունից առաջ Թուրքիայի հայ ավետարանական համայնքն ուներ 82 ձեռնադրյալ հովիվ և 97 քարոզիչ[1], ապա Ցեղասպանությունից հետո մնացին 25 ձեռնադրյալ հովիվ և 13 քարոզիչ[2]։

Առաջին աշխարհամարտից հետո հայ ավետարանականների թվաքանակի այդքան ցածր ցուցանիշը պայմանավորված էր երկու գործոնով.

1. *Զարդերով ու տեղահանությամբ,* որոնց ընդհանուր հայերի հետ միասին զոհ գնացին նաև հայ ավետարանականները։

[1] *Լևոնյան Ռ.Ն., Ղազարյան Ա.,* Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Եր., 1999, էջ 15։
[2] *Խաչիկյան Տ.,* նշվ. աշխ., էջ 85։

2. *Օսմանյան կայսրության կործանմամբ և ահռելի տարածքների (Եգիպտոս, Սիրիա, Իրաք, Լիբանան և այլն) անջատմամբ,* որտեղ գտնվող հայ ավետարանականները դուրս մնացին թուրքական պետության սահմաններից։

Գույքային վնասը կազմում է հայ ավետարանական համայնքին պատկանող մեծ քանակությամբ կալվածքների՝ շարժական և անշարժ գույքի ոչնչացումը, ավերումն ու թալանը։ Ամենաակնառու օրինակներից մեկն այս տեսակետից արևմտահայության ամենախոշոր կրթական հաստատությունը՝ Խարբերդի «Եփրատ» քոլեջն է։ Այն նախկինում կոչվում էր «Արմենիա», բայց դեռևս 1888թ. վերանվանվեց «Եփրատ», քանի որ հայահալած քաղաքականության համատեքստում օսմանյան իշխանությունները չէին հանդուրժում հրատարակություններում և հիմնարկությունների անվանումներում ազգային նշանակություն ունեցող բառերի և տերմինների օգտագործումը։ Նախքան ցեղասպանությունը, թեև քոլեջը ենթարկվում էր իշխանությունների հալածանքներին, սակայն շարունակում էր գործունեությունը։ Ցեղասպանության հետևանքով քոլեջի շինությունները (18 մասնաշենք) ավերվեցին ու թալանվեցին, ուսանողների և դասախոսների մեծ մասը զոհվեց[1]։

Եթե նախքան ցեղասպանությունը Թուրքիայի հայ ավետարանական համայնքն ուներ 137 եկեղեցի, 270 կիրակնօրյա դպրոց՝ 22700 ուսանողով, 7 քոլեջ՝ 1700 ուսանողով, 46 բարձրագույն վարժարան՝ 1750 ուսուցչով և 4700 ուսանողով, 3 աստվածաբանական ճեմարան և բազմաթիվ նախակրթարաններ[2],

[1] *Փայասլյան Մտ.,* նշվ. աշխ., էջ 112-113։
[2] Տե՛ս *Լևոնյան Ռ.Ն., Ղազարյան Ա.,* նշվ. աշխ., էջ 15։

ապա ցեղասպանությունից հետո մնաց ընդամենը 31 եկեղեցի[1]: Հայ ավետարանական բոլոր կրթական հաստատությունները դադարեցին գոյություն ունենալ:

Հայ ավետարանականներն ազգային գոյապայքարում

Նշանակալի է եղել նաև ցեղասպանության տարիներին հայ ավետարանականների ներդրումը հայության ազգային գոյապայքարում: Այս ասպարեզում ավետարանական հայերի գործողությունների հիմքում որպես դրդապատճառ ընկած է եղել թե՛ կրոնական և թե՛ ազգային ինքնագիտակցությունը: Ինչպես նշում է վերապատվելի Պարգև Դարաքջյանը, Սողոմոն Թեհլիրյանը սպանեց Թալեաթ փաշային ոչ թե նրա համար, որ բողոքական էր, այլ՝ որ հայ էր[2]: Հայ ավետարանականների նշանակալի ներդրումը հայության գոյապայքարում ունեցել է դրսևորման հետևյալ ձևերը.

- *Մասնակցություն ինքնապաշտպանական կռիվներին:* Որպես ավետարանական հայերի՝ հայության գոյապայքարում այս կերպ ունեցած ներդրման օրինակ կարելի է վկայակոչել Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեում (Ամերկոմ) երկար տարիներ՝ 1919-30թթ., ղեկավար պաշտոններ վարած Վարազդատ Տերոյանի մասնակցությունը 1915թ. Վանի ինքնապաշտպանությանը[3]: Վանի 1915թ. ինքնապաշտպանությանը մասնակցել, Հայոց ձորի ինքնապաշտպանական կռիվները կազմակերպել ու ղե-

[1] *Խաչիկյան Տ.,* նշվ. աշխ., էջ 85:
[2] *Darakjian B.N.,* Armenian Evangelical Identity: Historical and Theological Perspectives http://www.cacc-sf.org/c-aeidentityBND.html
[3] *Տերոյան Վ.,* նշվ. աշխ., էջ 21:

կավարել է մեկ այլ նշանավոր հայ ավետարանական գործիչ՝ Հակոբ Մուդոյանը[1]։

- *Սոցիալական և բարեգործական աշխատանք։* Մեծ էր հայ ավետարանականների ներդրումն ինչպես որբերին ու գաղթականներին, այնպես էլ ռուսական զորքերի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքներ վերադարձած հայերին օգնելու գործում։ Օրինակ, 1916թ. Վանում բուժական գործը կազմակերպելու, ինչպես նաև ամերիկյան միսիոներների ներկայացուցիչը լինելու նպատակով քաղաք է գործուղվում բուժակ Կարապետ Թորգոմյանը[2]։
- *Մշակութային ժառանգության փրկություն։* Նշանակալի էր հայ ավետարանականների մասնակցությունը, մասնավորապես, հայկական ձեռագրերի և հնատիպ գրքերի պահպանման և փրկության գործում։ Վանի 1915թ. հուլիսյան նահանջի ժամանակ Արամ Մանուկյանի հանձնարարությամբ Վարազդատ Տերոյանը Վարոս Բաբայանի հետ միասին Քաղաքամեջ թաղամասի Ծիրանավոր եկեղեցուց հավաքում է հայկական ձեռագրերը և ռուսական մի զինվորական պաշտոնյայի հետ ուղարկում Էջմիածին[3]։ Հետագայում՝ 1924թ., Ամերկոմի կողմից Հայաստանի պետական թանգարանին են հանձնվում ոչնչացումից փրկված 300-400 հայերեն հնատիպ հազվագյուտ գրքեր և 82 ձեռագրեր[4]։

---

[1] *Ղանալանյան Տ.,* նշվ. աշխ., էջ 41։
[2] Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 9։
[3] Տե՛ս Վանի ձեռագրերի հարցը (նամակ խմբագրութեան), Հորիզոն, Թիֆլիս, 10.10.1915։
[4] *Տերոյան Վ.,* նշվ. աշխ., էջ 17, 51։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Հայ ավետարանական համայնքը հետցեղասպանական շրջանում

Հանրապետական Թուրքիայում նույնպես շարունակվեցին քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ ազգային և կրոնական հալածանքները, որոնք լայն տարածում ունեին Օսմանյան կայսրությունում: Չնայած Լոզանի պայմանագրով (1923թ. հուլիսի 24) Թուրքիան պարտավորություն էր ստանձնել երաշխավորելու ոչ մուսուլմանական փոքրամասնությունների կրոնական, լեզվական, մշակութային և այլ իրավունքների պաշտպանությունը, սակայն, շատ չանցած, պետական մակարդակով սկսեց խախտել իր պարտավորությունները:

Մասնավորապես, համաձայն Լոզանի պայմանագրի՝ ոչ մուսուլմանական փոքրամասնություններն իրավունք ունեին.

- Սեփական միջոցներով հիմնելու և ղեկավարելու կրթական, սոցիալական, բարեգործական և կրոնական կառույցներ:
- Ազատորեն կիրառելու իրենց մայրենի լեզուն և կրոնն այդ կառույցներում:
- Կրոնական փոքրամասնություններով կոմպակտ բնակեցված տարածքներում տարրական դպրոցներում հանրակրթությունն ստանալ մայրենի լեզվով:

- Ստանալ պետական ֆինանսավորում՝ կրոնական, մշակութային, կրթական, բարեգործական նպատակներով:
- Պետության կողմից ունենալ իրենց եկեղեցիների, սինագոգների, գերեզմանների և այլ կրոնական կառույցների լիակատար պաշտպանության երաշխիք[1]:

Սակայն պայմանագրի ստորագրումից շատ չանցած՝ Թուրքիան սկսեց ինստիտուցիոնալ-օրենսդրական քայլեր ձեռնարկել կրոնական փոքրամասնությունների երաշխավորված իրավունքներն ու արտոնությունները չեզոքացնելու համար, որպիսիք էին.

1. 1924թ. դպրոցական համակարգի միասնականացմամբ ոչ թուրքական մասնավոր դպրոցները դրվեցին պետական վերահսկողության ներքո[2], որով ազգային դպրոցները զրկվեցին անկախությունից կամ ինքնուրույնությունից: Այդ կերպ ոտնահարվեց կրոնական փոքրամասնությունների՝ սեփական դպրոցները կառավարելու և վերահսկելու իրավունքը: Դրանից հետո թուրքական կառավարությունն անընդհատ ճնշումներ է իրականացրել ազգային դպրոցների նկատմամբ[3]:

2. 1934թ. ընդունված օրենքով հոգևորականներին արգելվում էր եկեղեցուց դուրս կրոնական զգեստ կրելը[4], որով էլ սահմանափակվում էր կրոնական ծիսակատարությունների ազատությունը:

[1] Treaty of Peace with Turkey Signed at Lausanne, July 24, 1923, articles 40, 41, 42 http://www.hri.org/docs/lausanne/part1.html
[2] *Բառում Վ.,* նշվ. աշխ., էջ 161:
[3] Նույն տեղում, էջ 170:
[4] Նույն տեղում, էջ 161:

3. 1935թ. ընդունվեց օրենք հիմնադրամների մասին, որով էապես սահմանափակվում էին կրոնական փոքրամասնությունների ֆինանսական իրավունքները: Քրիստոնեական եկեղեցիներին պատկանող հիմնադրամներն անցան պետության վերահսկողության տակ: Վերջիններս չէին կարող ազատորեն տնօրինել այդ հիմնադրամների միջոցները: Նրանք այդ հարցում պետք է բանակցեին պետական պաշտոնյաների հետ: Բացի այդ, պետությունը նաև վարում էր կրոնական փոքրամասնությունների եկեղեցական հիմնադրամներին կատարվող նվիրատվությունների բռնագրավման քաղաքականություն:

Կրոնական համայնքները (հայեր, ասորիներ և այլն) իրենց ղեկավար կառույցների միջոցով որոշակի (լոբբիստական) քայլեր ձեռնարկել են Հիմնադրամների մասին օրենքը փոփոխելու և այդ կերպ իրենց ֆինանսական և գույքային դրությունը բարելավելու ուղղությամբ, սակայն առայսօր այդ ջանքերը դեռևս չեն տվել ցանկալի արդյունք[1]:

4. 1936 թվականից, երբ կրոնական փոքրամասնությունների վրա պարտավորություն դրվեց պետությանը ներկայացնել իրենց ունեցվածքի ցանկը, սկսվեց օրենքով նրանցից գույքի բռնագրավումը:

5. 1974 թվականից գույքի բռնագրավումը մեծ չափերի հասավ, քանի որ օրենքով կրոնական փոքրամասնություններին արգելվեց գույք ձեռք բերել: Այսպիսով, 1936-ից ի վեր կրոնական փոքրամասնությունների ձեռք բերած գույքը բռնագրավվել է պետության կողմից: Դրանով պետությունը ոտնահարեց ոչ

[1] Նույն տեղում, էջ 172-173:

մուսուլման փոքրամասնությունների՝ սեփական միջոցների հաշվին կառույցներ հիմնելու և ղեկավարելու ազատությունը։

Մի խոսքով, չնայած Թուրքիայի աշխարհիկացմանը, գործնականում մուսուլմանների տիրապետող դիրքն այլակրոնների և, մասնավորապես, քրիստոնյաների նկատմամբ պահպանվեց։

Բնականաբար, քրիստոնյաների նկատմամբ իրականացված այս գործողություններն ուղղված էին նաև հայ ավետարանականների դեմ, որոնք նույնպես էապես տուժեցին դրանցից։ Ավելին, նրանց դրությունն էլ ավելի էր բարդացնում այն հանգամանքը, որ նրանք պաշտոնապես կրոնական համայնք չէին դիտվում։ Այդպիսիք համարվում էին հայ առաքելականները, հույն ուղղափառները և հրեաները։ Այսինքն, եթե ճանաչված փոքրամասնությունների նկատմամբ ոտնձգություններ կատարելիս Թուրքիան շատ թե քիչ կաշկանդված էր միջազգային իրավունքի նորմերով կամ իր ստանձնած միջազգային պարտավորություններով, ապա կրոնական փոքրամասնության կարգավիճակ չունեցող համայնքների նկատմամբ նա կարող էր ավելի ազատ գործել։ Ուստի, պատահական չէ, որ հայ ավետարանականների ցուցաբերած ցանկացած ակտիվություն բախվում էր պետության կոշտ հակազդեցությանը, հատկապես եթե այդ ակտիվությունը կրոնականի հետ մեկտող զուգորդվում էր նաև ազգային կամ ազգանպաստ գործողություններով։ Հետցեղասպանական շրջանում ազգային հողի վրա այդպիսի հակազդեցության հատկանշական օրինակ է 1982թ. մարտին հայ ավետարանական գործիչ Հրանտ Գուզելյանի դատապարտումը 16-

ամսյա բանտարկության «հակաթուրքական քարոզչության» և «թուրք երեխաներին հայացնելու» մեղադրանքներով[1]:

Քրիստոնյաների նկատմամբ անհանդուրժողականության և հալածանքների հետևանքը հանրապետական Թուրքիայում հայ ավետարանական համայնքի թվաքանակի շարունակական նվազումն էր քրիստոնյաների ընդհանուր թվաքանակի նվազման հետնապատկերին: Ի՞նչը կարող է ավելի վառ ապացույց լինել Թուրքիայում քրիստոնյաների նկատմամբ իրականացված հալածանքների և հետապնդումների, քան այն, որ քրիստոնյաների տեսակարար կշիռը ներկայում կազմում է ընդհանուր բնակչության ընդամենը 0.6 տոկոսը մի երկրում, որի տարածքը եղել է բազմաթիվ քրիստոնյա ժողովուրդների (հույներ, հայեր և այլն) հայրենիքը, իսկ Կ.Պոլիսը, մինչև 1453թ. թուրքերի կողմից գրավումը, եղել է ուղղափառ քրիստոնեության համաշխարհային կենտրոնը[2]:

Ինչ վերաբերում է հայ ավետարանական կառույցներին, ապա դրանց թվաքանակի շարունակական նվազումը նույնպես ակնհայտ երևույթ է հանրապետական Թուրքիայում: Այսպես, եթե հետցեղասպանական վաղ շրջանում հայ ավետարանականները Թուրքիայում ունեին 31 եկեղեցի, ապա 1996թ. Թուրքիայում՝ Ստամբուլում, գործում էր ընդամենը 5 հայ ավետարանական եկեղեցի՝ Ավետարանական Ամենասուրբ Երրորդության եկեղեցին, Գեդիքփաշայի Հայ ավետարանական եկեղեցին, Էմանուել ժողովարանը, Հաքյոլի ավետարանական եկեղեցին և Ուսքուդարի Հայ ավետարանական եկեղեցին[3]:

[1] *Hofmann T.,* Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic, Bruxelles, 2002, p. 19.
[2] Տե՛ս Христианство в Турции http://ru.wikipedia.org/wiki/Христианство_в_Турции
[3] *Խաչիկյան Տ.,* նշվ. աշխ., էջ 85:

Հայ ավետարանական համայնքի արդի վիճակը և հեռանկարները

Արդի փուլում, չնայած առկա դժվարություններին և մարտահրավերներին, Թուրքիայի հայ ավետարանականները, որպես էթնոդավանանքային միավոր, ցուցաբերում են բավարար կենսունակություն և ակտիվություն, ինչը թույլ է տալիս խոսելու նրանց՝ որպես առանձին համայնքի մասին։

Համայնքի կյանքում տեղի ունեցող միտումները ներկայում հակասական բնույթ ունեն։ Հետևաբար, նրա ճակատագիրը կամ ապագան մեծապես կախված է նրանից, թե այդ միտումներից որոնք կգերակշռեն։ Ըստ այդմ՝ Թուրքիայի հայ ավետարանական համայնքը կարող է կամ լիովին սպառվել, կամ էլ վերածնվել։ Խնդիրը պարզ հասկանալու համար նպատակահարմար է այն դիտարկել հետևյալ հարթություններում.

- Համայնքի դրությունը թուրքական միջավայրում
- Համայնքի ներուժը
- Իրավական կարգավիճակի հարցը
- Համայնքը որպես գործոն։

Այս խնդիրներն այն հենասյուներն են, որոնց վրա խարսխված է ցանկացած համայնքի կենսունակությունը։

Հայ ավետարանական համայնքը թուրքական միջավայրում

Մի կողմից՝ Թուրքիայի հայության, մյուս կողմից՝ բողոքականության մաս կազմելով՝ հայ ավետարանականները Թուրքիայում փոքրամասնություն են երկակի՝ ազգային և կրոնական իմաստով։ Երկակի կարգավիճակն ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմեր։

Բացասական կողմն այն է, որ դա հանգեցնում է երկակի ճնշումների ու հալածանքների՝ կրոնական և ազգային հողի վրա, քանի որ *«... թուրքական պետությունն իր կառուցվածքով տիպիկ իսլամական պետություն է, որտեղ քրիստոնյա լինելն արդեն իսկ մեծ վտանգ է, առավել ևս, երբ այդ քրիստոնյան հայ է»*[1]:

1. Կրոնական ճնշումները: Հայ ավետարանականները Թուրքիայում ներկայում էլ շարունակում են ենթարկվել քրիստոնյաների նկատմամբ «ավանդաբար» իրականացվող հալածանքներին և հետապնդումներին: Քրիստոնյաները ժամանակակից Թուրքիայում ընկալվում են որպես անվստահելի տարր և մշտապես գտնվում են պետության վերահսկողության տակ, որը հետևում է նրանց բոլոր գործողություններին:

Քրիստոնյաների, մասնավորապես բողոքականների նկատմամբ հալածանքներին նոր լիցք է հաղորդում վերջին տասնամյակներում կրկին լայն թափ ստացած միսիոներական շարժումը: Դրա հետևանքով Թուրքիայում վերջին շրջանում տարածվում է քրիստոնեացման գործընթացը, որի արդյունքում այդ երկրի քաղաքացիներ, այդ թվում նաև թուրքեր, ընդունում են քրիստոնեություն: Համաձայն Թուրքիայի հատուկ ծառայությունների կանխատեսումների՝ միսիոներական գործունեության արդյունքում 2020թ. Թուրքիայում քրիստոնեություն ընդունածների թիվը կկազմի բնակչության 10%-ը[2]: Հաշվի առնելով, որ Թուրքիայի բնակչությունը ներկայում կազմում է ավելի քան 75 մլն, կարելի է ասել, որ սույն կանխատեսման համաձայն՝ քրիստոնյաների թվաքանակը Թուրքիայում 2020թ. կկազմի մոտ 7 մլն:

[1] Նույն տեղում, էջ 87:

[2] *Խաչիկյան Տ.,* Միսիոներությունը Թուրքիայում, Կրոն և հասարակություն, 2009, դեկտեմբեր, թիվ 9, էջ 39:

Այս «լավատեսական» կանխատեսումներն առաջին հայացքից չափազանցություն են թվում, սակայն ավելորդ չէ ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների վրա.

- *Թուրքիայում քրիստոնեական գրականության (Աստվածաշնչի) սպառման ծավալները:* Այսպես, միայն 2011թ. ընթացքում Թուրքիայում վաճառվել է 8 մլն օրինակ Աստվածաշունչ՝ թուրքերենով[1]:
- *Թուրքիայում գտնվող քրիստոնեական սրբավայրեր ուխտի գնացող մարդկանց թվաքանակը:* Ամեն տարի քրիստոնեական սրբավայրեր ուխտի են գնում տասնյակ հազարավոր մարդիկ:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ քրիստոնեություն ընդունածները թաքցնում են իրենց կրոնական ինքնությունը՝ արտաքնապես ձևանալով իբրև մուսուլմաններ:

Ինչևէ, Թուրքիայի քրիստոնեացումը հարուցում է իշխանությունների և ազգայնամոլ տարրերի անհանգստությունն ու հակազդեցությունը: Այն դրսևորվում է քրիստոնյաների (բողոքականների) դեմ սպառնալիքների, բռնությունների ու սպանությունների տեսքով, որոնք զուգորդվում են իրավապահ մարմինների կողմից այդ հանցագործությունները բացահայտելու «անկարողությամբ» կամ դատարանների կողմից հանցագործների նկատմամբ կայացված մեղմ վճիռներով[2]: Միսիոներական

[1] Десятки тысяч турок поклонились св. Георгию на острове Принкипо, http://drevo-info.ru/news/12819.html

[2] Մանրամասն տե՛ս *Օհրինգ Օ., Ջեյհան Գ.,* Թուրքիայում կրոնական ազատությունների մասին հետազոտություն, http://www.religions.am/index.php?option=com_content&view=article&id=1288; *Խաչիկյան Տ.,* նշվ. աշխ., էջ 39-44:

գործունեության դեմ հակազդեցության թիրախ են դառնում նաև հայ ավետարանականները: Այդպիսի հակազդեցության օրինակ է 2007թ. ապրիլի 18-ին Մալաթիայի «Զիրվե» հրատարակչատանը թուրք ազգայնամոլների կողմից երեք բողոքականների դաժան սպանությունը, որոնցից երկուսը, ըստ որոշ ենթադրությունների, քրիստոնեության վերադարձած իսլամացված հայերի սերունդներ էին[1]: 2012թ. ապրիլին՝ քրիստոնեական Զատկի տոնի նախօրեին, Ստամբուլի իր բնակարանում մի խումբ երիտասարդների կողմից ծեծի է ենթարկվել բողոքական հոգևորական Սեմիր Սերքեքը: Հանցագործները ներխուժել են հոգևոր հովվի տուն, սպառնացել հաշվեհարդարով, փորձել հարկադրել իսլամ ընդունել կամ իր համայնքի հետ միասին հեռանալ շրջանից և ծեծել են նրան[2]:

Թուրքիայում բողոքականների նկատմամբ իրականացվող հալածանքներն ու հետապնդումները մշտական վախի մթնոլորտում են պահում նրանց: Վերջիններս անվտանգ չեն զգում իրենց երկրում: *«Մենք շատ լավ գիտենք, որ Մալաթիայում իրականացված սպանությունները վերջինը չեն լինի»*,- 2007թ. ապրիլյան ողբերգությունից հետո մտահոգություն է հայտնում Բողոքական եկեղեցիների թուրքական միության նախագահ Իսհան Օզբեկը[3]:

Իրավիճակն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ հալածանքներն ու ճնշումները զուգորդվում են մամուլում բողո-

[1] Տե՛ս *Մելքոնյան Ռ.,* Կրոնական հալածանքների նոր ալիք Թուրքիայում (Մալաթիայի սպանդի շուրջ), Հանրապետական, 2007, թիվ 5, էջ 12-13:

[2] В Стамбуле в Страстную субботу мусульмане избили протестантского пастора, требуя, чтобы он перешел в ислам, http://drevo-info.ru/news/12738.html

[3] Угроза безопасности христиан в Турции продолжает расти, http://baznica.info/article/ugroza-bezopasnosti-khristian-v-turtsii-pr

քականների մասին տեղ գտած բացասական հրապարակումներով և մեղադրանքներով՝ ուղեղների լվացում, քարոզչական կամ մարդկանց հավաքագրելու նպատակով փողի և թմրամիջոցների օգտագործում և այլն: Զրպարտություններով և հակաքարոզչությամբ ողողված տեղեկատվական դաշտն էլ ավելի է բորբոքում իսլամիստ ծայրահեղականների և ազգայնամոլ տարրերի ատելությունը բողոքականների նկատմամբ՝ նրանց մղելով բռնությունների:

2. Ազգային ճնշումները: Հայ ավետարանականների դրությունն ավելի է ծանրացնում նրանց հայ լինելու հանգամանքը, քանի որ հայատյացության քաղաքականությունը Թուրքիայում, ինչպես նախկինում, շարունակում է տարածվել Հայության բոլոր դավանանքային հատվածների վրա: Հայ ավետարանականները Թուրքիայում ներկայում շարունակում են հալածանքների ենթարկվել իրենց հայ լինելու համար: Բազմաթիվ հայ ավետարանական գործիչներ ենթարկվել են հալածանքների իրենց գործունեության համար: Ավետարանականներն ընկալվում են որպես արևմտյան երկրների գործակալներ, որոնք գործում են պետության դեմ: Այդպիսի տեսակետներից մեկը Հայկական հարցի ծագումը պայմանավորում է 19-րդ դարում Օսմանյան կայսրություն բողոքականության ներթափանցմամբ: Ըստ այդ մոտեցման՝ ամերիկյան միսիոներությունն Օսմանյան Թուրքիայում, բողոքականացնելով և հավաքագրելով հայերին, նպատակ էր հետապնդում ստեղծել հայկական բողոքական կայսրություն[1]:

[1] *Bayzan A.R.,* Protestant Missionary Operations on Turkey, http://www.stradigma.com/english/april2003/articles_11.html

Հայ ավետարանականների նկատմամբ իրականացված բռնությունների դիտարկումը թույլ է տալիս նկատել դրանց առնչությամբ հետևյալ օրինաչափությունները.

1. *Ծայրահեղականության և ազգայնամոլության տարածումը երիտասարդության շրջանում:* Թե՛ ազգային և թե՛ կրոնական հողի վրա ծայրահեղականների հալածանքներն իրականացվում են հիմնականում երիտասարդների կողմից: Այսպես, Հրանտ Դինքին սպանած Օգյուն Սամաստը 17 տարեկան պատանի էր[1]: Մալաթիայի «Զիրվե» հրատարակչատան հանցագործությունից հետո ոստիկանության կողմից ձերբակալվածներից 5-ը 19-20 տարեկան երիտասարդներ էին, որոնք բնակվում էին ուսանողական հանրակացարանում[2]:
2. *Բռնությունների կրոնական և ազգայնական շարժառիթը:* Շատ հաճախ ավետարանականների նկատմամբ իրականացված բռնությունները պայմանավորված են լինում միաժամանակ և՛ կրոնական, և՛ ազգայնամոլական դրդապատճառներով: Եվ հնարավոր չէ հստակ որոշել, թե դրանցից որն է գերակշռում կամ առավել մեծ դեր խաղում:

Դրական կողմն այն է, որ, լինելով Թուրքիայի բողոքականների մի շերտը, հայ ավետարանականները որոշակիորեն վայելում են արտասահմանյան բողոքական կազմակերպությունների հովանավորությունը: Ինչպես արդեն վերը նշվել է, դեռևս 19-րդ դարում հայերի՝ բողոքականություն ընդունելու դրդապատ-

[1] Տե՛ս Hrant Dink murder suspect caught, http://news.bbc.co.uk/2/hi/europe/6283477.stm
[2] Угроза безопасности христиан в Турции продолжает расти, http://baznica.info/article/ugroza-bezopasnosti-khristian-v-turtsii-pr

ճառ էր եվրոպացիների կողմից մուսուլմանների հալածանքներից պաշտպանված լինելու ցանկությունը: Հիմա էլ հայ ավետարանականների գործունեությունը Թուրքիայում տեղավորվում է այդ երկրի ընդհանուր բողոքականության գործունեության շրջանակներում:

Կարելի է նշել երկու բնագավառ, որտեղ արտասահմանյան բողոքական կառույցների աջակցությունն ավելի շոշափելի է.

Նյութական: Արտաքին նյութական աջակցությունը վճռական նշանակություն ունի համայնքի գոյապահպանման համար, քանի որ Ստամբուլի հայ ավետարանական եկեղեցիները, Թուրքիայի մյուս բողոքական եկեղեցիների նման, «գոյատևում են ամենից առաջ Եվրոպայից և ԱՄՆ-ից ստացվող նվիրատվություններով»[1]:

Տեղեկատվական: Բացի ֆինանսականից, միջազգային բողոքական կազմակերպությունների աջակցությունը զգալի է նաև տեղեկատվական դաշտում: Վերջիններս իրենց լրատվամիջոցներով անդրադառնում են Թուրքիայում բողոքականների դրությանը, նրանց խնդիրներին և այլն: Սա կարևոր նշանակություն ունի Թուրքիայում բողոքականների և ընդհանրապես կրոնական փոքրամասնությունների վիճակի մասին միջազգային հասարակական կարծիքի ձևավորման, ինչպես նաև նրանց խնդիրներն արտաքին աշխարհում բարձրաձայնելու տեսակետից:

Ընդհանուր առմամբ, արտասահմանյան բողոքական կազմակերպությունների հովանավորությունը թույլ է տալիս հայ ավետարանականներին ավելի ակտիվ գործունեություն ծավա-

[1] *Բառում Վ.,* նշվ. աշխ., էջ 171:

լել ինչպես հոգևոր, այնպես էլ ազգային հիմնախնդիրների ոլորտներում: Հայ ավետարանական հոգևորականները, մասնավորապես, ավելի հաճախ են լինում Արևմտյան Հայաստանի բնակավայրերում՝ այնտեղ իրականացնելով հոգևոր-քարոզչական աշխատանք: Ինչ վերաբերում է ազգային խնդիրներին, ապա ավետարանական հայերը նաև նախանձախնդիր և հետևողական են Թուրքիայում Հայոց ցեղասպանության, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և այլ հիմնախնդիրների բարձրացման հարցերում: Թուրքիայի պես երկրում նման հարցերի արծարծումը մեծ համարձակություն է պահանջում: Այս ամենի հիմքում, ամենայն հավանականությամբ, ընկած է արտասահմանյան բողոքական կառույցների կողմից որոշակի պաշտպանվածության զգացումը:

Համայնքի ներուժը

Թուրքիայի հայ ավետարանական համայնքի ներուժը գնահատելու համար առանձնացվել է երկու չափորոշիչ՝ մարդկային և կազմակերպական, որոնք էլ իրենց հերթին բաժանվել են ենթաչափորոշիչների (տե՛ս Հավելված, Աղյուսակ 1): Դրանցից յուրաքանչյուրի համար կիրառվել է առանձին չափանիշ, որոնց հիման վրա համայնքը Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների մեջ գնահատվել է որպես փոքր, միջին կամ մեծ ներուժ ունեցող (տե՛ս Հավելված, Աղյուսակ 2):

Մարդկային չափորոշիչը ներառում է թվաքանակի և սփռվածության ենթաչափորոշիչները: Նախքան այդ ենթաչափորոշիչների վերլուծությանն անդրադառնալը հարկ է նշել, որ մարդկային չափորոշիչով դիտարկելիս խնդիրը պարզ հասկա-

նալու համար անհրաժեշտ է Թուրքիայում բնակվող հայ ավետարանականներին պայմանականորեն բաժանել երկու հատվածի՝ պաշտոնական (պաշտոնապես հայտնի) հայ ավետարանականներ և բողոքականություն ընդունած իսլամացված հայերի սերունդներ:

Թվաքանակի հարցում համայնքի ներուժի գնահատման տեսանկյունից կարևոր է այն, թե արդյոք նրա անդամների թիվը փոքր է 1000-ից, կազմում է 1000-2000, թե ավելի է 2000-ից: Ըստ այդմ՝ այն կարող է գնահատվել որպես թույլ, միջին կամ մեծ ներուժ ունեցող:

Թուրքիայում հայ ավետարանականների թվաքանակի մասին խոսելիս, բացի ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բռնաճնշումների ու հալածանքների քաղաքականությունից, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ երկրում լայնորեն ծավալվող միսիոներական շարժումը: Վերջինս տարածվում է նաև ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայերի սերունդների վրա, որի հետևանքով նրանցից շատերը կրկին ընդունում են քրիստոնեություն (այդ թվում նաև՝ բողոքականություն), ինչը նշանավորվում է նաև ազգային արմատներին վերադարձի միտումով[1]: Օրինակ, Թուրքիայի բողոքական կազմակերպությունների տվյալներով՝ Ադանայի բողոքականներից շատերն ունեն հայկական ծագում[2]:

[1] *Խաչիկյան Տ.,* նշվ. աշխ., էջ 86-87:
[2] *Акопян А.,* О чем молчит Адана
http://www.yerevan-city.com/2010/01/03/o-chem-molchit-adana.html

Բռնի իսլամացվածների վերաքրիստոնեացման այս գործընթացը նպաստում է հայ ավետարանականների թվաքանակի ավելացմանը։

Համաձայն որոշ տվյալների՝ Թուրքիայի հայ ավետարանականների թվաքանակը ներկայում կազմում է մոտ 500 մարդ[1]։ Սակայն այդ տվյալները վերաբերում են միայն պաշտոնապես հայտնի հայ ավետարանականներին՝ չընդգրկելով միսիոներական գործունեության արդյունքում քրիստոնեություն ընդունած իսլամացված հայերի սերունդներին։ Թե որքան է վերջիններիս թվաքանակը՝ դժվար է ասել, քանի որ նրանք ներկայացնում են խայտաբղետ հանրույթ։ Բողոքականություն ընդունած՝ նախկինում իսլամացված հայերի սերունդների թվաքանակի հստակեցման հարցը բախվում է մի շարք բարդությունների.

- Դժվար է որոշել այդ մարդկանց ազգային ինքնության պահպանվածության աստիճանը, քանի որ այն յուրաքանչյուր անհատի կամ խմբի համար տարբեր է։
- Դժվար է որոշել այն մարդկանց շրջանակը, որոնց մեջ քրիստոնեության ընդունմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն վերականգնվել է ազգային ինքնությունը և այլն։

Այսպիսով, բողոքականություն ընդունած՝ նախկինում իսլամացված հայերի սերունդների թվաքանակի մասին հստակ տվյալները բացակայում են, ինչն էլ առկախում է Թուրքիայի ընդհանուր հայ ավետարանական համայնքի ճշգրիտ թվաքանակի որոշման հարցը։ Այնուամենայնիվ, դատելով միսիոներական գործունեության ակտիվությունից՝ կարելի է ենթադրել, որ

[1] Հայ սփյուռք հանրագիտարան, Եր., 2003, էջ 185։ *Hofmann T.,* նշվ. աշխ., էջ 9։

Թուրքիայի հայ ավետարանական համայնքի (և՛ պաշտոնական հայ ավետարանականների, և՛ բողոքականություն ընդունած իսլամացված հայերի սերունդների) ընդհանուր թվաքանակը գերազանցում է երկու հազարը։

Սփռվածության առումով կարևորություն է ներկայացնում այն, թե արդյոք Թուրքիայի հայ ավետարանական համայնքը բնակվում է մեկ վայրում, երկու վայրում, թե սփռված է երկուսից ավելի վայրերում։ Ըստ այդմ՝ այն կարող է դարձյալ գնահատվել որպես փոքր, միջին կամ մեծ ներուժ ունեցող։

Հարկ է նշել, որ համայնքի սփռվածությունն աչքի է ընկնում պաշտոնապես հայտնի ավետարանականների և միսիոներական գործունեության արդյունքում բողոքականություն ընդունած բռնի իսլամացված հայերի սերունդների յուրօրինակ տեղաբաշխվածությամբ։ Պաշտոնապես հայտնի հայ ավետարանականները բնակվում են Կ.Պոլսում, մինչդեռ բողոքականություն ընդունած իսլամացված հայերի սերունդները՝ հիմնականում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակավայրերում։ Այդպիսի խմբեր կան, օրինակ, Ադանայում (Կիլիկիա), Մալաթիայում և այլուր։

Այսպիսով, որոշակի վերապահումներով կարելի է ասել, որ մարդկային չափորոշիչի երկու ենթաչափորոշիչներով էլ՝ թվաքանակի և սփռվածության, Թուրքիայի հայ ավետարանական համայնքն ընդհանուր Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների շարքում որոշակի ներուժ ունեցող համայնք է։ Նրա ներուժը մեծացնում են բողոքականություն ընդունած իսլամացված հայերի սերունդները։

Կազմակերպական չափորոշիչը բաժանվում է թվաքանակի, տեսակային բազմազանության, սփռվածության և գործունեության նշանակալիության ենթաչափորոշիչների։

- *Թվաքանակի* առումով կարևոր է, թե արդյոք Թուրքիայի հայ ավետարանական կազմակերպական կառույցների թիվը կազմում է մինչև 5, 5-10, թե 10-ից ավելի։
- *Տեսակային բազմազանության* առումով կարևորվում է այն հարցը, թե արդյոք Թուրքիայի հայ ավետարանական համայնքն ունի մեկ, երկու, թե երկուսից ավելի տեսակի կազմակերպական կառույցներ։
- *Սփռվածության* առումով կարևոր է, թե արդյոք հայ ավետարանական կազմակերպական կառույցները Թուրքիայում գտնվում են մեկ, երկու, թե երկուսից ավելի վայրերում։
- *Գործունեության նշանակալիության* տեսակետից կարևորվում է այն հարցը, թե արդյոք Թուրքիայի հայ ավետարանական կազմակերպությունների գործունեությունը տարածվում է միայն այդ երկրի հայ ավետարանական համայնքի վրա, այսինքն՝ ունի զուտ տեղական նշանակություն, թե դուրս է գալիս համայնքի շրջանակներից՝ կրելով տարածաշրջանային կամ համազգային նշանակություն։

Ըստ կիրառված չափանիշների՝ թվաքանակի, տեսակային բազմազանության և սփռվածության ենթաչափորոշիչներից յուրաքանչյուրով Թուրքիայի հայ ավետարանական համայնքը կարող է համարվել համապատասխանաբար փոքր, միջին կամ մեծ ներուժ ունեցող։ Իսկ գործունեության նշանակալիության ենթաչափորոշիչով այն կարող է գնահատվել որպես փոքր կամ

մեծ ներուժ ունեցող: Այս դեպքում միջին տարբերակ (միջին ներուժ) չի կարող լինել:

Ցավոք, պետք է նշել, որ վերոհիշյալ չորս ենթաչափորոշիչներով էլ Թուրքիայի հայ ավետարանական համայնքի ներկայիս դրությունը բարվոք չէ: Դրանցից յուրաքանչյուրով էլ այն համարվում է թույլ ներուժ ունեցող համայնք:

Թուրքիայում տիրող ազգային և կրոնական անհանդուրժողականության և հալածանքների մթնոլորտն իր բացասական հետևանքներն է ունեցել ոչ միայն հայ ավետարանականների թվաքանակի, այլև նրանց կազմակերպական կառույցների վրա՝ հանգեցնելով վերջիններիս թվաքանակի և տեսակային բազմազանության կրճատմանը: Ի տարբերություն շատ այլ երկրների հայ ավետարանական համայնքների, որոնց բնորոշ է տարատեսակ (հոգևոր-եկեղեցական, կրթամշակութային, սոցիալական, տեղեկատվական) կառույցների առատությունը, Թուրքիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցները ներկայում խիստ սահմանափակ թվով եկեղեցական հաստատություններն են: Երբեմնի բազմաթիվ ավետարանական եկեղեցիների փոխարեն, որոնք սփռված էին Թուրքիայի հայաշատ վայրերում, կա ընդամենը երկու Հայ Ավետարանական եկեղեցի՝ Կ.Պոլսի Գեդիքփաշա և Բեյօղլու թաղամասերի Հայ Ավետարանական եկեղեցիները[1]: Եթե Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հայ ավետարանական համայնքն Օսմանյան կայսրությունում ուներ հարյուրավոր կրթական հաստատություններ[2], ապա այժմ այդպիսիք, կարելի է

[1] AMAA Directory 2012: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf
[2] Տե՛ս *Darakjian B.,* Evangelism in thue Early Armenian Evangelical Church, http://www.cacc-sf.org/c-eeaBND.html

ասել, այն չունի, եթե հաշվի չառնենք Կ.Պոլսի Գեդիքփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցը: Այլ կարգի հաստատությունները՝ բարեգործական, տեղեկատվական և այլն, նույնպես բացակայում են:

Նախկինում գործող բազմաթիվ Հայ Ավետարանական եկեղեցիներն ավերված ու լքված են: Ինչ վերաբերում է Հայ Ավետարանական եկեղեցու երբեմնի հարուստ կալվածքներին (դպրոցներ, ճամբարներ, որբանոցներ և այլն), դրանք բռնագրավված են պետության կողմից, և դրանք վերադարձնելու ջանքերն առայժմ արդյունք չեն տվել:

Բռնագրավված գույքի մի մասն էլ թուրքական կառավարությունը վաճառել է մասնավոր անձանց, ինչն ավելի է դժվարացնում դրանց վերադարձման գործը:

Միաժամանակ, Թուրքիայի հայ ավետարանական համայնքն ակնհայտորեն չունի այնպիսի կառույցներ, որոնց գործունեությունը կունենար տարածաշրջանային կամ համազգային նշանակություն: Հայ Ավետարանական երկու եկեղեցիների գործունեությունն ունի զուտ տեղական նշանակություն:

Չնայած Գեդիքփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցում պատարագները մատուցվում են չորս լեզվով՝ հայերեն, թուրքերեն, պարսկերեն և ռուսերեն, քանի որ այցելուների էթնիկ կազմը չի սահմանափակվում միայն հայերով[1], եկեղեցին որոշակիորեն բավարարում է նաև Հայաստանից Թուրքիա մեկնածների հոգևոր և կրթական պահանջմունքները[2], սակայն

[1] Մայրի՛կ, մենք հա՞յ ենք (հարցազրույց Պոլսի Կետիկփաշա թաղամասի Հայ Աւետարանական եկեղեցու հովիւ, վերապատուելի Գրիգոր Աղաբալողլուի հետ), Ազդակ, Բուրջ Համմուդ, 09.06.2009:
[2] Տե՛ս Հայաստանցիները Թուրքիայում, http://old.hetq.am/arm/society/7339/; Հայաստանցիները Թուրքիայում, http://old.hetq.am/arm/society/7356/

դա բավարար չէ նրա գործունեությանը տարածաշրջանային կամ համազգային նշանակություն վերագրելու համար։

Չնայած տխուր պատկերին, այնուամենայնիվ, վերջին շրջանում նկատելի են որոշակի դրական միտումներ, որոնք շարունակվելու դեպքում կարող են հանգեցնել կազմակերպական չափորոշիչի բոլոր չորս ենթաչափորոշիչներով էլ Թուրքիայի հայ ավետարանական համայնքի ցուցիչների բարելավմանը։ Որպես այդպիսի միտումներ, կարելի է առանձնացնել հետևյալները.

- *Հայ ավետարանականների թվաքանակի աճի միտումը։* Իսլամացված հայերի սերունդների կողմից բողոքականության ընդունումը, որը կարող է հանգեցնել նաև ազգային արմատների վերարժևորմանը և Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի տարածքում հայ ավետարանական համայնքների ձևավորմանը, միաժամանակ կարող է առաջացնել հայ ավետարանական կազմակերպական կառույցների (առաջին հերթին՝ եկեղեցիների) անհրաժեշտություն, ինչը ենթադրում է դրանց վերականգնում կամ նորերի հիմնում։
- *Թուրքիայի իշխանությունների կողմից քրիստոնեական եկեղեցիների վերականգնման միտումը։* Վերջին շրջանում Թուրքիայում նկատվում է իշխանությունների կողմից քրիստոնեական եկեղեցիների վերականգնման միտում։ Դրա լավագույն օրինակը 2010թ. Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցու վերանորոգումն ու վերաբացումն էր։ Չնայած եկեղեցին վերականգնվել է որպես պատմամշակութային հուշարձան, սակայն այնտեղ նվազագույնը տարեկան մեկ անգամ մատուցվում է պատարագ[1]։

[1] В Турции разрешат раз в год совершать богослужения в христианских храмах-музеях, http://www.sedmitza.ru/news/855310.html

- *Միջազգային ճնշումը:* Վերջին շրջանում նկատելի է նաև միջազգային ճնշման որոշակի ակտիվացում Թուրքիայի վրա՝ կրոնական փոքրամասնությունների դրությունը բարելավելու առումով: Հայտնի է, որ ԵՄ-ը Թուրքիայի անդամակցության նախապայմաններից մեկն է համարում այդ երկրում կրոնական փոքրամասնությունների դրության բարելավումը, ինչը ներառում է նաև բռնագրավված եկեղեցապատկան գույքի վերադարձը: *«Եվրոպայի համար,- գրում է Վ. Բաումը,- անփոխարինելի արժեքներից են կրոնի, ժողովների և կարծիքի անսահմանափակ ազատությունը, ամեն կարգի դպրոցների արտոնությունն ու նրանց նյութական օժանդակությունը, բոլոր արխիվների բացումը միջազգային հետազոտությունների համար, գողացված եկեղեցական մշակութային ունեցվածքի վերադարձը և դրա պաշտպանությունը (կադաստրում ամրագրված՝ սրբազան սպասք, ձեռագրեր ու գրադարաններ ունենալու իրավունք), ինչպես նաև փոքրամասնությունների համապարփակ պաշտպանությունը»*[1]:

ԱՄՆ-ը նույնպես, ելնելով քաղաքական, այն է՝ այս կամ այն խնդրի առնչությամբ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նկատառումներից, առաջ է քաշում կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը՝ դրա մեջ ներառելով նաև բռնագրավված գույքի վերադարձման հարցը: Այս տեսակետից նշանավոր է հատկապես 2011թ. հունիսի 15-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած 306 բանա-

[1] *Բաում Վ.,* նշվ. աշխ., էջ 176:

ձևը, որը կոչ է անում Թուրքիային *«իրենց օրինական տերերին վերադարձնել բոլոր քրիստոնեական եկեղեցիները և այլ պաշտամունքի վայրերը, վանքերը, դպրոցները, հիվանդանոցները, հուշարձանները, մասունքները, սրբավայրերը և այլ կրոնական գույքը, ներառյալ շարժական գույքը, ինչպիսիք են արվեստի գործերը, ձեռագրերը, զգեստները, անոթները և այլ իրերը»*[1]:

Տեղի տալով միջազգային ճնշումներին և արտաքնապես ցույց տալու համար իրենց երկրի «ժողովրդավարականությունը»՝ Թուրքիայի իշխանությունները նույնպես 2011թ. օգոստոսին ընդունեցին օրենք բռնագրավված եկեղեցական գույքը վերադարձնելու վերաբերյալ, ինչը լայն արձագանք գտավ մամուլում: Ելնելով հարցի կարևորությունից՝ հարկ ենք համարում մի փոքր կանգ առնել դրա վրա:

Չնայած օրենքի ընդունմանը, գործնականում կան մի շարք խոչընդոտներ, որոնք էապես դժվարացնում են բռնագրավված եկեղեցական գույքի վերադարձը: Այդ խոչընդոտները կարելի է բաժանել երկու մասի՝ իրավական և քաղաքական:

Իրավական հարթության մեջ եկեղեցական գույքի վերադարձման խոչընդոտները հիմնականում հետևյալներն են.

1. Ժամանակային սահմանափակումը: Օրենքը նախատեսում է քրիստոնեական փոքրամասնություններին վերադարձնել միայն 1936-ից հետո բռնագրավված գույքը: Մինչդեռ քրիստոնեական փոքրամասնություններից գույքի բռնագրավումը տեղի չի ունեցել միայն 1936թ. հետո: Ավելին, քրիստոնեական

[1] *H.Res,* Resolution 306 Urging the Republic of Turkey to Safeguard its Christian Heritage and to Return Confiscated Church Properties, June 15, 2011. http://www.atour.com/government/pdf/20110615-USCongress-BILLS-112hres306ih.pdf

գույքի բռնագրավումը և ոչնչացումը կամ, այլ կերպ ասած, քրիստոնեական փոքրամասնությունների գույքազրկումը հիմնականում տեղի է ունեցել նախընթաց ժամանակահատվածում՝ ջարդերի ու ցեղասպանության տարիներին: Այդ ժամանակահատվածում է, որ հայերը (առաքելական, կաթողիկե և բողոքական), Պոնտոսի հույները, ասորիները և այլք կորցրեցին իրենց պատկանող եկեղեցական գույքի մեծ մասը: 1936-ից հետո պետության կողմից բռնագրավվել է միայն այդ թվականից հետո ձեռք բերված գույքը: Նշանակում է, որ օրենքի լիակատար կիրառման պարագայում անգամ քրիստոնյա փոքրամասնությունները հնարավորություն են ունենալու հետ ստանալ իրենց կորցրած գույքի միայն փոքր մասը:

2. Եկեղեցիների իրավական կարգավիճակի հարցը: Բոլոր քրիստոնեական համայնքները չէ, որ Թուրքիայում ունեն կրոնական փոքրամասնության կարգավիճակ: Այդ երկրում ավանդաբար՝ դեռևս Օսմանյան կայսրության ժամանակներից, որպես ոչ մուսուլման փոքրամասնություններ դիտվել են Հայ Առաքելական, Հույն Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները և հրեաները: Այդ համակարգը ներմուծվեց Մեհմեդ 2-րդ սուլթանի (1444-1446, 1451-1481թթ.) կողմից[1]: Թեև այս իրավիճակը որոշակիորեն խախտվեց 19-րդ դարում՝ կապված կաթողիկե և բողոքական համայնքների առաջացման և պետության կողմից ճանաչվելու հետ, սակայն հետագայում՝ Առաջին աշխարհամարտից հետո, վերականգնվեց:

Կրոնական փոքրամասնության կարգավիճակի բացակայությունը զգալիորեն սահմանափակում է շատ համայնքների

[1] *Բայբուրդյան Վ.,* նշվ. աշխ., էջ 150-151:

գործունեության հնարավորությունները, մասնավորապես՝ իրենցից խլված գույքը հետ ստանալու հարցում:

3. Ժամկետի սահմանափակությունը: Օրենքը մեկ տարի ժամկետ է սահմանում, որպեսզի կրոնական փոքրամասնությունները հայտ ներկայացնեն իրենց պատկանող գույքը հետ ստանալու համար[1]: Հաշվի առնելով, որ հայտի կազմումը բավական բարդ և տևական գործընթաց է՝ կապված բազմաթիվ հաշվարկների ու փաստաթղթերի ձեռքբերման և հստակեցման հետ, հասկանալի է, որ այդ ժամկետը բավարար չէ հայտերի պատշաճ կազմման և եկեղեցական գույքի հետ ստացման համար:

4. Գույքի վաճառված լինելը: Ինչպես վերը նշվել է, բռնագրավված գույքի մի մասն էլ թուրքական կառավարությունը ժամանակին վաճառել է մասնավոր անձանց: Վաճառված գույքի առնչությամբ օրենքը նախատեսում է փոխհատուցում կրոնական համայնքներին[2]: Որքանով, սակայն, այդ փոխհատուցումը կլինի համարժեք և թույլ կտա լիովին վերականգնել պատճառված վնասը՝ դժվար է ասել:

Քաղաքական խոչընդոտներից հիմնականում կարելի է առանձնացնել երկուսը.

1. *Բյուրոկրատական քաշքշուկներ:* Կրոնական փոքրամասնություններն իրենց պատկանող գույքը հետ ստանալու

[1] В Турции реализации закона о возвращении немусульманским религиозным общинам конфискованного имущества мешают бюрократические препоны, http://drevo-info.ru/news/11648.html

[2] Նույն տեղում: Болгарской церковной общине в Стамбуле будут возвращены ранее конфискованные объекты недвижимого имущества, http://drevo-info.ru/news/11553.html; Турция вернет христианам и иудеям конфискованную собственность, http://drevo-info.ru/news/11330.html

հարցում հաճախ բախվում են լուրջ բյուրոկրատական խնդիրների[1], ինչն էապես խոչընդոտում է ընդունված օրենքի կենսագործմանը:

2. *Քաղաքական շահարկումներ:* Թուրքական կողմը քրիստոնեական փոքրամասնությունների նկատմամբ իր պարտավորությունների կատարումը պայմանավորում է համապատասխան երկրներում մուսուլմանական փոքրամասնությունների խնդիրների լուծումով, ինչը լրացուցիչ բարդություններ է հաղորդում առանց այդ էլ ստեղծված բարդ իրավիճակին: Օրինակ՝ Թուրքիայի կառավարության խոստացած՝ հունական աստվածաբանական դպրոցի վերաբացումը Ստամբուլին մերձակա Հեյբելի կղզում ԵՄ հարցերով նախարար Է.Բաղըշը կապել է Հունաստանի իշխանությունների կողմից մուսուլման փոքրամասնությունների դրությունը բարելավելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի հետ[2]:

Վերոնշյալ իրավական և քաղաքական խոչընդոտներն ակնհայտ են դարձնում թուրքական իշխանությունների կողմից ընդունված օրենքի ձևական բնույթը: Վերջիններս իրականում վարում են ոչ թե կրոնական փոքրամասնությունների ոտնահարված իրավունքները վերականգնելու, այլ արտաքին աշխարհում ժողովրդավարական երկրի համբավ ձեռք բերելու քաղաքականություն:

[1] Տե՛ս В Турции реализации закона о возвращении немусульманским религиозным общинам конфискованного имущества мешают бюрократические препоны, http://drevo-info.ru/news/11648.html

[2] Открытие Халкинской богословской школы зависит от встречных шагов со стороны Греции, заявил турецкий министр, http://drevo-info.ru/news/12661.html

Այս պատճառով է, որ Թուրքիայի քրիստոնյա համայնքները կարողացել են արձանագրել չնչին ձեռքբերումներ իրենց պատկանող գույքի հետ ստացման գործում: Թուրքական կառավարությունը միայն որոշ կալվածքներ է վերադարձրել Կ.Պոլսի հայոց և հունաց պատրիարքարաններին[1]: Դրանով, բնականաբար, խնդիրը լուծված չի կարելի համարել, քանի որ «կան հազարավոր առգրավված եկեղեցիներ և (հայ- *Վ.Հ.*) համայնքին պատկանող կալվածքներ Թուրքիայի ամբողջ տարածքում, որոնք պետք է վերադարձվեն իրենց օրինական տերերին»[2]:

Չնայած օրենքի կենսագործման հետ կապված դժվարություններին, այն, այնուամենայնիվ, որոշակի հեռանկար է բացում ինչպես Հայ Առաքելական, այնպես էլ Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների համար իրենցից բռնագրավված գույքը հետ ստանալու տեսանկյունից: Այս, ինչպես նաև այլ հարցերում, բացի ներազգային (հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական) համագործակցությունից, կարևոր նշանակություն ունի նաև Թուրքիայի այլ եկեղեցիների հետ համագործակցությունը: Խոսքը վերաբերում է ոչ միայն մյուս բողոքական եկեղեցիների, այլև ընդհանրապես քրիստոնեական եկեղեցիների հետ համագործակցությանը:

Այսպիսով, մարդկային չափորոշիչի երկու ենթաչափորոշիչներով էլ Թուրքիայի հայ ավետարանական համայնքը որո-

[1] Տե՛ս նույն տեղում: Турецкие власти начинают возвращать конфискованную недвижимость Константинопольского Патриархата, http://drevo-info.ru/news/12646.html; Турецкие власти вернули Константинопольской Патриархии здание школы в Галате, http://drevo-info.ru/news/12343.html

[2] *Մասունյան Հ.,* Ինչպե՞ս պետք է Սփյուռքն արձագանքի Թուրքիայի մերձեցման նախաձեռնություններին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6508&sphrase _id=17981

շակի վերապահումներով գնահատվում է որպես որոշակի ներուժ ունեցող: Տրամագծորեն հակառակ պատկերն է կազմակերպական չափորոշիչով հարցի դիտարկման պարագայում, որի չորս ենթաչափորոշիչներով էլ Թուրքիայի հայ ավետարանական համայնքը գնահատվում է որպես փոքր ներուժ ունեցող: Եթե յուրաքանչյուր ենթաչափորոշիչով որպես մեծ ներուժ ունեցող գնահատվելու դեպքում Թուրքիայի հայ ավետարանական համայնքին տանք 3, միջին ներուժ ունեցող գնահատվելու դեպքում՝ 2 և փոքր ներուժ ունեցող գնահատվելու դեպքում՝ 1 միավոր, ապա բոլոր ենթաչափորոշիչների հանրագումարային միավորը Թուրքիայի հայ ավետարանական համայնքի պարագայում կկազմի 10 (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Թուրքիայի հայ ավետարանական համայնքի ներուժային միավորը

Չափորոշիչներ	Ենթաչափորոշիչներ	Միավոր
Մարդկային	Թվաքանակ	3
	Սփռվածություն	3
Կազմակերպական	Թվաքանակ	1
	Բազմազանություն	1
	Սփռվածություն	1
	Գործունեության նշանակալիություն	1
	Ընդհանուր	10

Մեր կողմից իրականացված Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների (Լիբանան, Սիրիա, Իրան, Թուրքիա, Իրաք, Եգիպտոս) ներուժի գնահատման ժամանակ բոլոր ենթաչափորոշիչներով 6-9 հանրագումարային միավոր

ունեցող համայնքները գնահատվել են որպես փոքր, 10-15 հանրագումարային միավոր ունեցողները՝ միջին և 15-18 հանրագումարային միավոր ունեցողները՝ մեծ ներուժ ունեցող համայնքներ[1]: Այսպիսով, բոլոր ենթաչափորոշիչների ցուցիչներն ի մի բերելով՝ կարելի է ասել, որ Թուրքիայի հայ ավետարանական համայնքը 10 միավորով Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների մեջ ընդհանուր առմամբ միջին ներուժ ունեցող համայնք է (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների վարկանիշավորումը և դասակարգումն ըստ ներուժի

	Երկիր	Մարդկային չափորոշիչ		Կազմակերպական չափորոշիչ				Հանրագ. միավոր
		Քանակ	Դասակարգում	Քանակ	Գործունեության բազմազանություն	Գործունեության ինտենսիվություն	Գործ. դասակարգում	
Մեծ ներուժ	Լիբանան	3	3	3	3	3	3	18
	Սիրիա	3	3	3	3	3	1	16
Միջին ներուժ	Իրան	2	3	2	3	1	1	12
	Թուրքիա	**3**	**3**	**1**	**1**	**1**	**1**	**10**
Փոքր ներուժ	Իրաք	1	1	2	2	1	1	8
	Եգիպտոս	1	1	1	1	1	1	6

[1] Առավել մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները, 21-րդ ԴԱՐ, 2012, թիվ 4, էջ 98-99:

Միաժամանակ, հարկ է նշել, որ մարդկային չափորոշիչը կարևորության տեսակետից առաջնայնություն ունի կազմակերպական չափորոշիչի նկատմամբ: Սա նշանակում է, որ կազմակերպական չափորոշիչի ցուցանիշները որոշակիորեն պայմանավորված կամ ածանցված են մարդկային չափորոշիչի ցուցանիշներից:

Արդ, Թուրքիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցների հետագա վիճակը, համայնքի ընդհանուր ներուժը պայմանավորված է մարդկային չափորոշիչի ցուցանիշների դինամիկայով: Եթե այդ ցուցանիշների բարելավման ներկայիս դրական միտումը շարունակվի, ապա դա կհանգեցնի նաև կազմակերպական չափորոշիչի ցուցանիշների բարելավմանը: Հակառակ պարագայում լուրջ սպառնալիքի տակ կհայտնվի անգամ ներկայում գործող փոքրաթիվ կառույցների գոյությունը, ըստ էության՝ վերջնական սպառման մարտահրավերի առջև կանգնեցնելով ողջ համայնքը:

Իրավական կարգավիճակի կամ գրանցման հարցը

Ներկայում Թուրքիայում կրոնական փոքրամասնության կարգավիճակ ունեն միայն Հայ Առաքելական եկեղեցին, Հույն Ուղղափառ եկեղեցին և հրեաները, այսինքն՝ պետությունը միայն այս համայնքներն է պաշտոնապես ճանաչում որպես կրոնական համայնքներ կամ փոքրամասնություններ: Իսկ դեֆակտո առկա մյուս քրիստոնեական համայնքները, ինչպիսիք են քրիստոնյա արաբները, ասորիները, Հռոմի Կաթողիկե եկեղեցին, Հայ Կաթողիկե եկեղեցին, բողոքական ուղղության համայնքները, այդ թվում նաև Հայ Ավետարանական եկեղեցին,

պետության կողմից որպես կրոնական փոքրամասնություններ պաշտոնապես ճանաչված չեն: Թեև պետությունն ընդունում է նրանց գոյության փաստը, սակայն հրաժարվում է նրանց իրավական կարգավիճակ տալուց: Անգամ Հռոմի Կաթողիկե եկեղեցին, չնայած Վատիկանի ջանքերին (Վատիկանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններն ունեն ավելի քան կեսդարյա պատմություն[1]), դեռևս չի կարողացել Թուրքիայում ստանալ կրոնական փոքրամասնության կարգավիճակ[2]:

Կրոնական փոքրամասնության կարգավիճակի բացակայությունը հայ ավետարանական համայնքին ճանաչված համայնքների համեմատ աննպաստ դրության մեջ է դնում հետևյալ առումներով.

1. *Կառույցներ հիմնելու և ղեկավարելու իրավունքը:* Եթե ճանաչված համայնքներն իրավունք ունեն «*...իրենց սեփական ծախսերով հիմնելու, կառավարելու և վերահսկելու ցանկացած բարեգործական, կրոնական և սոցիալական կառույց, դպրոցներ և այլ կրթական ու ուսումնական հաստատություններ*»[3], ապա իրավական կարգավիճակ չունեցող համայնքները չեն օգտվում նման իրավունքից:
2. *Լեզվի խնդիրը:* Իրավական կարգավիճակ ունեցող համայնքներն իրավունք ունեն իրենց հիմնած կառույցներում ազատ օգտագործել իրենց մայրենի լեզուն[4]: Բացի այդ, այն

[1] Վատիկանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1960թ.: *Բառում Վ.,* նշվ. աշխ., էջ 163:
[2] Տե՛ս Турция отказала Римско-католической церкви на своей территории в юридическом статусе, http://drevo-info.ru/news/10044.html
[3] Treaty of Peace with Turkey Signed at Lausanne, July 24, 1923, article 40, http://www.hri.org/docs/lausanne/part1.html
[4] Նույն տեղում:

քաղաքներում և շրջաններում, որտեղ բնակչության զգալի մաս են կազմում ճանաչված կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները, թուրքական կառավարությունը պարտավորվում է ապահովել տարրական դպրոցներում նրանց մայրենի լեզուներով հանրակրթության իրականացումը[1]: Այսինքն՝ այդ կրոնական փոքրամասնությունների համար գործում են առանձին պետական տարրական հանրակրթական դպրոցներ: Կրոնական փոքրամասնության կարգավիճակ չունեցող ոչ մուսուլմանական համայնքները չունեն նման արտոնություններ:

3. *Կրոնական արարողությունների և հոգևոր կրթության խնդիրը:* Ճանաչված համայնքներն իրավունք ունեն իրենց պատկանող հոգևոր-կրոնական և այլ կառույցներում ազատ լինել իրենց կրոնի հարցերում[2]: Այսինքն՝ նրանց համար իրավականորեն երաշխավորված է հոգևոր կրթություն ստանալու և մատուցելու, կրոնական ծիսակատարություններ իրականացնելու ազատությունը, ինչը երաշխավորված չէ իրավական կարգավիճակ չունեցող համայնքների պարագայում:
4. *Պետությունից ֆինանսական միջոցներ ստանալու իրավունքը:* Կրոնական փոքրամասնության կարգավիճակը տեսականորեն ենթադրում է համաչափության սկզբունքով պետական ֆինանսավորում ստանալու իրավունք: Ըստ Լոզանի պայմանագրի 41-րդ հոդվածի՝ այն քաղաքներում և շրջաններում, որտեղ կրոնական փոքրամասնու-

[1] Նույն տեղում, article 41.
[2] Նույն տեղում, article 40.

թյունները կազմում են բնակչության նշանակալի մասը, նրանք պետք է ստանան արդարացի չափաբաժին պետական, մունիցիպալ և այլ բյուջեներով կրթական, կրոնական և բարեգործական նպատակների համար հատկացվող հանրային միջոցներից[1]։ Իրավական գրանցում չունեցող համայնքները զուրկ են նման արտոնությունից։

5. *Գույքի պաշտպանությունը պետության կողմից։* Եթե կրոնական փոքրամասնության կարգավիճակ ունեցող համայնքների պարագայում Թուրքիան պարտավորվում է երաշխավորել նրանց եկեղեցիների, պաշտամունքային վայրերի, սինագոգների, գերեզմանների լիակատար պաշտպանությունը[2], ապա չճանաչված համայնքների գույքի պարագայում այն ազատված է այդ պարտավորությունից։

Այն, որ թուրքական պետությունը խուսափում է Հայ Ավետարանական եկեղեցուն այլ բողոքական և, ընդհանրապես, քրիստոնեական եկեղեցիների հետ միասին կրոնական փոքրամասնության կարգավիճակ տալուց, կարելի է բացատրել հետևյալ գործոնով. Թուրքիայի իշխանությունները խուսափում են երկրի կրոնադավանական խճանկարն ընդլայնելուց՝ գոնե դեյուրե մակարդակով։

Այնուամենայնիվ, կարծում ենք՝ Հայ Ավետարանական եկեղեցու, ինչպես նաև բողոքական ուղղության այլ եկեղեցիների և ընդհանրապես չճանաչված քրիստոնեական եկեղեցիների իրավական գրանցումը ժամանակի խնդիր է։ Այդ հարցը միշտ

[1] Նույն տեղում, article 41.
[2] Նույն տեղում, article 42.

էլ եղել և մնում է օրակարգային։ Քրիստոնեական եկեղեցիների շարունակական պայքարի, ինչպես նաև միջազգային ճնշման արդյունքում վաղ թե ուշ Թուրքիան տեղի կտա և իրավականորեն կճանաչի դեռևս չճանաչված համայնքները, այդ թվում նաև Հայ Ավետարանական եկեղեցին։

Թուրքիայի հայ ավետարանական համայնքը՝ որպես գործոն

Հայ ավետարանականների համայնքային կյանքը Թուրքիայում ներկայում աչքի է ընկնում համեմատական ակտիվությամբ։ Կանոնավոր գործում են Կ.Պոլսի երկու Հայ Ավետարանական եկեղեցիները, ինչպես նաև կիրակնօրյա դպրոցը։

Սակայն Թուրքիայի հայ ավետարանականների գործունեությունը նշանավորվում է մեկ այլ՝ ազգային տեսանկյունից։ Չնայած հայ ավետարանականները կրոնական առումով Թուրքիայի բողոքականության մի մասն են, նրանց գործունեությունը զգալի չափով ուղղված է ազգային հիմնախնդիրների լուծմանը։ Այս ասպարեզում կա գործունեության երկու հիմնական ուղղություն՝ քաղաքական և ազգային-քաղաքակրթական։ Այս երկու ուղղություններով էլ հայ ավետարանական համայնքի գործունեությունը վերջինիս վերածում է քաղաքական և ազգային-քաղաքակրթական գործոնի։

- *Քաղաքական առումով* Թուրքիայի հայ ավետարանականների գործունեությունը նշանավորվում է Հայոց ցեղասպանության և Հայ դատի հիմնախնդիրների արծարծմամբ։ Ավետարանական հայերը Թուրքիայի Հայության այն շերտն են, որն աչքի է ընկնում առավել նախանձախնդրությամբ ազգային հիմնախնդիրների հարցում (վառ

օրինակն է Կ.Պոլսի Գեդիքփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հոգևոր հովիվ, վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուն)[1]:

- *Ազգային-քաղաքակրթական* առումով հայ ավետարանականների գործունեությունը հիմնականում հանգում է հայապահպանությանը և հայադարձությանը: Այդ կերպ է իմաստավորվում նրանց հոգևոր-եկեղեցական գործունեությունը: Այն հետապնդում է հավատի միջոցով մի կողմից՝ Թուրքիայի հայության ուծացման կանխման (հայապահպանության), մյուս կողմից՝ ուծացած (բռնի իսլամացված) հայության՝ ազգային արմատներին վերադարձի (հայադարձության) նպատակ: Սա այն դեպքն է, երբ կրոնական գործունեությունը ծառայում է ազգայինին, այսինքն՝ հոգևոր քարոզչությունը հանգեցնում է մարդկանց ոչ միայն կրոնական, այլև ազգային ինքնագիտակցության վերելքին:

Հայ ավետարանականների սույն գործունեությունը նորություն չէ: Այն ունի ոչ թե տասնամյակների, այլ հարյուրամյակների պատմություն և նրանց կարևորագույն ներդրումներից է հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Այս առնչությամբ վերապատվելի Պարգև Դարաքջյանը նկատում է, որ հայ ավետարանիչներն *«իրենց գործունէութեամբ ո՛չ միայն Աւետարանի փրկութեան պատգամը հաղորդեցին հեռու թէ մօտ գտնուող մեր ազգակիցներուն, հապա իրենց աշխարհաբար մաքուր հայերէնով սատարեցին հայ ազգապահպանումին»*[2]: Ուշագրավ

[1] Տե՛ս Three Armenian Evangelicals from Turkey Defending the Armenian Genocide! http://www.chanitz.org/2009/04/three-armenian-evangelicals-from-turkey.html
[2] *Տարագճեան Պ.Ն.,* Հայ Աւետարանական դիմագիծ, http://www.chanitz.org/2009/12/blog-post_2262.html

է նաև դեռևս 19-րդ դարում Ռաֆֆու դիտարկումը. *«Այժմ Դերսիմի մեջ բողոքականները մտնելով, սկսել են քրդացած հայերին Մեսրոպի տառերով Ավետարան կարդացնել, սկսել են մոռացված մայրենի լեզուն սովորացնել նրանց։ Ի՞նչ ասենք այդ քարոզիչներին. ասե՞նք, թե դուք գնացեք հեթանոսներին քարոզեցեք, դուք հայերի հետ գործ չունե՞ք»*[1]։

Ներկայում, չնայած աննպաստ պայմաններին, հայ ավետարանականները շարունակում են իրենց գործունեությունն այս ուղղությամբ։ Այս առումով հատկանշական է վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուի դիտարկումը. *«...հայութեան այդ հսկայ զանգուածը, որ այսօր իսլամացած է եւ որպէս հետեւանք՝ թրքացած, միայն հաւատքի զօրութեամբ կարելի է վերադարձնել իր արմատներուն, իր ազգութեան։ Միայն քրիստոնէական հաւատքն է, որ կրնայ զանոնք փրկել եւ անոնց մէջ արթնցնել ազգային պատկանելիութեան գիտակցութիւնը»*[2]։ Պատահական չէ, որ հայ ավետարանականները Թուրքիայում լայն գործունեություն են ծավալում ուծացման տարբեր մակարդակներում գտնվող հայության շրջանում՝ նախկինում հայկական, ներկայում՝ թրքախոս, քրդախոս, արաբախոս (բռնի իսլամացման հետևանքով) բնակավայրերում։ Ներկայում այդ զանգվածի շրջանում ավետարանականների հոգևոր քարոզչությունը նպաստում է նաև նրանց ազգային արմատների վերաբացահայտմանը և վերարժևորմանը, այսինքն՝ տեղի է ունենում քրիստոնեական հավատի (թեկուզ՝ ավետարանական դավանանքի) միջոցով

[1] *Ռաֆֆի,* Հայերը Քաբուլի մեջ, Երկերի ժողովածու, հ. 11, Եր., 1991, էջ 320։

[2] Մայրի՛կ, մենք հա՞յ ենք (հարցազրույց Պոլսի Կետիկփաշա թաղամասի Հայ Աւետարանական եկեղեցու հովիւ, վերապատուելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ), Ազդակ, Բուրջ Համմուդ, 09.06.2009։

կորսված ազգային ինքնության վերականգնում։ Այս առնչությամբ վերապատվելի Աղաբալօղլուն վկայում է. *«...մենք գաւառներուն մէջ աշխատանք կը տանինք, հաւատքի և կրօնին զօրութեամբ մեր արմատներուն, մեր պատմութեան հետ առնչակից դարձնել բոլոր այն հայերը, որոնք այսօր, կամքէ անկախ պատճառներով, հեռացած են մեզմէ»*[1]։ Այսպիսով, կարելի է անգամ ասել, որ հոգևոր-եկեղեցական գործունեությունը Թուրքիայի հայ ավետարանականության համար միջոց է ազգային-քաղաքակրթական, այն է՝ Թուրքիայում հայկական քաղաքակրթության պահպանման և վերականգնման խնդրի լուծման համար։

[1] Նույն տեղում։

Աղբյուրներ և գրականություն

1. *Աղբալեան Ն.,* Մտածումներ ազգի եւ դաւանանքի մասին, Հանրապետական, Եր., 2005, թիվ 9, էջ 8-14։
2. Այսօր կվերաբացվի Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին http://www.tert.am/am/news/2011/10/22/armenianchurch/
3. *Ատանալեան Կ.Պ.,* Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952։
4. Արամ Ա կաթողիկոս.- «Մենք հատուցում ենք պահանջում ցեղասպան Թուրքիայից», Ալիք, Թեհրան, 01.11.2009։
5. *Բայբուրդյան Վ.,* Օսմանյան կայսրության պատմություն, Եր., 2011։
6. *Բառում Վ.,* Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Եր., 2010։
7. *Թութիկյան Վ.,* Հայ Ավետարանական Եկեղեցի (1846-1996), Դետրոյթ, 1996։
8. *Լևոնյան Ռ.Ն., Ղազարյան Ա.,* Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Եր., 1999։
9. *Խաչիկյան Տ.,* Բողոքական հայերը Թուրքիայում, Կրոն և հասարակություն, Երևան, 2010, փետրվար, թիվ 10, էջ 76-88։
10. *Խաչիկյան Տ.,* Միսիոներությունը Թուրքիայում, Կրոն և հասարակություն, Երևան, 2009, դեկտեմբեր, թիվ 9, էջ 35-44։
11. Հայ սփյուռք հանրագիտարան, Եր., 2003։
12. Հայաստանցիները Թուրքիայում http://old.hetq.am/arm/society/7339/
13. Հայաստանցիները Թուրքիայում http://old.hetq.am/arm/society/7356/
14. *Հովհաննիսյան Հ.,* Հայ Առաքելական Եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901-1906թթ. (կրոնագիտության վերլուծություն), Եր., 2008։
15. *Հովյան Վ.,* Բողոքական հայերը՝ տարադավան հայության շերտ, Գլոբուս. Ազգային անվտանգություն, Երևան, 2010, թիվ 1, էջ 15-20։։
16. *Հովյան Վ.,* Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները, 21-րդ ԴԱՐ, Երևան, 2012, թիվ 4, էջ 91-112։
17. *Ղանալանյան Տ.,* Հայ բողոքականներ, 21-րդ ԴԱՐ, Երևան, 2010, թիվ 4, էջ 37-48։
18. Մայրի՛կ, մենք հա՞յ ենք (հարցազրույց Պոլսի Կետիկփաշա թաղամասի Հայ Աւետարանական եկեղեցու հովիւ, վերապատուելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ), Ազդակ, Բուրջ Համմուդ, 09.06.2009։
19. *Մարության Հ.,* Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Եր., 2006։

20. *Մելքոնյան Ռ.,* Կրոնական հալածանքների նոր ալիք Թուրքիայում (Մալաթիայի սպանդի շուրջ), Հանրապետական, Եր., 2007, թիվ 5, էջ 11-16:
21. *Սահակյան Ռ.,* Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Եր., 2005:
22. Վանի ձեռագրերի հարցը (նամակ խմբագրութեան), Հորիզոն, Թիֆլիս, 10.10.1915:
23. *Փայասյան Ստ.,* Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2005թ., թիվ 1, էջ 119-133:
24. *Փայասյան Ստ.,* Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի երկրորդ կեսին, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2006, թիվ 2, էջ 111-119:
25. *Փափազեան Վ.,* Իմ Յուշերը, հատոր առաջին, Պօսթըն, 1950:
26. *Սասունյան Հ.,* Ինչպե՞ս պետք է Սփյուռքն արձագանքի Թուրքիայի մերձեցման նախաձեռնություններին http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6508&sphrase_id=17981
27. *Տարագճեան Պ.Ն.,* Հայ Աւետարանական դիմագիծ http://www.chanitz.org/2009/12/blog-post_2262.html
28. *Տերոյան Վ.,* Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Եր., 2008:
29. *Հաֆֆի,* Ի՞նչ վերանորոգություններ պետք են տաճկական Հայաստանին, Երկերի ժողովածու, հ. 11, Եր., 1991:
30. *Հաֆֆի,* Հայերը Քաբուլի մեջ, Երկերի ժողովածու, հ. 11, Եր., 1991:
31. *Օհրինգ Օ., Ջեյհան Գ.,* Թուրքիայում կրոնական ազատությունների մասին հետազոտություն http://www.religions.am/index.php?option=com_content&view=article&id=1288:Թուրքիայում-կրոնական-ազատությունների-մասին-հետազոտություն&catid=187:analitika&Itemid=856
32. *Акопян А.,* О чем молчит Адана, Ноев Ковчег, Москва, № 01, Январь, 2010.
33. Болгарской церковной общине в Стамбуле будут возвращены ранее конфискованные объекты недвижимого имущества http://drevo-info.ru/news/11553.html
34. В Стамбуле в Страстную субботу мусульмане избили протестантского пастора, требуя, чтобы он перешел в ислам http://drevo-info.ru/news/12738.html

35. В Турции разрешат раз в год совершать богослужения в христианских храмах-музеях http://www.sedmitza.ru/news/855310.html
36. В Турции реализации закона о возвращении немусульманским религиозным общинам конфискованного имущества мешают бюрократические препоны http://drevo-info.ru/news/11648.html
37. Десятки тысяч турок поклонились св. Георгию на острове Принкипо http://drevo-info.ru/news/12819.html
38. Открытие Халкинской богословской школы зависит от встречных шагов со стороны Греции, заявил турецкий министр http://drevo-info.ru/news/12661.html
39. Турецкие власти вернули Константинопольской Патриархии здание школы в Галате http://drevo-info.ru/news/12343.html
40. Турецкие власти начинают возвращать конфискованную недвижимость Константинопольского Патриархата http://drevo-info.ru/news/12646.html
41. Турецкие власти пообещали отреставрировать все армянские церкви на озере Ван http://www.sedmitza.ru/news/990288.html
42. Турция вернет христианам и иудеям конфискованную собственность http://drevo-info.ru/news/11330.html
43. Турция отказала Римско-католической церкви на своей территории в юридическом статусе http://drevo-info.ru/news/10044.html
44. Угроза безопасности христиан в Турции продолжает расти http://baznica.info/article/ugroza-bezopasnosti-khristian-v-turtsii-pr
45. Христианство в Турции http://ru.wikipedia.org/wiki/Христианство_в_Турции
46. AMAA Directory 2012: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf
47. *Bayzan A.R.,* Protestant Missionary Operations on Turkey http://www.stradigma.com/english/april2003/articles_11.html
48. *Chakmakjian H.A.,* The Armenian Evangelical Church and The Armenian People http://www.cacc-sf.org/c-aecHAC.html
49. *Darakjian B.N.,* Armenian Evangelical Identity: Historical and Theological Perspectives http://www.cacc-sf.org/c-aeidentityBND.html
50. *Darakjian B.,* Evangelism in the Early Armenian Evangelical Church http://www.cacc-sf.org/c-eeaBND.html
51. *Hofmann T.,* Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic, Bruxelles, 2002.

52. *H. Res.* Resolution 306 Urging the Republic of Turkey to Safeguard its Christian Heritage and to Return Confiscated Church Properties, June 15, 2011. http://www.atour.com/government/pdf/20110615-USCongress-BILLS-112hres306ih.pdf
53. Hrant Dink murder suspect caught http://news.bbc.co.uk/2/hi/europe/6283477.stm
54. *Kutvirt Th.,* "The Establishment of an American Protestant Mission to the Armenians (1810-1830)" – The Armenian Review, Boston, 1972, Vol. 25, No 3 (99), pp. 34-49.
55. Three Armenian Evangelicals from Turkey Defending the Armenian Genocide! http://www.chanitz.org/2009/04/three-armenian-evangelicals-from-turkey.html
56. Treaty of Peace with Turkey Signed at Lausanne, July 24, 1923, articles 40, 41, 42 http://www.hri.org/docs/lausanne/part1.html

Հավելված

Աղյուսակ 1

Թուրքիայի հայ ավետարանական համայնքի ներուժի գնահատման չափորոշիչները և ենթաչափորոշիչները

	Չափորոշիչներ	
	Մարդկային	Կազմակերպչական
Ենթաչափորո-շիչներ	• Քանակ • Սփռվածություն	• Քանակ • Բազմազանություն • Սփռվածություն • Գործունեության նշանակալիություն

Աղյուսակ 2

Թուրքիայի հայ ավետարանական համայնքի ներուժի գնահատման չափանիշները

Նշանակ	Մարդկային չափորոշիչ		Կազմակերպչական չափորոշիչ			
	Քանակ	Սփռվածություն	Քանակ	Բազմազանություն	Սփռվածություն	Նշանակա-լիություն
Մեծ	>2000	>2	>10	>2	>2	Համայն-քային նշանա-կությունից բարձր
Միջին	1000-2000	2	5-10	2	2	---
Փոքր	<1000	1	<5	1	1	Զուտ համայն-քային նշանա-կության

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով սույն աշխատանքը՝ հարկ ենք համարում հանդես գալ գրքում արծարծված մի շարք խնդիրների առնչությամբ եզրակացություններով և գործնական առաջարկություններով։ Արձանագրենք, որ այսօր Թուրքիայի հայ ավետարանական և կաթողիկե համայնքների գլխավոր խնդիրը դրանց փրկությունն է և ուժեղացումը։

Արդեն նշվել է, որ ներկայում Թուրքիայի հայ ավետարանական և կաթողիկե համայնքներում տեղի են ունենում ինչպես բացասական՝ համայնքը քայքայող, հյուծող և սպառող, այնպես էլ դրական՝ համայնքի կենսունակությունն ամրապնդող գործընթացներ։ Առաջարկությունների էությունը հանգում է նկատվող դրական միտումներին նպաստելուն և դրանցից առավելագույն օգուտներ քաղելուն՝ միևնույն ժամանակ նվազագույնի հասցնելով բացասական միտումների հետևանքները։ Այս հիմնախնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունները բաժանվել են հետևյալ թեմատիկ խմբերի.

1. Հայ ավետարանական համայնքի՝ որպես քաղաքական և ազգային-քաղաքակրթական գործոնի, ուժեղացում

- Անհրաժեշտ է խթանել և նպաստել իսլամացված հայերի սերունդների շրջանում կրոնական քարոզչությունը, որը կարող է հանգեցնել նրանց վերաքրիստոնեացմանը: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի համագործակցությունը միսիոներների հետ և նրանց աջակցությունը: Իսլամացված հայերի շրջանում ավետարանական քարոզչության ծավալման արդյունքում նրանց վերաքրիստոնեացումը կհանգեցնի ժամանակակից Թուրքիայում հայ ավետարանականների թվաքանակի կայուն աճին:
- Իսլամացված հայերի սերունդների շրջանում ավետարանական, այսինքն՝ կրոնական քարոզչությունն անհրաժեշտաբար պետք է զուգորդվի ազգային արմատների վերականգնմանը (ազգային հիշողության զարթոնքին) և վերարժևորմանը նպատակաուղղված ջանքերի՝ քարոզչության հետ: Այս դեպքում իսլամացված հայերի մեջ տեղի կունենա բռնի իսլամացման հետևանքով խաթարված կամ աղճատված ազգային ինքնության վերականգնում:
- Օգտվելով արտասահմանյան բողոքական կառույցների հովանավորությունից՝ պետք է շարունակել և էլ ավելի մեծ թափ հաղորդել ազգային խնդիրների արծարծմանը Թուրքիայում, իսկ դրանց արծարծումը կարևոր նշանակություն ունի ողջ հայ համայնքի համար՝ թեկուզ միայն ազգային հիշողության և այդ կերպ՝ ազգային ինքնագիտակցության պահպանման համար, որը կարևորագույն հիմք է հայա-

պահպանության տեսանկյունից, քանի որ «...Էթնիկ ընդհանրության կամ ազգի անդամների միջև կիսվող հիշողությունը հանդես է գալիս իբրև դրանց անդամներին կապող, նրանց հարաբերություններն ու գործողությունները կառուցող միջոց»[1]:

2. Միջեկեղեցական համագործակցության հեռանկարները

- Ակնհայտ է, որ Թուրքիայի հայ ավետարանական և կաթողիկե համայնքները, լինելով փոքրաթիվ և ունենալով սահմանափակ ռեսուրսներ, միայնակ չեն կարող պայքարել իրենց առջև ծառացած խնդիրները լուծելու համար: Հետևաբար, համայնքների կենսունակությունը շատ բանեռով պայմանավորված է միջդավանական համագործակցությամբ, որն էլ պետք է խրախուսել: Մանավանդ այն պարագայում, որ Թուրքիայի պես երկրում մեծ հաշվով նույնն են տարբեր քրիստոնեական համայնքների առջև ծառացած խնդիրները, ինչը ենթադրում է, որ կա համագործակցության բավական լայն դաշտ:
- Տարբեր քրիստոնեական համայնքները, բնականաբար, նույնպես բազմաշերտ ու բազմաբովանդակ հասկացություն են: Ուստի, անհրաժեշտ է հստակություն մտցնել այդ շերտերի մեջ՝ առանձնացնելով այն հիմքերը, որոնք նպաստավոր են այս կամ այն շերտի հետ համագործակցության համար: Որպես այդպիսի հիմքեր կարելի է առանձնացնել, մասնավորապես, երկուսը՝ ազգայինը և կրոնականը:

[1] *Մարության Հ.,* Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Եր., 2006, էջ 9:

- *Ազգային* հիմքով համագործակցությունը ենթադրում է աշխատանք Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների հետ: Բազմիցս նշվել ու առաջ է քաշվել այն թեզը, որ հայ առաքելականները, կաթողիկեները և ավետարանականները մեկ միասնական հավաքականության՝ հայության անբաժանելի դավանանքային շերտերն են[1]: Ունենալով ընդհանուր խնդիրներ ու մարտահրավերներ՝ այս երեք դավանանքային շերտերը Թուրքիայում կարող են համագործակցել լեզվական, կրթական, մշակութային, սոցիալական և այլ խնդիրների շուրջ:
- *Կրոնական* հիմքով համագործակցության հարցում կարող է լինել երկու մակարդակ՝ նեղ և լայն:

Նեղ մակարդակով համագործակցությունը ենթադրում է Թուրքիայի հայ ավետարանականների և կաթոլիկների համագործակցությունն այդ երկրում համապատասխանաբար բողոքական և կաթոլիկ ուղղությունների եկեղեցիների հետ: Այդպիսի համագործակցությունը մեծ նշանակություն ունի ընդհանուր խնդիրների լուծման համար համատեղ ջանքեր գործադրելու, միմյանց փոխօգնության և այլ նկատառումներով: Թուրքիայի հայ համայնքի համար, մասնավորապես, ազգային հարցերի արծարծման և լուծման գործում օգտակար կարող է լինել նաև այդ երկրի մյուս բողոքական և կաթոլիկ կառույցների կամ համայնքների հետ համատեղ աշխատանքը՝ նրանց ներգրավումն այդ խնդիրների լուծմանը:

[1] Տե՛ս, օրինակ, *Աղբալեան Ն.,* Մտածումներ ազգի եւ դաւանանքի մասին, Հանրապետական, Եր., 2005, թիվ 9, էջ 8-14:

Լայն մակարդակով համագործակցությունը ենթադրում է փոխհարաբերությունների ու շփումների ավելի լայն ձևաչափ՝ փոխգործակցություն Թուրքիայի բոլոր քրիստոնեական համայնքների հետ։ Այստեղ կարևոր նշանակություն ունի Հայ Ավետարանական և Կաթողիկե եկեղեցիների համագործակցությունը Թուրքիայի չճանաչված այլ քրիստոնեական համայնքների՝ քրիստոնյա արաբների, ասորիների, Հռոմի Կաթողիկե եկեղեցու և այլնի հետ։ Այստեղ նույնպես կա համագործակցության լայն դաշտ, քանի որ տարբեր քրիստոնեական համայնքները, իրենց յուրահատկություններն ունենալով հանդերձ, բախվում են նույն խնդիրներին։

Միջեկեղեցական համագործակցության լայն դաշտ են ապահովում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են.

1. *Կրոնական համայնքների գրանցումը։* Թուրքիայում գրանցման խնդիր ունեն Հայ Ավետարանական եկեղեցին, Հռոմի Կաթողիկե եկեղեցին, Հայ Կաթողիկե եկեղեցին և այլ քրիստոնեական եկեղեցիներ։ Նրանցից յուրաքանչյուրի մեկուսի պայքարն իրավական կարգավիճակ ստանալու համար մեծ հաշվով չի կարող տալ ցանկալի արդյունք, և պատահական չէ, որ մինչ օրս այդ պայքարը եղել է ապարդյուն։ Վկան՝ Վատիկանի ապարդյուն ջանքերը Հռոմի Կաթողիկե եկեղեցու գրանցման համար։ Մինչդեռ միասնական պայքարը, եթե անգամ չտա ցանկալի վերջնարդյունք, ապա նվազագույնը կարող է այդ պայքարին հաղորդել առավել մեծ հնչեղություն, որն իր վրա կհրավիրի ինչպես լայն հասարակայնության, այնպես էլ միջազգային հանրության ուշադրությունը։

2. *Եկեղեցական գույքի վերադարձը:* Այս խնդիրը նույնպես էական նշանակություն ունի բոլոր համայնքների համար: Պայքարի արդյունավետության եկեղեցական գույքի վերադարձման հարցում նույնպես կարելի է հասնել միասնական ջանքերի շնորհիվ, որում յուրաքանչյուր եկեղեցի ընդհանուր շահերի պաշտպանության մեջ կարող է տեսնել և զգալ իր մասնավոր շահերը:

Վերոհիշյալ, ինչպես նաև այլ խնդիրների լուծման նպատակով նեղ և լայն մակարդակով համագործակցությունը կարող է դրսևորվել հետևյալ հարցերում.

1. *Պայքար կրոնական համայնքներից խլված գույքը վերադարձնելու մասին օրենքում հայտերի ընդունման սահմանված մեկամյա ժամկետը երկարաձգելու համար:* Առանց այս խնդրի լուծման կրոնական համայնքները չեն կարող շարունակել պայքարն իրենց կորցրած գույքը հետ ստանալու համար:
2. *Պահանջների (հայտեր և այլն) կազմում և ներկայացում:* Պետության համար շատ ավելի հեշտ է գործ ունենալ առանձին քրիստոնեական համայնքների, քան նրանց միավորման հետ: Առանձին համայնքների պահանջների չեզոքացումը կամ դրանց բավարարումը նվազագույն մակարդակով իրականացնելը պետության համար շատ ավելի հեշտ է, քանի որ առանձին-առանձին յուրաքանչյուր համայնք, չունենալով բավականաչափ ռեսուրսներ, ավելի խոցելի է պետության կամայականությունների և ոտնձգությունների համար: Մինչդեռ պահանջների համատեղ կազ-

մումը և միասնաբար ներկայացումը կբարձրացնի ընդհանուր ներուժը՝ ավելի սահմանափակելով պետության կամայականությունների և ոտնձգությունների հնարավորությունը: Եթե հնարավոր էլ չէ միասնական պահանջների կազմումը և ներկայացումը, ապա քրիստոնեական համայնքները կարող են նվազագույնը համատեղ ջանքեր գործադրել առանձին համայնքների պահանջները պատշաճ կերպով կազմելու և ներկայացնելու գործում՝ փոխօգնության միջոցով:

3. *Իրավական և տեղեկատվական փոխօգնություն:* Թուրքիայի բարդ իրավական համակարգին ամբողջությամբ չտիրապետելով՝ առանձին համայնքները չեն կարող լիարժեք պաշտպանել իրենց շահերը: Բացի այդ, սեփական իրավունքների և շահերի պաշտպանությունը կապված է մեծ քանակությամբ տեղեկատվության հետ, որին նույնպես առանձին համայնքները կարող են ամբողջությամբ չտիրապետել: Հետևաբար, իրավական և տեղեկատվական փոխօգնությունը (իրավական խորհրդակցություններ, տեղեկատվության փոխանակում և այլն) նույնպես կարևոր նշանակություն ունի համայնքների կողմից իրենց շահերի պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից:

4. *Հաշվարկների կատարում:* Հայտնի է, որ, մասնավորապես, եկեղեցական գույքի վերադարձման խնդիրը, հատկապես դրա համար հայտերի կազմումը և ներկայացումը, կապված են բազմաթիվ և բազմազան (երբեմն՝ բարդ) հաշվարկների հետ: Այս հարցում տարբեր եկեղեցիները նույնպես կարող են փոխադարձաբար օգնել միմյանց:

Միջեկեղեցական համագործակցության դրսևորման ձևեր կարող են լինել համատեղ դիմումները (Թուրքիայի իշխանություններին, միջազգային կազմակերպություններին և այլն), համատեղ հայտարարությունները, միասնական դիրքորոշման արտահայտումը տարբեր խնդիրների վերաբերյալ, համատեղ միջոցառումների կազմակերպումը, մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների մասնակցությունը և այլն։

Կարծում ենք՝ ընդհանուր խնդիրների (իրավական գրանցում, եկեղեցական գույքի վերադարձ և այլն) լուծման նպատակով համատեղ ջանքեր գործադրելու, ինչպես նաև այդ համատեղ ջանքերի արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է միջեկեղեցական աշխատանքային խմբերի ձևավորումը, որոնց գործունեությունը կկենտրոնանա կոնկրետ խնդիրների իրականացման վրա։

Համագործակցության մեկ այլ ինստիտուցիոնալ մեխանիզմ կարող է լինել Թուրքիայի չճանաչված քրիստոնեական եկեղեցիների միության կամ նրանց գործունեությունը համակարգող խորհրդի ստեղծումը՝ իր կանոնադրությամբ, ղեկավար մարմնով և այլն։ Այս կառույցի ստեղծումն ինստիտուցիոնալ բնույթ կհաղորդի չճանաչված եկեղեցիների համատեղ պայքարին՝ վերածվելով յուրահատուկ եկեղեցական շարժման։

3. Արտաքին աջակցություն

- Ակնհայտ է նաև, որ Թուրքիայի հայ ավետարանական և կաթողիկե համայնքների համար, բացի միջդավանական համագործակցությունից, կարևոր նշանակություն ունի նաև արտաքին աջակցությունն ինչպես հայ, այնպես էլ

միջազգային ավետարանական և կաթոլիկ կազմակերպությունների կողմից։

- Թուրքիայի հայ ավետարանական համայնքն անդամակցում է Մերձավոր Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միությանը։ Վերջինիս միջոցով այն կարող է ստանալ տարածաշրջանի հայ ավետարանական համայնքների ու կառույցների արտաքին աջակցությունը։ Իսկ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը, որն իր գործունեության մասշտաբներով հավասարազոր է համազգային կառույցի, կարող է գործուն աջակցություն ցուցաբերել Թուրքիայի հայ ավետարանական համայնքներին, ինչպես այն աջակցում է մյուս երկրների հայ ավետարանական համայնքներին։
- Միջազգային աջակցությունը ենթադրում է առաջին հերթին օժանդակություն արևմտյան՝ ամերիկյան և եվրոպական բողոքական և կաթոլիկ կառույցների ու կազմակերպությունների կողմից։

4. Աջակցություն Հայաստանից

Ակնհայտ է, որ Հայաստանը, չունենալով դիվանագիտական հարաբերություններ Թուրքիայի հետ, չի կարող պետական մակարդակով անմիջականորեն ազդեցություն գործել՝ այդ երկրում հայ ավետարանականների ու կաթոլիկների շահերի և իրավունքների պաշտպանության նպատակով։ Որոշակի աջակցություն, այնուամենայնիվ, Հայաստանից կարող է լինել միջնորդավորված ձևերով՝ օգտագործելով այդ համայնքների անդամների (ղեկավարների, նշանավոր անձանց) հետ կապերը,

նրանց այցելությունները Հայաստան, քաղաքացիական հասարակության կառույցների հնարավորությունները և այլն: Կարելի է մատնանշել, մասնավորապես, աջակցության հետևյալ ձևերը.

1. *Իրավական խորհրդատվություն:* Հայաստանի պետական մարմինները, ինչպես նաև իրավական ոլորտում (միջազգային իրավունք, մարդու իրավունքներ, փոքրամասնությունների իրավունքներ և այլն) մասնագիտացած հասարակական կազմակերպությունները կարող են իրավական խորհրդատվության միջոցով աջակցություն ցուցաբերել այդ համայնքներին իրենց օրինական շահերն ու իրավունքները պաշտպանելու գործում: Թուրքիայի օրենսդրության, ինչպես նաև միջազգային իրավունքի իմացությունը կօգնի երկու համայնքին էլ լավագույնս ճանաչել իրենց իրավունքները, դատաիրավական համակարգով (ընդհուպ մինչև միջազգային՝ եվրոպական դատարաններ) հաջողությամբ պաշտպանել իրենց, ճիշտ մարտավարություն որդեգրել դատաիրավական գործընթացներում և այլն:
2. *Ազգային ինքնագիտակցության վերելքի խթանում:* Այս ուղղությամբ գործունեության գլխավոր թիրախը քրիստոնեության վերադարձած իսլամացված հայերի սերունդներն են: Հասկանալի է, որ նրանց ազգային ինքնագիտակցության զարթոնքն առաջ է բերելու նաև ազգային ինքնության հատկանիշների (լեզվի, մշակույթի, պատմական հիշողության) յուրացման անհրաժեշտություն: Այլ կերպ ասած՝ քրիստոնեության վերադարձած իսլամացված հայերի սերունդները, վերագտնելով իրենց աղճատված ազգային ինքնությունը, կարիք կամ ցանկություն են ունենա-

լու նաև սովորելու իրենց մայրենի լեզուն, հաղորդակից լինելու իրենց ազգային մշակույթին, պատմական հիշողությանը և այլն։ Այս հարցում Հայաստանը կարող է ցուցաբերել օգնություն մեթոդաբանական աջակցության, անհրաժեշտ գրականության և նյութերի պատրաստման ու առաքման, մշակութային միջոցառումների կազմակերպման (նաև մշակութային խմբեր ուղարկելու միջոցով) և այլ ձևերով։

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ կաթողիկե և ավետարանական համայնքների առաջացումը և տարածումը Օսմանյան կայսրությունում, բացի հոգևոր-եկեղեցական խնդիր լինելուց, պայմանավորված էր նաև ոչ պակաս կարևոր քաղաքական և սոցիալական հանգամանքներով: Հոգևոր-եկեղեցական հանգամանքները կապված էին Հայ Առաքելական եկեղեցու ներսում դեռևս 17-րդ դարից սկիզբ առած բարենորոգչական շարժման հետ: Քաղաքական հանգամանքներն առնչվում էին Օսմանյան կայսրության միջազգային և ներքին դրությանը: Ինչ վերաբերում է սոցիալական հանգամանքներին, ապա դրանք կապված էին Օսմանյան կայսրության կազմում գտնվող հայության՝ իր վիճակը բարելավելու ցանկության հետ:

Ինչպիսին էլ լինեին հայ կաթողիկե և ավետարանական համայնքների առաջացման պատճառները, նրանք 20-րդ դարի սկզբում արդեն կազմում էին Օսմանյան կայսրության հայ բնակչության մի որոշակի հատված և ցրված էին հայաբնակ շրջաններում:

Չնայած իրենց դավանանքային յուրահատկությանը, հայ կաթոլիկներն ու ավետարանականները շարունակում էին մնալ հայության անբաժան մասը: Դա իր արտահայտությունը գտավ հայկական ջարդերի և ցեղասպանության տարիներին: Թուրքական իշխանությունները, կարևորությունը տալով իրենց զոհերի

ազգային, այլ ոչ թե դավանանքային ինքնությանը, հավասարապես կոտորում էին բոլորին՝ որևէ խտրականություն չդնելով հայ առաքելականի, կաթոլիկի և ավետարանականի միջև։

Հայ կաթոլիկների և ավետարանականների՝ հայության անբաժան մասը լինելու հանգամանքը շեշտված կերպով արտահայտվեց նաև նրանց մասնակցությամբ ինքնապաշտպանական կռիվներին և ընդհանրապես հայության գոյապայքարին։

Ցեղասպանությունից հետո էլ Թուրքիայում հայատյացությունը և քրիստոնյաների նկատմամբ կիրառվող հալածանքները տարածվեցին նաև հայ կաթոլիկների և ավետարանականների վրա։ Եվ ինչպես ցեղասպանության տարիներին, այնպես էլ դրանից հետո վերջիններս իրենց վրա կրեցին հայերի դեմ իրականացվող հետապնդումների ու հալածանքների քաղաքականության հետևանքները։ Դա հանգեցրեց հայ կաթողիկե և ավետարանական համայնքների թվաքանակի, ինչպես նաև նրանց կազմակերպական կառույցների շարունակական նվազմանը։

Հիմա էլ Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները, լինելով փոքրամասնություն երկակի՝ ազգային և կրոնական իմաստներով, ենթարկվում են կրկնակի ճնշումների։

Այսքանով հանդերձ, կան նաև որոշ նպաստավոր գործոններ, որոնք դրական ազդեցություն են թողնում համայնքների վրա։ Դրանցից ամենակարևորը վերջին շրջանում Թուրքիայում կրկին լայն թափ ստացած քրիստոնեական, հատկապես բողոքական միսիոներությունն է։

Արևմտյան միսիոներական կառույցների գործունեությունը Թուրքիայում տարածվում է նաև հայկական ջարդերի և ցեղասպանության ժամանակ իսլամացված հայերի սերունդների վրա՝ հանգեցնելով նրանց քրիստոնեացմանը։ Իսկ դա վերջիններիս

շրջանում զուգորդվում է ազգային արմատների բացահայտման և արժևորման գործընթացով։ Այսինքն՝ իսլամացված հայերի սերունդների մեջ քրիստոնեացումը որոշակիորեն հանգեցնում է նաև աղճատված ազգային ինքնության վերականգնմանը։

Բացի այդ, հայ կաթոլիկներն ու ավետարանականները, լինելով Թուրքիայի ընդհանուր կաթոլիկության և բողոքականության մի մասը, որոշակիորեն օգտվում են նաև արտասահմանյան միսիոներական կառույցների հովանավորությունից։

Արդի փուլում Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքների առջև ծառացած է ևս երկու կարևոր խնդիր։ Առաջինը վերաբերում է համայնքների իրավական գրանցմանը։ Թուրքիայում ներկայում կրոնական փոքրամասնության կարգավիճակ ունեն միայն Հայ Առաքելական եկեղեցին, Հույն Ուղղափառ եկեղեցին և հրեաները։ Իրավական կարգավիճակի բացակայությունը զգալիորեն սահմանափակում է հայ կաթողիկե և ավետարանական համայնքների գործունեության հնարավորությունները հոգևոր-քարոզչական, կրթական, բարեգործական և այլ ասպարեզներում։

Կարծում ենք՝ իրավական կարգավիճակ ստանալու հարցի լուծումը ժամանակի խնդիր է։ Չճանաչված քրիստոնեական եկեղեցիների պայքարի, ինչպես նաև միջազգային ճնշման արդյունքում Թուրքիան վաղ թե ուշ տեղի կտա և պաշտոնապես կճանաչի այդ համայնքները։

Մյուս կարևոր խնդիրը քրիստոնեական եկեղեցիներից խլված գույքի վերադարձն է։ Տեղի տալով միջազգային (ԱՄՆ, ԵՄ) ճնշումներին՝ Թուրքիան 2011թ. ընդունեց օրենք կրոնական փոքրամասնություններից բռնագրավված գույքը վերադարձնելու մասին։ Գործնականում, սակայն, կապված մի շարք բարդու-

թյունների հետ, կրոնական փոքրամասնություններն առայժմ ստացել են իրենց պատկանող գույքի միայն մի չնչին մասը։

Ակնհայտ է, որ Թուրքիայի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները միայնակ չեն կարող լուծել իրենց առջև ծառացած խնդիրները։ Ուստի, վերոհիշյալ և այլ խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն ունի ինչպես միջդավանական համագործակցությունը Թուրքիայի քրիստոնեական եկեղեցիների միջև, այնպես էլ արտաքին աջակցությունը։

РЕЗЮМЕ

Образование и распространение армянских католических и евангелических общин в Османской империи было обусловлено не только духовно-церковными, но и не менее важными политическими и социальными факторами. Духовно-церковные аспекты были связаны с реформаторским движением внутри Армянской Апостольской церкви, берущим начало еще в XVII веке. Политические факторы были обусловлены международным и внутренним положением Османской империи. Что касается социальных обстоятельств, то они были связаны со стремлением входящего в состав Османской империи армянства улучшить свое положение.

Какими бы ни были причины образования армянской католической и евангелической общин, в начале XX века они уже составляли определенный сегмент армянского населения Османской империи и были рассеяны по всем армянонаселенным районам.

Несмотря на свои конфессиональные особенности, армянские католики и евангелисты продолжали оставаться неотъемлемой частью армянства. Это нашло свое отражение в годы армянских погромов и Геноцида. Турецкие власти, придавая важность национальной, а не конфессиональной идентичности своих жертв, равным образом истребляли всех, не ставя разницы между армянами-адептами ААЦ, католиками или евангелистами.

И после Геноцида арменофобия и преследования христиан в Турции распространились также на армянских католиков и евангелистов. Как в годы Геноцида, так и в дальнейшем они испытывали на себе последствия проводимой в отношении армян политики преследований и гонений, что привело к перманентному сокращению численности армянских католических и евангелических общин и их организационных структур.

И сегодня армянские католические и евангелические общины Турции, представляя национальное и конфессиональное меньшинство, подвергаются двойному давлению.

Вместе с тем есть также некоторые благоприятные факторы, положительно влияющие на эти общины. Самый важный из них – в последнее время вновь получившее в Турции широкий размах христианское и, в частности, протестантское миссионерство.

Деятельность западных миссионерских структур в Турции распространяется также на поколения армян, принявших мусульманство во время армянских погромов и Геноцида: в результате они опять обращаются в христианство. Этот процесс сопровождается выявлением и переоценкой национальных корней. Т.е. христианизация поколений исламизированных армян в определенной степени приводит также к восстановлению искаженной национальной идентичности.

Кроме того, армянские католики и евангелисты, будучи частью общего католичества и протестантства Турции, определенным образом пользуются покровительством иностранных миссионерских структур.

Сегодня перед армянскими католическими и евангелическими общинами Турции стоят еще две важные задачи. Первая –

правовая регистрация общин. Сегодня в Турции статус меньшинства имеют только Армянская Апостольская церковь, Греческая Православная церковь и евреи. Отсутствие правового статуса значительно ограничивает возможности деятельности армянских католических и евангелических общин в духовно-пропагандистской, образовательной, благотворительной и других сферах.

Полагаем, урегулирование ситуации с получением правового статуса – вопрос времени. В результате борьбы непризнанных христианских церквей, а также международного давления Турция рано или поздно уступит и официально признает эти общины.

Другая важная задача – возращение отнятого у христианских церквей имущества. Уступив международному давлению (США, ЕС), Турция в 2011г. приняла закон о возвращении конфискованного у религиозных меньшинств имущества. Однако на практике, в связи с рядом сложностей, религиозные меньшинства пока что получили лишь незначительную часть своего имущества.

Очевидно, что армянская католическая и евангелическая общины Турции не могут в одиночку решить стоящие перед ними задачи. Следовательно, важную роль в решении вышеупомянутых и прочих вопросов играет межконфессиональное сотрудничество христианских церквей в Турции, равно как и внешнее содействие.

SUMMARY

Emerging and dissemination of the Armenian Catholic and Evangelical communities in the Ottoman Empire, besides being a spiritual and clerical issue, was also conditioned by no less important political and social circumstances. Spiritual and clerical circumstances were connected with the reformist movement in the Armenian Church which was initiated back in the 17th century. Political circumstances related to the international and domestic situation round the Ottoman Empire. As for the social circumstances, they were connected with the desire of the Armenians in the Ottoman Empire to improve their living.

Whatever the reasons of emerging of the Armenian Catholic and Evangelical communities were at the beginning of the twentieth century they constituted a considerable part of the Armenian population of the Ottoman Empire and were spread all over the Armenian-populated regions.

Despite their confessional peculiarities the Armenian Catholics and Evangelicals still constitute an integral part of the Armeniancy. This manifested itself in the years of the Armenian pogroms and Genocide. The Turkish authorities, taking into account ethnic and not confessional identity of their victims, equally slaughtered all the Armenians - Apostolics, Catholics and Evangelicals.

The fact that the Armenian Catholics and Evangelicals constituted an integral part of the Armeniancy also manifested itself

prominently in their participation in defensive fights and struggle of the Armeniancy for survival in general.

After the Genocide Armenophobia and repressions of the Christians extended to the Armenian Catholics and Evangelicals either. Both in the years of the Genocide and after it the latter suffered from the consequences of the policy of persecutions and repressions directed against the Armenians. This resulted in the Armenian Catholic and Evangelical population decline and reduction in number of their organizational structures.

Today Turkey's Armenian Catholic and Evangelical communities, being minorities from both ethnic and religious points of view, are under double pressure.

At the same time there are some auspicious factors which have positive impact on the communities. The most important of them is the Christian, particularly Evangelical, missionary activity which has gained a momentum recently.

The activity of the western missionary organizations in Turkey also expands to the generations of the Armenians who were Islamized during the pogroms and Genocide, thus reclaiming them to the Christianity. And this process among these Armenians is accompanied by disclosure and evaluation of their national roots. Thus, Christianization of the generations of the Islamized Armenians, to some extent, results in reclaiming of their distorted national identity,

Besides, the Armenian Catholics and Evangelicals, being a part of Turkey's Catholic and Evangelical communities, are to some extent under the patronage of foreign missionary organizations.

At current stage the Armenian Catholic and Evangelical communities in Turkey face two very important challenges. The first one

is the legal registration of the communities. Currently only Armenian Apostolic Church, Greek Orthodox Church and Jews have a status of religious minorities in Turkey. Absence of legal status considerably restrains the activity of the Armenian Catholic and Evangelical communities in educational, benevolent and other spheres.

We believe that resolution of the issue of legal status is a matter of time. Sooner or later Turkey will yield to the unrecognized Christian Churches and under international pressure it will officially recognize those communities.

Another important issue is the recovery of the property taken away from the church. In 2011 yielding to international pressure (U.S., E.U.) Turkey passed the law about recovery of the expropriated ecclesiastic property. But in practice, due to some difficulties, religious minorities has recovered only an insignificant part of their property.

It is obvious that the Armenian Catholic and Evangelical communities in Turkey cannot solve their problems by themselves. So, for the solution of all the aforementioned problems both cooperation between all the Christian churches in Turkey and the assistance from outside are needed.

Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
Վահրամ ՀՈՎՅԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Գիտական խմբագիր ՝
Ռուբեն ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հեղինակներ ՝
Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
Վահրամ ՀՈՎՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 20 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 300։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։